Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmowt'iwn i Srboyn Hakovbay Mcbnay Hayrapetin

Venetik, 1861

urn:nbn:de:hbz:5:1-10009

Visual Library

Gaussen 3088 (22)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

N: 22

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԺ—1861

ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

ԻԲ

Գաղտնի 3088

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԺ—1861

3088

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վերծանողութիւն պատմութեանն սրբոյն Յակովբայ, զոր նեմանագոյնս տացուք նոր Սինեայ սակս այնորիկ արտաքսեալի, զոր ուսուցեալ և ծանուցեալ զվարս սրբոյն Յակովբայ, նախանձ ընկալեալ յանձինս քաղաքավարեցին և մանաւորեցան բաժնի նորա, և արժանաւորեցան ընդ նմա տեսանել զՏէր։ Եւ ոմանք հակառակին յառաջին բանս, ոչ ասելով զնա յազգէն Արշակունեաց, կամ հօրաքեռորդի սրբոյն Գրիգորի, զոր մեք սերտ գտեալ և հաւանեալ 'ի գրոց Ասորւոց, և որք ուրասան կան՝ փոխարէն խրատու 'ի նորին յանձնէ առցեն. մեք զՀշմարիտն

սասացուք, անդատապարտ մնամք 'ի նմանէ. զի և Հրեայքն վասն Քրիստոսի սասցին եթէ որդի հիւսան է:

Արդ յորժամ այս հոգաբարձութիւնս հոլովեցաւ, և մանուկն Գրիգոր 'ի ձեռն դայեկացն գնացեալ փախստեայ անկանէր յերկիրն Կապպադովկիայ, և զնորին համացեալն զսուրբն Յակոբ՝ նորին դայեկին առեալ գնաց ի քաղաքն Կեսարիա: Եւ անդ մնեալ մինչև յարբունս հասեալ երկուց մանկանցն, սուրբն Գրիգոր դառնայր 'ի պալատն արքունի. անդ հատուցանէր վասն անուանն Քրիստոսի, զոր յեսթանասուն յերկու Ճառն եմք արտաՃառեալ յերկրորդ հատուածին՝ զքաղաքաւարութիւն նորա մինչև յելս յաշխարհէ առ Տէր:

Իսկ մանուկն Յակոբ անդէն կացեալ առ դայեկին բարեպաշտի մինչև յարբունս հասեալ, այնուհետև սատուածային պատուիրանացն հոգտարեալ, և հնազանդութեամբ կարի յոյժ հմտացեալ, զոր յիւր գիրսն իմանի Զգոն կոչեցեալ. զոր յաջորդն

ցուցանէ զնաեմատագոյն տառն որ 'ի բայն է : Զի մինչև 'ի կատարելութիւն հասակի հասեալ, որ ինչ ընդ հուր անցանէր՝ ոչ եմուտ 'ի բերան նորա, այլ ընդօք և պտղովք շատանայր, և շնորհօք Հոգւոյն սրբոյ, և նոյնակի աճեալ գայր 'ի հասակ լրմանն : Եւ 'ի Յունաց աշխարհին անեալ և լցեալ աստուածային իմաստիւք, և ազդմամբ սուրբ Հոգւոյն յուղի անկեալ գայր հասանէր յերկիրն Աստուծոյ՝ մօտ 'ի քաղաքն Մծբին կոչեցեալ. և անդ հռչակեալ վարք առաքինութեան՝ ընդոյր զերկիրն համբաւ ճգնութեան նորա : Եւ եկեալ յարեցաւ 'ի սուրբ այրն Մարուգէ կոչեցեալ. և նա էր տեսող և ունէր ոգի մարգարէութեան : Եւ ապա երկու եղնամոլեցն լծեալ 'ի լուծ խաչին Քրիստոսի և առ սակաւ սակաւ արօրադրեցին զազգն՝ որ մօտահասք էին և սահմանակից : Եւ հռչակեալ անուն նոցա քաջամուղ ճգնողական հանդիսին, էհաս մինչև 'ի պալատն արքային Հոռոմոց : Որ և Կոստանդիանոս հրապարակա-

խօս եղեալ ասէր 'ի լուր առակի գա-
հակալեալ գրոհիցն. Երեք սիւնք
են 'ի մէջ ընդ երկինս և ընդ երկիր.
Անտոն յԵգիպտոս, Սեղբեսարոս
առ մեզ, և սուրբն Յակովբ 'ի Ս ծբին
քաղաք յերկրին ասորեստանեայց:

Բայց զտղայական հասակին զի՞նչ
պատմագրեցից, որ անգամ զհրեշ-
տակս զարմացոյց. և մեք զսուրբս
զայս պարակցեալ (1) առգրեսցուք
ընդ մարգարէսն որ յորովայնէ ընտ-
րեցան հրամանաւ սուրբ Հոգւոյն,
և բոց հրոյ արբին: Եւ ահա զսուրբն
Յակովբ 'ի ստեղծմանէ արգանդի
մինչև ցմահ՝ նոյն օրինակի հաւա-
նիմք, և հանապազ բնակարան
սուրբ Հոգւոյն և խօսակից հրեշտա-
կաց: Եւ վկայ այն որ ասէ յաջորդն
հրեշտակն վասն տապանակի տախ-
տակին և վասն հիմնարկութեան
հաշտարար եկեղեցւոյ նորա առաջի
երևեալ, և խրատ տայր նմա զպատ-
գամն Աստուծոյ: Եւ յայտնի է որ
Տէրն պատուէր տայր Գաբրիէլի թէ
Տես՝ քո բնական կերպիւդ չերևել
արբոյ կուսին, զի մի յահէն մեռցի:

Բայց սուրբն Յակոբ կինքն էր հրեշտակին, զի հանապազ ընդ նմա շըրջէր. զի և սուրբ Թագաւորն Կոստանդիանոս ասէր, եթէ սուրբ Յակոբ, ուշիմ կացցես, զի յորմէ հետէ մտեալ ես առաջի իմ, գողայ անձն իմ 'ի քէն սարսափեալ. զի տեսանեմ երկուս հրեշտակս հրացայտ 'ի փայլեան լուսոյ, որ կան քեզ 'ի սպասու, մինն ընդ աջմէ և միւսն ընդ ահեկէ: Եւ նա զինչ ասաց բարեպաշտ Թագաւորին. Եւ գու իսկ պատրաստ լեր անձին քում. զի յորմէ հետէ մտեալ եմ 'ի պալատս քո, տեսանեմ ահագին զարմանք 'ի ճաճանչ լուսոյ այր արեգնափայլ զգեցեալ պճղնաւոր. և կերպ նորա բերէ զնմանութիւն քահանայութեան. առեալ 'ի հրացայտ ձեռն զԹագ քո, դնէ առաւօտէ առաւօտ 'ի գլուխ քո: Ահա ճշմարտութիւն պատմութեան հանապազ տեսլեան հրեշտակին ճշմարտեցաւ, և հաւատացաւ բան երդոյս. և մեք 'ի պատմութիւս ընԹացուք, և ամենեքեան հոգեպէս տեսեալ:

Ո՞վ բովանդակեսցէ զխստամբեռ-
ռութիւն առն Աստուծոյ պատմել.
զի յորժամ՝ ի կատարեալ հասանէն
ամբարեցաւ՝ մարմին գոլով անմար-
մին վարկանի. տեսիլ երեսաց նորա
որպէս հրեշտակի պայծառ և շնոր-
հալի և ցամաքեալ։ Վասն զի ուխտ
եդեալ էր ծնողացն որպէս Սամուէ-
լին և զայլ ուխտականացն՝ պահել
անտայթաք. և նա ոչ առ յանձն ձա-
շակել ինչ որ ընդ հուր անցանէր.
եւ՝ ի վերայ գրաստու ոչ նստել, այլ
բոկոտն ընդ պողոտայ կենցաղոյս ան-
ցանէր։ Եւ վասն կերակրոյ ոչ էր
նմա փոյթ, այլ խոտաբուսա և պըտ-
ղոք շատանայր. և զայն ոչ լիապէս,
այլ կարօտութեամբ։ Եւ վասն հան-
դերձից միայն այծէս, և հեր դլխոյ
նորա թաղկեալ կային. քանզի ո-
մանց անծանօթից որպէս՝ ի խելաց
փոխարկեալ երևէր։ Եւ որպէս ան-
հատ է շող յարեգակնէ, այնպէս
անյագ սաղմոսէր զաւր և զգիշեր.
և միտք նորա դեգերեալ կային հա-
նապազ ընդ բանակս սերովբէիցն և
ակն մտացն անթօթափելի՝ ի դի-

մացն Քրիստոսի. և այնչափ անհա-
տական էին խորհուրդք նորա յԱ-
տուծոյ, որ և քանակք դիւացն պա-
շարեալ կային 'ի նմանէ։ Եւ որչափ
ժամանակ նորա էր՝ տուաւ ոգի մար-
գարէութեան նմա, և վկայօրէն լի-
ցի վարք նորա։ Որ 'ի ժամանակս
Ամերայնոյ գերազանցեալ քան զա-
մենայն սրբովք՝ 'ի կատարս լերանց
էր բնակութիւն նորա, և 'ի ծերպս
նեղագոյն վիմաց. և ուխտ եդեալ էր
նորա վասն ձորոյն Եօթն չարեաց 2
յաւուր սառնամանեացն՝ որ ան-
յարիկ անցուցանէր։

Եւ ապա տեսեալ Աստուծոյ զա-
հագին Ճգնութեան և զանխնայութեան
սուրբ մարմնոյն և զչարչարանսն, որ
հանապազամեռ մարմնով լինէր,
ամպ հովանի առնէր նմա մինչև 'ի
գալ հարաւային օդոյն։ Եւ յայտ
անտի երևի որ անթօթափելի կային
միտք աչաց նորա յողորմութէն Ա-
տուծոյ. բայց 'ի կարգ աղօթից նորա
այսպէս ասէր. Մի Աստուած, ա-
մենալոյս, ամենակալ, մի իշխանու-
թիւն. քանզի զարմանք զարմանա-

լեաց է, զի զամենայն զգոյս յոչնչէ բաղկացուցեր. միթէ գոյ այլ Աստուած բայց՝ի քէն, կամ անսկիզբն կամ սկսեալ, կամ հզօր, կամ փրկիչ, կամ ազատարար կամ քաւիչ, կամ բժշկասէտ կամ անոխակալ, կամ բարի կամ խնամածու, ոչ միայն մեղաւորաց, այլ և ամենայն գոյոյ. կամ ցաւակից, որ և մեռար վասն մեղաւորաց. և կամ անկարօտ, և բաժակի միոյ ջրոյ կարօտեալ՝ի վերայ խաչին, և ոչ ոք մատոյց. և փոխանակ այնմ պապքելոյն՝ որ դու Ովկիանոս ծովուն արարող ես, լեղի և քացախ մատուցին: Զի դու անհաս, և ծառայն փանաքի ապտակեաց. դու անմտանելի արեգակն, և ձորձ արկին զանարատ դրախտիդ. դու յառաջ քան զբաղկանալ արարածոցս Ճանաչես զբանակս առաքելոցն, և խաչահանուն՝քն ասէին. Մարգարէաց Յիսուս ո՞վ է որ եհարն զքեզ: Դու արձակեցեր զկապեալսն յանիծից, և ոչք քո զոր ծով ոչ կարացին թանալ կամ սուզանել, ահաւադիկ բևեռեալ յանօ-

ընաց Հրէից։ Դու զկողն յԱդամայ առեալ կին ստեղծեր, և 'ի կող քո խոցումն առեալ, և դարձեալ զխոցողն՝ Թողութեան արժանաւորեցեր. զի ետես 'ի փորուածէն զասուածային զլոյն որ վարագուրաւ մարմնոյն պատեալ էր։ Երկինք էին բաւական աթոռոյ քո տանել, դնաս 'ի վերայ հողմոց՝ զոր աչք առաքելոցն տեսին 'ի համբառնալն. դարձեալ յասուխս պատառիս և պարգևս լինիս որպէս մահապարտ 'ի Պիղատոսէ 'ի քո հողոյն։ Դու Ասուած գոլով մշանջենաւոր՝ և այնչափ համբերես վասն զմեզ փրկագործելոյ. դու անպարտականդ մահու, ինձ որ մեղօքս եմ պարտաւորեալ՝ ոչ տաս թոյլ զանձնս 'ի կատարս լերանց սառնամանեօք սպանանել. այլ ողորմիս սպանողն հոգւոյ իմոյ, և ամպ ջերմախառն հովանի առնես։ Մի՛ խնայեր, Տէր, զի հակառակ է մարմնոյս հոգւոյս և հանող 'ի քէն, և հակառակ քոյին բարերարութեանդ։

Զայս աղօթս մատուցանէր սուրբն

Յակոբ 'ի կատարս լերանց, մինչև յողբս ածէր զզօրս հրեշտակաց. և Տէրն և հրեշտակքն ողջագուրէին զսուրբ պարանոցն և այսպէս ասէին. Ո՛վ երջանիկ, խնայեա, քանզի մարմին է և ոչ ինչ է մեղուցեալ: Եւ դարձեալ ասէին հրեշտակքն. Ո՛վ սուրբդ Աստուծոյ, աղաչեմք վասն քո զՏէր, քանզի ասէ ցմեզ. Ահաւասիկ տեսանէք անմարմին հրեշտակք զմարմնաւորս որ'ի գութ էած զիս ամենայն մարդոյ. և ահա խնդրուածք քո կատարուն լինիցին. առ իս, որդեակ իմ սիրելի: Եւ ասէ սուրբն Յակովբ. Ոչ խնայեցից 'ի սպանող մարմին մինչև ելից. և ոչ յապեցայց ջրով յաւուրս իմ. բայց էիք զարմանք թէ դու առնես հրաշս մեծամեծս, զի Աստուած ես. այն է աքանչելիք, թէ մեղուցելոյս ողորմիս: Եւ զայս այսպէս աղօթէր: Ապա վերանայր Տէրն յերկինս հանդերձ հրեշտակացն գնդիւն. և ապա երկուս հրեշտակս պահապանս հրամայէր կալ սրբոյն Յակոբայ, այն որ երևեցաւ Կոստանդիանոսի բարե-

պաշտ թագաւորին Հռոմոց, զոր և ասաց նմա։

Իսկ սուրբն Յակոբ յարտասուս եղեալ 'ի կատար լերինն գոչէր ձայնիւ, մինչև զանբան գագաթն լերինն 'ի ձայնս ողբոցն ածէր. և յահագին ձայնէ ողբոցն՝ գազանք և թռչունք անդ հասեալ՝ պշնական աչօք 'ի սուրբն հայէին։ Իսկ նա ձեռօքն հրամայէր գնալ յիւրաքանչիւր տեղիս, և ասէր ցանձն իւր. Վայ քեզ և եղուկ կարդա վասն անաանոցն. նոքա զսահման բնութեանն պահեն, և դու փոխարկեալ այլանդակիս ամբարտաւանութեամբ. յո՞ր խաւար երթալոց ես։ Եւ այլ ևս բազում վատթարութիւն սրբամանքուր անձինն մատուցանէր, և այսպէս աղերսէր Տեառն. Տէր Յիսուս, օգնեա որբացելոյս, զի դու համբարձար առ Հայր, ո՞վ օգնեսցէ ինձ. զի այժմ լուաւ օձն Եւայի զմխիթարական բանս քո առ իս և սպասէ ինձ որպէս նախաատեղծացն. զի մարմին ունիմ և բազում զէնս գտանէ 'ի սա կորստեան։ Քանզի լուաք

'ի պատմութեանց հարցն՝ որ զբազումս
'ի սրբոցն անմասն հանեալ 'ի վաս-
տակոցն, և դեռ ևս պատերազմի.
քանզի 'ի ժամ գիւտի խաչին քո գո-
չեաց վասն Յուդայի. և գտեալ զօձն
կամակոր զանիծեալն Յուլիանոս որ
չարաչար տանջեաց. թէպէտ և ա-
րին այն յաղթեաց նմա, բայց մե-
ռանէր. և 'ի սրբոց քոց զբազումս
որսաց: Եւ արդ, Տէր իմ, զարհու-
րեալ դողամ 'ի նեռից նորա. վասն
զի սկսեալ պահեմ զանձն իմ տա-
ճար Աստուծոյդ իմոյ. և նա կամի
աւազակել զոր օրինակ զԱդամ: Օգ-
նական լեր ինձ, Տէր, և առաքեա
զՀոգիդ քո սուրբ զոր օրինակ յա-
ռաքեալսն, և եկեալ հրով աստուա-
ծութեամբդ արբոյց զհուրն սատա-
կիչ ախտից, և ըստ բանի քում եղիցի
յաշխարհէ, զի մեռաւ ախտն որ 'ի
նոսա: Եւ արդ Տէր բարերար, մի գը-
նասցէ Հոգիդ քո սուրբ յինէն, մին-
չև գամ առ քեզ. զի անախտ մը-
նասցէ պատմուճան նոր առագաս-
տին. և ակն օձին թեւաւորի մի տես-
ցէ զիս. և շնորհեա ինձ զպատուի-

բանս քո յանդ հանել. և այսպէս տուր ինձ զօրութիւն վասն անուանդ քո, Տէր իմ Յիսուս Քրիստոս. և տաց զարիտուրսն (3), և զբաժակն Հգնոզական արբից, և անուան քում փառս մատուցից այժմ և յաւիտեանս յաւիտենից:

Ապա խոնարհեցուցեալ զերանելի մարմին, ծունր կրկնեալ և գոհանայր զՏեառնէ որ բաց աչօք ետես. և հրեշտակն որ տուաւ նմա պահապան, մատուցեալ քաղցր ձայնիւ ասէր. Երանելիդ Յակոբ, այսպէս ասէ Տէր, Կատարեալ կացցեն խնդրուածք աղօթից քոց, և յայսմ հետէ նշանագործ լիցիս. և տացի քեզ շնորհք առաքելական, և կեանք քո ընդ հրեշտակս, և փառաքշանք դիւացն անհետ կորիցեն 'ի քէն: Զայս լուեալ 'ի հրեշտակէն տուրբն Յակոբ՝ գոհութիւն մատուցանէր ամենատուրբ Երրորդութեանն: Եւ կայր զժամանակն ամբրայնոյն աղօթաձիգ և անկերակուր, մինչև 'ի գալ կէտ գարնանային. նմանեալ մեծի մարգարէին Մովսէսի որ

Ճգնեալ առընկալաւ զպատգամն վասն Տեառն։

Իսկ սուրբն Յակոբ ամենայն ազգաց առդրեցաւ պարծանք. և առեալ քայլ ոտամբ, որպէս զՀրեշտակ Աստուծոյ գայ ինչանէ 'ի լեռնէ անտի լուսաւորեալ դիմօք որպէս զՄովսէսն զայն 'ի հնումն։ Եւ դէմ եդեալ գայ 'ի սահմանս Մծբին քաղաքին առ այր միայնացեալ յայրի ուրեմն բնակեալ, անուն Մարուգէ. անդ ուր Աստուածոյ կարգաւորեալ. և նա դեռ ևս չու արարեալ (4) երթայր 'ի խելս գետոյն՝ որ կոչի Սաթիթմա։ Զայն տուեալ որ յայն կողմ գետոյն այգիս գործէին քաղցրալուր բարբառով. Այ այգեգործք, ուրանօր ցուցանի խելս գետոյս։ Եւ նոցա տեսեալ զգաճուճ կերպիկն, այպն արարեալ զնա ասէին. Ճգնաւոր ոմն ես դու, գնա 'ի վերայ ջուրցդ։ Այս առաջին նշանագործութիւն. և ապա զինչ. հանեալ զղաբոնիկն նաւակ արարեալ անց 'ի վերայ գետոյն. և թօթափեալ զղա-

բոնիկն 'ի ցամաքի՝ բուսան 'ի ցրա-
նէ ջուրցն ծառս երկոտասան արմա-
ւենեաց. և տեսողացն յիմարեալ ի
ձայնէն՝ ոչ զարմացան: Եւ եկ գնաց
'ի վաստակս նոցա, տուեալ ողջոյն
նոցա և ասէ. Զինչ է, արք, զոր
գործէք դ. և նոցա խաղ կալեալ ա-
սէին ցնա. Փուշ է; նման Իսրայէլի
այգւոյն տեառնագրեցաւ: Եւ նա ա-
սէ. Կացցէ փուշ, մինչև գայցէ Տէր
այգւոյդ: Եւ ըստ բանի սրբոյն Յա-
կոբայ փշացեալ կայ մինչև ցայսօր
ժամանակի առանց պտղոյ. բայց
տերևնորանոյն բնութեամբ սաղար-
թաւորեալ վասն նշանաց. այսր
պատճառաւ գլխաւորեցաւ, զի հա-
ւատարմացի բանն Տեառն որ ա-
սաց 'ի լերինն ցսուրբն Յակոբ, թէ
տաց քեզ շնորհս նշանաց, որպէս ե-
ղև իսկ. զի երկինք և երկիր անցցէ,
և բանք Տեառն ոչ սխալեսցի:

Եւ նորա յուղի անկեալ եհաս
ուր երթալոցն էր. և դիպեալ միայ-
նակեցի Յակոբ կոչեցեալ անուն,
զի այր քաջ ճգնող էր, և գաղարեալ
առ նմա աւուրս քառասուն: Եւ

դարձեալ թուակարգի սուրբն Յակոբ ընդ Տեառն այսպէս. գայ տէրն 'ի հայրական ծոցոյն, և առնու մարմին 'ի սրբոյ կուսէն, և լուէ մինչև ընուլ հասակ աճման երիտասարդական, որով զԱդամ բաղկացոյց, և ապա մկրտիլ 'ի Յորդանան. գայ ձայն հայրական և սուրբ Հոգին, և դաւանի ամենեցուն անքակ Երրորդութիւն աստուածութեանն. և մեռանի օձն թեւաւոր: Եւ ապա մարտ եդեալ անձնական փորձի և 'ի խաչ բարձրանայ. և պատուական աբեամբն՝ դաշնաւորեալք զհաւատացեալս նորա գալստեանն, ունելով զնշան խաչին զէն 'ի ձեռս, և ճշմարիտ հաւատով ակն ունին փեսային անմահի: Եւ Տէրն յորժամ զԱդամայ հասակն ընոյր, և ապա սկսանէր նշանագործել և բժշկապետել: Նոյնգունակի և սուրբն Յակոբ ծնեալ 'ի մօրէ և լուեալ աճեալ զաճումն մարմնոյ մինչև լցաւ հասակ լրմանն, և ապա ճգնեալ 'ի կատար լերանց, մինչև գալ Տեառն և տալ նմա զախորժակս կամացն, և ազա-

տանալ՝ի սատանայէ. և տպա այ-
նուհետև սկսանի նշանագործել. և
՝ի գետն ցուցանէ զհրաշն. որպէս
և Տէրն զայգին Իսրայէլի տայ ՝ի
ձեռս այլ մշակաց, և սուրբն Յակոբ
զայպանեալն ծաղու փշաբեր առ-
նէ մինչև ցայսօր ժամանակի։ Տէրն
՝ի գետն սպանանէ զօձն, և եկեալ
զատակն գայ վկայ ՝ի բարձանց. և
սուրբն Յակոբ զղաբողոնն նաւակ
արարեալ անցանէ անվթար՝ի վերայ
խորոցն, և կացուցանէ ամօթով զայ-
պանողն։ Տէրն ՝ի լերինն բարձր
պատերազմի, և սուրբն Յակոբ ըղ-
ցօղն որ յաղաբողոնն մարզի՝ բու-
սոյց ծառս բարձրաբերձս այպանո-
ղացն զնա։ Տէրն երկոտասան անդա-
մօքն և ատուածացեալ մարմնովն
պատերազմի, և սուրբն Յակոբ եր-
կոտասան ծառս արմատենեաց բու-
սուցանէր ՝ի ցօղոյ սակաւ ջուրցն։

Եւ ինքն հրաժարեալ ճգնողական
անձամբն՝ յուղն անկեալ ՝ի նշանա-
խաչ տապանն, զոր աղաչեալ եզնա-
մոլին սուրբն Մարուգէ՝ յուղարկէ
զնա. և չու արարեալ գնաց ուր կայր

տապանն։ Բայց զարմանք սքանչե-
լեաց ունին զիս յայսմ վայրի. մար-
գարէութեան հոգի գայր 'ի նմա.
և առանց հրեշտակացն որ սպասա-
ւորէին նմա՝ ոչ մտանէր 'ի գործ Ա-
ստուծոյ, և գիտակ գրոց կարի
վարժ. պարտ է յիւր ինքնախօս
գիրսն իմանալ և ճանաչել, զոր
Զգօն կոչեն, և կարի հմտագոյն
գրոց նորա եղեալ վասն լուսաւոր
մարգարտացն որ 'ի նմա խորագոյն
արտաճառի. զոր ապա յաջորդն
յիւրում կարգին 'ի ճառս արտաճա-
ռէ պարզաբար, եթէ Տէր կամեցի։
Եւ մեք դարձցուք 'ի բանն որ վասն
տապանին յուզման է։ Արդ որ այս-
չափ հրաշագործէր սուրբն Յակոբ,
զինքրդ անդիտանայր վասն տապա-
նին թէ ո՞ւր կառուցեալ կայ։ Ո-
մանք 'ի լեառն Կորդուաց ասացին և
ոմանք 'ի լեառն Մասիս որ յԱյրա-
ռատեան գաւառին. նա աւանիկ և
յոտն Մասեաց աղբիւր բղխեալ կայ,
և եկեղեցի յիւր անուն կոչեցեալ
մինչև ցայսօր ժամանակի։ Եւ զառ-
դրեալ բանակարգն 'ի լեառն Մասիս

կացուցեալ, և պատմութիւն վասն աղբերն որ ցամաքեցոյց, և զհեր աղջկանցն 'ի սպիտակութիւն դարձոյց վասն այնպանելոյն զնա՝ յաւան գեօղն որ Արտամետն կոչի, զի այսպէս հրաշափառեցաւ։ Զի էր աղբիւրն յանցս Ճանապարհին, և անդ հոյլք լուացողացն մերկս և խայտառակս անսամաչ մնային, և ոչ պատկառեալ 'ի սրբոյն. և սուրբն անէծ զաղբիւրն և առժամայն ցամաքեցաւ. և զհեր աղջկանցն փոխեաց 'ի սպիտակութիւն. որ դեռ ևս կայ նշանն. զոր և մեր տեսեալ իսկ զնոսա։ Եւ ասի 'ի պատմութենն զոր յԱսորեաց մեծ ջանիւ գտի, եթէ յորժամ զհրաշան արար նշան տապանին 'ի ձեռին իւրում էր. և ապա բազմութիւն ժողովոյն տեսեալ զքանչելիսն զոր արար՝ անկեալ յոտս նորա։ Եւ նորա հանեալ խաչ՝ բղխեաց աղբիւրն. բայց զհեր աղջկանցն ոչ բժշկեաց 'ի յիշատակ մեղաց նոցա։ Եւ որպէս ջուր ջրհեղեղին ապաւէն անսուղան եղև տապանն և ապրեցոյց զսերմն ազգի մարդկան, պարտ

էր սմա որ մասնաւորեցաւ 'ի ձեռն Յակոբայ՝ հրաշք գործել 'ի վերայ Ջուրց ալքերն։ Զի նոյն կուսական վարուք և սուրբն Յակովբ ըստ մարմնոյ մեռեալ էր ախան, զոր ընկալաւ 'ի լերինն յորժամ յաղօթս կայր, և Տէրն երևեցաւ նմա. և տայր նմա զինդրելն զանապական։ Եւ խնայեաց Տէր 'ի սիրելին իւր 'ի սուրբն Յակոբ, արդել զնա ելանել 'ի կատար լերինն՝ ուր տապանն սառնապատ կառուցեալ կայր. հանեալ հրեշտակն մատն 'ի տապանէն՝ դնէր ընդ սնարս սրբոյն Յակովբայ ուր ննջէր։ Եւ յարուցեալ սրբոյն Յակոբայ գոհանայր զՏեառնէ։

Եւ զի՞նչ է որ հրամայեցաւ նմա չելանել 'ի կատար լերինն. բաբէ. զոր առ Մովսէսիւն վարկաւ, որ շատապէր տեսանել մարգարէն զանհաս սատուածութիւնն։ Պատասխանի տուեալ ասէր, թէ Զիւք հնար եղեալոցս տեսանել զիս և ապրել։ Եւ ապա յոյժ կարի ստիպեաց, հրամայեաց նմա մտանել 'ի փոսպարս լերինն և առնէր նմա Ամուսած գե-

բեզման զվէմն. և մտեալ Մովսէս մեռաւ որպէս զհաստրակաց մահ. և մատուցեալ Տէր ձայնեաց Մովսէսի և ասէ զդիմաք նորա կերպ զհանդերձելոցն. և պատուիրեաց նմա Աստուած և ասէ. Մովսէս, խնայեմ'ի քեզ. և եռու քեզ զհանդերձելոցն անապական կերպն. զի տեսցեն ազգ մարդկան և հաւատասցեն իմոյ գալստեանն և հանդերձեալ փառացն. քանզի այսպէս զարդարելոց են արժանաւորքն և անախտականքն. զի օն անդր և Խաղայէլ ոչ կարէր հայել յերեսն Մովսէսի, այլ քօղարկեալ կայ զի համայն են: Եւ տապանն յանփուտ փայտից էր և կարապետ հանդերձեալ աւուրն. ոչ է պարտ մարմնով տեսանել կամ հայել 'ի նա. որպէս կանանցն սաստեաց չմերձենալ յոտսն. վասն զի զհանդերձեալ աւուրն զպատկերն առեալ էր Տէրն: Ահա և ասա տեսանի, առ փափաքումն սրբոյն Յակոբայ յանհնարինն վարկաւ ելանել 'ի ծայրագոյնն. արդ վասն կուսական ան-

ձինն ոչ արարեալ անտես, տայր զինդրելն ման 'ի տապանէն կերպացեալ 'ի կերպ խաչի:

Եւ առեալ գնաց խնդալից յերկիրն Ասորւոց 'ի քաղաքն Մծբին: Եւ Մարուգէի տեսեալ յոյժ խնդալից եղեալ՝ առեալ դնէր 'ի վերայ աչացն և համբուրէր զնա, և հայցէր փրկիչ 'ի հրեղէն գեռոցն 'ի գալըստեանն Տեառն: Եւ ասէր. Դու կարապետ ես այնմ գալստեանն և նաւակ անցուցանելոյ զարդարան 'ի վերայ ծովացեալ հրեղէն գեռոցն առ Աստուածն բոլորից: Եւ ապա օրհնեաց զարժանին զսուրբն Յակոբ այսպէս ասելով. Տէր ընկալցի զաշխատութիւնդ քո. և օրհնեալ ես 'ի Տեառնէ Աստուծոյ մերմէ: Եւ եդին պատուով առ սուրբ տեղեացն. և փառաւորի Աստուած անդադար սաղմոսերգութեամբ և յերկարաձիգ աղօթիւք առ Տէր: Եւ հրաշափառագոյն նշանս գործեցաւ 'ի քաղաքին 'ի ձեռն սրբոյն Յակոբայ և 'ի ձեռն մասինն որ 'ի տապանէն շնորհեցաւ:

Այր մի նախանձ առեալ ընդ Մծբին քաղաքին, երթեալ առ արքայն Պարսից պատմէ և ասէ. լցեալ է երկիրն Ասորւոց, և աւագ ոչ գոյ, և զքո անյաղթ թագաւորութիւնդ արհամարհեն։ Եւ նորա լսելի եղև, ժողովեալ զզօրս Պարսից, գայր հասանէր մեծ և ահագին զօրօք յերկիրն Ասորւոց. և զՄծբին քաղաք պատեաց բազում զօրօք։ Եւ սուրբն Յակոբ 'ի քաղաքին և նշան տապանին առ իւր, և յաւարի կայր քաղաքն. և շրջանապատոյտ ածեալ զջուրն զքաղաքոյն և փայտէպարիսպ, և ահա մերձ 'ի կործանումն. և զօրք քաղաքին երթային անկանէին առ ոտս սրբոյ հայրապետին Յակոբայ և ասէին. Տէր, սուրբդ Աստուծոյ, օգնեա մեզ, զի հասաւ առ հասարակ սատակումն յանօրէն զօրացն։ Իսկ նորա տեսեալ զահագին աղէտն և զչերմաջերմ արտասուսն և զաղօթսն և զհաւատսն, յարուցեալ առ զմասն որ 'ի տապանէն, և քաղաքն ամենայն պշուցեալ 'ի նա հայէին։ Եւ ելեալ կայր 'ի

վերայ պարապին հանդէպ զօրացն, և դնէր ընդդէմ լուսաբեր երեսացն զտախտակն որ 'ի տապանէն. և գոչիւն բազմամբոխ ժողովրդոցն ողջոյց և երիտասարդաց փղձկէր զսիրտ սրբոյն Յակովբայ. և լուռ և անշարժ շրթամբք հայցէր յԱստուծոյ փրկիչ յանօրինացն: Եւ ապա նշան ահագին երևեալ առ Թագաւորն՝ տեսանէր զտուրբն Յակոբ Թագաւոր ահագին, և զզօրս երկնից որ եկեալ էին յօգնականութիւն, զօրս հեծելոց ցուցաւ նմա: Եւ նորա կոչեալ զայրն որ ստիպեաց զարքայն գալ 'ի քաղաքն յայն՝ ասէր. Այր դու, զինարդ խաբեցեր զիս ասելով եթէ ոչ գոյ անդ Թագաւոր. ահա տեսանեմ անդ Թագաւոր և երկոտասան հազար հեծելոց շուրջ զնովաւ, զիս կամեցար բառնալ: Եւ հրամայեաց սրով սպանանել առաջի զօրացն:

Յայնժամ պաշարեալ զելս իրացն ոչ գտանէին. և սրբոյն խմացեալ զհրաշան որ յԱստուծոյ, խնայեալ 'ի մարդիկն՝ խնդրեաց զսի-

ծակս ձիաստանեաց. և առժամայն հասաւ որպէս հոլմ թանձր, հասեալ 'ի վերայ զօրացն՝ զձիս կապկնկէց առնէին և զհեծեալս սուրհանդակս կացուցին, մարդապուրծ յերկիր իւրեանց անկանէին։ Եւ տեսեալ քաղաքին զանպատում զլսքանչելիսն՝ տային փառս Աստուծոյ. և յայնմ հետէ սուրբն Յակոբ իբրև զԱստուած և զփրկիչ փառաւորէին, և սիւն հաստատութեան ունէին 'ի միջի իւրեանց։ Նաև Մարուգէ ամոլք հաւատոյ, հանապազամեռք ճգնաւորեալք տային քաջալերութիս միմեանց վասն քրիստոսական կրօնիցն. և անուն քաջութեան նոցա հռչակէր ընդ ամենայն երկիր առ հեռաւորս և առ մերձաւորս։

Եւ ապա այնուհետև սուրբ ամոլքն կային յայրին խստամբերութեամբ և կարգաւ հրեշտակաց։ Եւ սուրբն Յակոբ պարապեալ իմաստասիրելոյ զգիրս 'ի հնոց պատմութեանց, և անուն նորա Զգօն կոչեցեալ. այսինքն զարթուցիչ առ աստուածասիրութն և մերձակայ առնել

հրեշտակաց։ Նախ քան զքահանայանալն պատՀառեաց այսպէս առ արժանաւորն և առ յանդուգն։

Ի ժամանակին յայնմիկ ՆՆՋեաց եպիսկոպոսն Մծբնայ, և եղև խնդիր 'ի մէջ քաղաքին, եթէ ո՞վ ելցէ արժանի ունել զաթոռ հայրապետութեանն։ Եւ էին ամք հինգ զորս ասէին արժանի լինել. և եղև հակառակութիւն 'ի քաղաքին յաղագս այնորիկ, թէ ո՞վ յառաջ մատիցէ յաթոռն. զի ոմն զայս անուն ասէր և ոմն զայն. և 'ի արտմութիւն եղեալ 'ի միաբանութիւն ոչ եկին։ Յայնժամ գլխաւորք քաղաքին խորհեցան ելանել առ սուրբն Մարուգէ յանապատ նորա, տեսանել թէ զինչ պատմեսցէ վասն խորհրդոյն։ Եւ իբրև եկին 'ի դուրս խցին, սուրբն Մարուգէ ըստ սովորութեանն իւրում կայր յաղօթս. և եղեալ աշակերտն ասէ. Գնացէք 'ի գաւիթս եկեղեցւոյն մինչև կատարեսցէ զաղօթսն և եկեսցէ առ ձեզ։ Իսկ սուրբն Յակոբ եկեալ էր առ նա յառաջ քան զերիս աւուրս. և նա

մարգարէութեամբ խօսեցեալ ցնա ասէր. Այսօր համբուրեմ զքեզ իբրև զկրօնաւոր և զեղբայր սիրելի. և զկնի երից աւուրց եղեցիս հովիւ և առաջնորդ հօտին Քրիստոսի: Ասէ ցնա սուրբն Յակոբ. Եղբայր, չեմ բաւական այդմ բանի զոր ասեար:

Եւ եկն սուրբն Մարուգէ առ ժողովուրդն, և տեսեալ զնա՝ յարեան ընդ առաջ նորա. զի էր տեսիլ նորա իբրև զհրեշտակի: Եւ նա ակնարկէր ամբոխին, զի սակաւ մի դադարեսցեն զի աղօթեսցէ յեկեղեցւոջն: Եւ յետ աղօթիցն եկին առ նա և նա հաստատեալ կայր 'ի գաւազանի 'ի մէջ նոցա. և նոքա երկիր պագեալ համբուրէին զոտս նորա և զձեռս. և հրամայեաց նոցա նստել և ունկն դնել բանից նորա. և պատմեաց նոցա եթէ վասն էր իրիք եկեալ են: Եւ ոմն զայս անուն արժանի ասէին և ոմն զայն. և էր հակառակութիւն 'ի մէջ նոցա: Եւ նա ասէ ցնոսա. Լուռ լերուք. գիտեմ զի արամեալ էք ընդ փոխումն առաջնորդին ձերոյ. այլ ես ասեմ

ձեզ, յարանցդ զոր ընտրեցիք՝ էին արժանի եպիսկոպոսութեան. արիք եկէք յԵրուսաղէմն, զի անդ են ժողովք եպիսկոպոսացն և պատրիարգն, և յայտնէ ձեզ Հոգին սուրբ զայրն՝ որ հանդերձեալ է նստիլ յաթոռ հայրապետութեան: Եւ նոցա ընկալեալ զբանն որպէս 'ի հրեշտակէ Աստուծոյ գնացին 'ի քաղաքն Իւրեանց: Եւ յետ աւուրց ինչ եկին 'ի ժողով եպիսկոպոսացն, ոմանք ետուն կաթողիկոսին. և նոցա ծանուցեալ զխորհուրդս նոցա ասեն. Զո՞ խնդրէք ձեզ առաջնորդ: Եւ նոքա ասեն որպէս ասաց սուրբն Մարուգէ, թէ Հոգին սուրբ տացէ ձեզ առաջնորդ: Եւ նոցա լուեալ ասեն ցմիմեանս. Եկայք հսկեսցուք այսօր և խնդրեսցուք յԱստուծոյ յայտնել մեզ զարժանն: Եւ 'ի մերձել գիշերոյն ամենայն բազմութիւն և կաթողիկոսն սկսան արտասուօք աղօթել, սաղմոսիւք և օրհնութիւք, և երգովք հոգևորօք խնդրել յԱստուծոյ: Եւ 'ի հասարակ գիշերոյն առանձնացոյց զինքն կաթողի-

կոան յաղօթս, և արտասուօք աղա-
չէր զԱստուած յայտնել նմա։ Այլ
որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ՝
աղօթից նոցա լսէ, արկ 'ի վերայ
նորա ափշութիւն որպէս քուն ինչ
և տեսեալ երիտասարդ մի որ ասէր
ցնա. Սուրբն Յակոբ է այրն այն.
և ծանուցանէր նմա զտեղին և զայրն
յորում բնակեալ էր. զի էր նա
միայնակեաց աքանչելագործ. և 'ի
համբառնալ հրեշտակին յարուցեալ
կաթողիկոսն՝ գոհանայր զՏեառնէ.
զի սովորութիւն էր նորա հրեշտա-
կաց տեսիլ տեսանել. և վաղվաղա-
կի մտեալ յեկեղեցին՝ կոչեաց զե-
պիսկոպոսունսն և զժողովսն ամե-
նայն, և պատմեաց նոցա զանուն
սրբոյն և զտեղին, որպէս երևեցոյց
նմա հրեշտակն։

Եւ յարուցեալ ամենեքին ելին
'ի Մծբին, և գրեցին հրովարտակս
և առաքեցին առ նա արս հաւատա-
րիմս, և կոչեն զնա 'ի ժողովն, և
ծանուցին՝ նմա վասն խորհրդոյն։
Իսկ սուրբն յառաջագոյն ծանու-
ցեալ զգալ հայրապետացն 'ի Մըծ-

բին, քանզի Հոգին սուրբ յայտնեալ էր նմա, և պատկառէր ընդդէմ կալ պատուիրանացն Աստուծոյ. զի բազում անգամ լուեալ էր 'ի սրբոյն Մարուգէէ, թէ հանդերձեալ ես ունել զաթոռ առաքելական: Եւ ազդեալ նմա 'ի Հոգւոյն սրբոյ ելանել 'ի Ժողովն. քանզի անդ էր բազմութիւն քաղաքին, և սպասէին գալստեան սրբոյն Յակոբայ. վասն զի ամենեքեան գիտէին զվարս երանելւոյն: Եւ իբրև եկին 'ի մէջ հայրապետացն՝ ոմանցն եռուն միմեանց և նստան. և ասէ ցնոսա. Յինչ պէտս կոչեցէք զիս. և նոքա ասեն. Ի տեառնէ Աստուծոյ հրամայեցաւ կոչել զքեզ յաթոռ եպիսկոպոսութեան քաղաքիս այսմիկ: Եւ նա ասէր. Զեմ բաւական այդմ բանիդ: Եւ Ժողովն փութացուցանէին զհայրապետն: Եւ վաղվաղակի յարուցեալ մտին յեկեղեցին, և սուրբն Յակոբ ընդ նոսա. և ձեռնադրեցին զնա եպիսկոպոս, և եղև ուրախութիւն մեծ 'ի քաղաքին:

Եւ իբրև անցին աւուրք ինչ, ի-
ջեալ սուրբն Մարուգէ բազում ըն-
կերօք յողջոյն սրբոյն Յակոբայ և
օրհնիլ 'ի նմանէ. և իբրև ողջունեցին
զմիմեանս, սկսաւ սուրբն Մարուգէ
օրհնել զԱստուած՝ որ հաստատեաց
յեկեղեցի իւր հովիւս զուարթ և
զգուշացեալ։ Եւ 'ի գաւիթս եկեղե-
ցւոյն անկեալ դնէր անդամալոյծ մի
ամաց հնգետասանից, և լուծեալ
էին ամենայն անդամք նորա։ Եւ
տեսեալ զնա սուրբն Մարուգէ ա-
սէ ցսուրբն Յակոբ. Տէր, եկայք
արասցուք աղօթս վասն անդամալու-
ծիս այսորիկ։ Յայնժամ հրամայ-
եաց սարկաւագացն դարձուցանել
զնա յարևելս. և խոնարհեալ եդին
ծունր և ասեն. Տէր Աստուած զօ-
րութեանց, գոհանամք զքէն, զի ար-
ժանի եղև քաղաքս այս քարոզել
զանուն քո 'ի մէջ հրէից և կռա-
պաշտից, և ծանիցեն թէ դու ես
միայն Ճշմարիտ Աստուած զօրու-
թեանց, և հաւատասցեն յանուն
Որդւոյ քո սիրելւոյ Տեառն մերոյ և
փրկչին Յիսուսի Քրիստոսի. և զոր

արարեր 'ի ձեռն սրբոց քոց առաքելոցն, արա և այժմ 'ի ձեռն ծառայից քո, զի փառաւորեսցի անուն քո սուրբ և բարձրասցի անուն սուրբ խաչի քո, և որպէս յԵրուսաղէմ եռուր զնշանն յայտնապէս 'ի ձեռն սրբոց առաքելոցն, և յորժամ Հրեայքն հծծէին զմիմեանս և ասէին, թէ նշան նոր լինի 'ի քաղաքիս յայսմիկ և յամօթ լինէին, և աւետարանն Քրիստոսի զուարճանայր: Եւ արդ, Տէր բարերար, բժշկեա զանդամալոյծս զայս և կարկեա զբերանս այնոցիկ որ նախատեն զկենսատու սուրբ խաչ քո, որ է պարծանք սուրբ եկեղեցւոյ քում: Եւ իբրև կատարեցին զաղօթսն, ասէ տէր Յակոբ սուրբն Մարուգէ. Մատիր տեառնագրեա զլուծեալ անդամալոյծդ: Ասէ սուրբն Մարուգէ. Տէր, քեզ պարտ է ձեռն դնել և աղօթս մատուցանել, զի դու պատիւ եպիսկոպոսութեան ունիս: Յայնժամ կացեալ յաջմէ սուրբն Յակոբ և յահեկէ սուրբն Մարուգէ և բուռն հարեալ կանգնեցին զնա և ասեն.

Այր դու, արի կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. և նոյնժամայն հաստատեցան անդամք նորա. և յարեաւ և տարածեաց զձեռս իւր փառաւոր առնէր զԱստուած։ Եւ ժողովուրդն տեսեալ անկանէին 'ի վերայ երեսաց իւրեանց երկիր պագանէին, և բարձրանայր անուն Յիսուսի Քրիստոսի. և ասէին. Օրհնեալ ես դու Քրիստոս, որ յամենայն ժամ-լսես ձայնի յուսացելոցս 'ի քեզ, և 'ի ձեռն ծառայից առնես սքանչելիս. բարձրասցի և փառաւորեսցի անուն քո սուրբ, զի դու միայն ես Աստուած։ Յայնժամ ասէ սուրբն Մարուգէ ցանդամալոյծն. Արի զգեցիր պատմուճան և պնդեա զմէջ քո և քարոզեա զանուն Քրիստոսի և զզօրութիւնն որ 'ի ձեռն ծառայից իւրոց եղև քեզ։ Եւ Հրեայքն իբրև լուան զարմացան վասն սքանչելեացն Աստուծոյ որ եղև 'ի ձեռն սրբոյն Յակոբայ. և ոմանք ասէին թէ չէր անդամալոյծ։

Յետ այսր ամենայնի երևեցաւ այր մի Կեդրոն անուն, որ ունէր զկարգն

Մարկիանոսի կախարդի, և կայր հակառակ քրիստոնէից, և էր յերկրէն պոնտացւոց, և յայտնի էր առաջի Թագաւորին Կոստանդիանոսի, և եղբայր նորա զինուորեալ մեծին Կոստանդիանոսի. և հաճոյ Թուեալ արքային ասէ ցնա. Տեսիլ երեսաց քոց գեղեցիկ է, և դու յոյժ պիտանի 'ի տան իմում. մի ինչ պակաս է 'ի քէն, որ զԱստուած ոչ գիտես, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ 'ի նոսա արարածք իցեն, զարեգակն և զլուսին և զաստեղս. արդ ծանիր զնա և այր զպատուական կնիքն Քրիստոսի, և լինիցիս երևելի և պատուական, և արարից զքեզ իշխան, և տացից քեզ զպատիւ հիպարքոսութեան, և արձակեցից զքեզ 'ի Մի-ջագետս Ասորւոց 'ի Մծբին քաղաք: Պատասխանի տուեալ ասէ. Հաւատամ յԱստուած Հայրարիս զոր դու քարոզեցեր և ծանուցեր: Եւ 'ի խընդութեան եղեալ արքայն Կոստանդիանոս՝ վաղվաղակի հրամայեաց մկրտել զնա. և պատուեաց զնա մե-

ծաւ պատուով, և առաքեաց զնա 'ի Մծբին քաղաք մեծաւ սիրով։ Եւ եղբայր նորա էր մեծատուն և երևելի 'ի քաղաքին և պաշտէր զկուռս։ և էր տուն նորա կազմեալ յոսկւոյ և յարծաթոյ և յականց պատուականաց։ Եւ մեծն Կոստանդիանոս բազում անգամ խնդիր արարեալ Կեդրոնի եղբօր եպարքոսին, զի մկրտեսցէ և զնա։ և ոչ կամեցաւ, զի խմորեալ էր յաղանդոյ Մարկիանոսի ամբարշտին և կախարդի։ Եւ կայր խեղճրդի Կեդրոնի անդամալոյծ 'ի ծնէ։ և պատատէին ոտք նորա որպէս զփոկ զմիմեամբք։ և գոսացեալ էին անդամք նորա, և անկեալ գնէր 'ի մահիճս, և էր պատկերօք գեղեցիկ և գանգրահեր և զուարթատեսիլ։

Լուաւ Կեդրոն եթէ անդամալոյծն որ անկեալ գնէր 'ի մահիճս՝ ողջացաւ 'ի ձեռն սրբոյ հայրապետին Յակոբայ, առաքեաց և կոչեաց զայրն բժշկեալ զի 'ի նմանէ ստուգեսցէ զճշմարիտն։ և իբրև եկն՝ ասէ ցնա։ Ո՞վ բժշկեաց զքեզ։ և նա ասէ։

Հնգետասան ամ եղէ անդամալոյծ, զոր դուք իսկ գիտէք, և բժշկեցին զիս ծառայքն Աստուծոյ սուրբն Յակոբ և Մարուգէ: Ասէ Կեդրոն. Ո՞յր անուամբ արարին զայդ. և նա ասէ. Յիսուսի Նազովրեցւոյ: Եւ զայս իբրև լուաւ Մարկիանոս լի եղև սրբութեամբ և ասէ. քանզի մօտ անդ կայր. Զայդ քրիստոնեայքն ուսուցին քեզ. էիր անդամալոյծ, ստուտ էս: Զայս իբրև լուաւ անդամալոյծն, 'ի դառնութիւն եղեալ լի ցասմամբ՝ ասէ. Խաբեբայ և անօրէն, ստուտ դու էս և աղանդ քո և կախարդութիւն զոր մերձ ընդ մերձ խափանեացէ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և հայրն քո սատանայ յամօթ լիցի: Այլ էս ասեմ քեզ. եթէ ոչ էին սրբոցն պատուիրեալ ինձ քարոզել, դու էիր պատասխանւոյ արժանի ամենևին. բայց էս զհրամայեալսն 'ի սրբոցն պատուիրեմ այնոցիկ՝ որ լսեն և 'ի միտ առնուն: Յայնժամ ասէ ցՄարկիանոս. Ես գիտեմ զի բարի և իմաստուն եղբայր հիպարքոսին որ խրն-

դրեաց զիս ասա՝ ստուգել կամի զբժշկութիւն վասն որդեկին իւրոյ. զի յորժամ ճանաչէ զՃշմարիտն՝ թողու զմոլորութիւն խաւարային գնացից իւրոց և ընդունի զաւետարանն Քրիստոսի, որ հանդերձեալ է հալածել զմոլորութիւն ձեր 'ի քաղաքէս յայսմանէ։ Եւ դարձուցեալ զերեսս իւր 'ի կախարդէն՝ ասէ ցԿեդրոն. Լուր, տէր Կեդրոն. զի վասն քո կամացդ կոչեցայ ես ասա, և ինձ 'ի տան քում արժան է քարոզել զՔրիստոս որ յիս երևեցաւ. ես Ճշմարիտ անդամալոյծ էի որպէս տեսանէիք 'ի գաւթին, և բժշկեցայ 'ի ձեռն սրբոցն Յակոբայ և Մարուգէի։ Եւ դու, Կեդրոն, եթէ հաւատաս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ծնաւ 'ի սրբոյ կուսէն Մարիամայ, և երթաս առ ծառայն Նորա և լսես զքարոզութիւն աւետարանին, յայնժամ բժշկի որդին քո 'ի ձեռն սրբոցն աղաչանաց։ Եւ իբրև լուաւ զայս յանդամալուծէն՝ սքանչացաւ. և բարի խորհուրդ 'ի միտ արկեալ 'ի բաց եկաց 'ի Մար-

կիոնէ կախարդէ, և ցանկայր աւետարանին Քրիստոսի։ Եւ ասէ 'ի խորհուրդս իւր. Ե՛կ անձն իմ և ստուգեա զՀշմարտութիւնն. զի որ առնէ զբժշկութիւն որդեկին իմոյ՝ նա է Հշմարիտ Աստուած։ Ասէ ցնա Մարկիանոս. Ընդէր երկմտեցեր 'ի հաւատոցդ զոր ունէիր 'ի մանկութենէ. ոչ խօսիս առնդ որ զանուղղայդ բարբառի։ Յայնժամ ծիծաղեցաւ Կեդրոն և քամահեաց զբանս կախարդին և ասէ. Այսուհետև ստուգել կամիմ զՀշմարտութիւնն և զատութիւնն 'ի բաց թողուլ։

Եւ նոյնժամայն յարուցեալ գնաց յեկեղեցին. և մտեալ պատմեցին սրբոցն Յակովբայ և Մարուգէի, և ասեն. Կեդրոն եղբայր հիպարքոսին առ դուրս կայ և կամի զձեզ տեսանել։ Յայնժամ հրամայեցին մըտանել նմա խաղաղութեամբ. և անդ էր հիպարքոս եղբայրն նորա։ Իբրև եմուտ Կեդրոն առաջի սրբոցն, խոնարհեալ ողջունէր զնոսա սիրով. քանզի հեռացեալ էր սիրտ նորա յառաջին մոլորութենէն, և տուեալ

ողջոյն՝ յոտն կայր առաջի նոցա և ա-
սէր բարձր ձայնիւ. Տեարք, ես կար-
ծէի եթէ զՀշմարտութիւն ունիմ և
ոչ զմոլորութիւն։ զի բազում ան-
գամ զիս 'ի պատուոյ թագաւորին
արդելի, զի մի մկրտեսցէ զիս Կոս-
տանդիանոս, որպէս զեղբայրդ իմ.
և յերկմիտ եղեալ զուղիղ ճանա-
պարհն ոչ գիտեմ. յոյս ունիմ 'ի
բժշկութիւն անդամալուծիդ, թէ
որպէս բժշկեցաւ 'ի ձեռն աղօթից
ձերոց, եթէ բժշկեսցի որդեակն իմ՝
միտք իմ հաստատեսցի 'ի հաւատս
Հշմարիտս. և Մարկիանոս որ ասէ՝
թէ չէ մարմին զգեցեալ Քրիստոս
'ի կուսէն, և թէ չկայ յարութիւն
մեռելոց՝ յամօթ լեցի. և եթէ այն-
պէս է որ ասեն, նազովրեցին ծնեալ
'ի Մարիամայ, խաչեալ և թաղեալ և
հաստատեալ զյոյս մեռելոց։ Եւ ես
այսուհետև տարակուսեալ ոչ ինչ ու-
նիմ հաստատութեան հաւատոյ, բայց
միայն զբժշկութիւն որդւոյ իմոյ. և
որ զայն գօսացեալ մարմինն բժշկէ,
նա է Հշմարիտ Աստուած. և զկնի
այնորիկ բժշկի հոգի իմ և մարմին։

Եւ Մարկիանոս լսէր զասացեալսն 'ի Կեդրոնէ. և 'ի ցասման եղեալ ասէ ցԿեդրոն. Մի՛ լսեր գալիլեացւոցդ. զի ոչ զկպաղս բժշկել կարէն և ոչ զանդամալոյծս առողջացուցանել։

Յայնժամ ասէ սուրբն Յակոբ առաջի ամենայն ժողովրդեանն. Մեք անօգուտ բանս ոչ խօսիմք. այլ զոր խօսիմք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ծնաւ 'ի սրբոյ կուսէն Մարիամայ և չարչարեցաւ վասն մերոյ փրկութեան. էջ 'ի գերեզման և արար փրկութիւն Ադամայ և ծննդոց նորա. խորտակեաց զմահ և փշրեաց զզօրութիւն նորա, և յերրորդ աւուր յարուցեալ 'ի մեռելոց յարոյց ընդ իւր զբնութիւնս մեր, և շրջեցաւ ընդ աշակերտսն իւր աւուրս քառասուն. և ասէ ցնոսա՝ եթէ Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, և պատուէր տայր նոցա յԵրուսաղեմ մի մեկնել, մինչև ընդունիցիք զՀոգին սուրբ. և հրամայեաց նոցա աշակերտել զամենայն հեթանոսս. և ասաց նոցա՝ մկրտել յանուն

Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Որ հաւատայ և մկրտի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի. զի ասացեալ է, որ հաւատայ յիս՝ զնշանսն որպէս զիս առնէ, և յանուն իմ գ�հանցէ։ Մեք հաւատամք և հաւատացեալ եմք. և զամենայն զոր ինչ խնդրեմք՝ տայ մեզ. և անուամբ նորա զգլուխս վիշապին աՀեր կիւղ կոխեմք, և զմոլորութիւնդ ձեր տուրբ խաչիւն խորտակեմք։ Եւ դու և քուրմն ձեր կարդացէք առ աստուածսն ձեր զի բժշկեսցի մանուկդ։ և թէ ոչ լինի ՀՀմարիտ ասացեալդ 'ի ձէնջ, յայնժամ ապա հանդիպի ձեզ որպէս Սիմոնի կախարդի 'ի Հռոմ։ Եւ արդ մեք անկանիմք առաջի Աստուծոյ մերոյ և խնդրեմք զբժշկութիւն մանկանս այսորիկ. ոչ վասն մեր, այլ վասն ժողովրդեանդ՝ որ հաւատան յանուն նորա։

Ասէ Մարկիանոս ցած ձայնիւ և բեկ սրտիւ. Մեք զդա բժշկել ոչ կարեմք և ոչ դուք։ Եւ տուրբն Մարուգէ ծիծաղելով ասէր. Յուսացեալ եմ յԱստուած Հայր և յՈրդի

նորա միածին և 'ի Հոգին սուրբ, և խոստովանիմք զՄարիամ սատուա-ծածին և մայր Քրիստոսի, և զոր խնդրեմք առնումք: Խիզախեալ ասէ ցհայր մանկանն. Յուսացեալ եմ յա-նուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի, զի յորժամ մկրտէ զդա սուրբն Յակոբ, բժշկեալ ելանէ յա-ւազանէ անտի: Քանզի վստահ էին ամոլքն հաւատոյ 'ի Տէրն իւրեանց, որպէս սուրբ առաքեալքն: Յայն-ժամ պատասխանի ետ Կեդրոն և ասէ. Ի մի ժամ կամէի մկրտիլ տամբ իմով. բայց նախ մկրտեսցի որդեակն իմ, և ապա ես և տուն իմ: Եւ ասէ սուրբն Մարուգէ ցսուրբն Յակոբ. Տէր, հրամայեա միում 'ի քահանայ-կացդ պատրաստել աւազան: Եւ Կեդրոն ոչ կամեցաւ, այլ ասէ. Մի ոք մկրտեսցէ զորդեակն իմ բայց միայն սրբութիւնդ ձեր: Եւ մա-տուցին աւազան. և յարուցեալ սուրբքն եդին ծունր և կային յա-ղօթս. և կացեալ մինն յաջմէ կող-մանէ և միւսն յահեկէ, ասեն. Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ կա

միս զկեանս ամենայն մարդկան որ կարդան առ քեզ, լուր ձայնի աղօ-թից ծառայից քոց, և բարձրացո զանուն քո 'ի մէջ հրէից և կռապաշտից քաղաքիս այսորիկ, և ծանիցեն զի դու միայն ես Աստուած ջօրութեանց: Եւ կանգնեալ յաղօ-թից հրամայեցին իջուցանել զմանուկն յաւազանն. և էր նա ամաց իբրև ութից, և մկրտեցին զնա յանուր Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և կոչեցին զանուն նորա Յոհան-նէս: Եւ սուրբն Յակոբ տարածեաց զձեռան և բաժանեաց զոտս նորա 'ի միմեանց, և կալեալ զձեռանէ մանկանն կանգնեցին զնա և հրամայեցին գնալ:

Եւ ժողովուրդն իբրև տեսին զառողջութիւն մանկանն՝ սկսան փառաւորել և գոհանալ զԱստուծոյ 'ի վերայ սքանչելեացն որ եղև 'ի ձեռն սրբոյ հայրապետին. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ: Եւ Մարկիանոս և աղանգակից-ք իւր այլափոխեալ զինքեանս՝ ելին և փախեան 'ի քաղաքէ անտի. և հետա-

մուտ եղեալ խնդրել զնոսա և ոչ դային։ Եւ 'ի վաղիւն մկրտեցին ըզ-կեդրոն և զԺողովուրդն. և էին ոլք մկրտեցան ոգիք իբրև երիք հազարք և հարիւր։ Եւ սուրբն Մարուգէ գնաց 'ի վանս իւր ուրախութեամբ, և օրհնէր զԱստուած։ Եւ արար կեդրոն 'ի սան իւրում ուրախութիւն մեծ, ջահիւք լուցելովք և բուրմամբ անուշահոտութեաբ, փառաւորէր զԱստուած հանդերձ ամենայն նորակնիք բազմութեամբն։ Եւ յապաշաւ եղև վասն սրբոյն Մարուգէի գնալոյն. յղեաց և կոչեաց զնա. և եկեալ սուրբն Մարուգէ 'ի տուն կեդրոնի, ասէ. Բերէք այսր զգիր կախարդութեան Մարկիանոսի։ Եւ իբրև բերին հրամայեաց այրել հրով։

Եւ այնուհետև բազումք գային առ սուրբն աշակերտիլ Յիսուսի. և խորհեցաւ սուրբն շինել եկեղեցի. քանզի 'ի ժամանակին յայնմիկ ժողովուրդն սակաւ էր և եկեղեցի փոքրիկ։ Եւ ապա սուրբն Մարուգէ կամեցաւ ելանել 'ի վանս իւր. յայն-

ժամ ասէ ցնա Կեդրան որ անուանեցաւն Պաւղոս յետ մկրտութեն. Տէր, երբ եկեսցուք 'ի վանս քո և օրհնեսցուք յեղբարցն: Ասէ սուրբն. Ոչ ոք արգելու զձեզ. յամենայն ժամ որ ոք կամի եկեսցէ: Եւ եղև յետ ասուցց տասանց յարուցեալ Պաւղոս հանդերձ ծառայիւք իւրովք և կնաւ իւրով որ կոչեցաւ Մարիամ, և որդւովն իւրով Յոհաննիսիւ, կամեցաւ ելանել 'ի վանս սրբոյն Մարուգէի, որպէս զի օրհնիլ 'ի նմանէ և յեղբարցն, և դարձցի 'ի տուն իւր: Եւ յայնմ գիշերի պատահեաց մանկանն ցաւ մահաբեր, որ յայնմ ժամանակի անուանեցաւ ցաւն այն Ցաւ Ցակոբեան. և իսկոյն հրամայեցին արկանել զնա 'ի վերայ գրաստու, և պատրաստեաց երթալ: Ասէ Պաւղոս. Գնացէք դուք, և ես և պատանեակս և մայր սորա կացցուք աստէն և տեսցուք թէ զինչ լինիցի պատանեակս: Եւ արարին ծառայքն զհրամայեալսն 'ի նմանէ. և ցաւն ևս քան զևս սաստկանայր 'ի վերայ պատանւոյն: Իսկ Պաւղոս ասէր 'ի մանի

իւրում. Այս մարտ և հակառակու-
թիւն գիւաց է, կամի մեզ խափանել
'ի գնալոյ առ սուրբն։ Եւ ապա ա-
ռեալ զպատանին եդ 'ի վերայ գրաս-
տու. և ինքեանք հեծեալ յերիվարս՝
գնացին։ Իսկ Պաւղոս իբրև եառեալ
զպատանին զի մերձ էր 'ի մահ, գո-
հացաւ զԱստուծոյ և ասէ. Եթէ
կեայ՝ Տեառն կեայ, և եթէ մեռանի՝
Տեառն մեռանի։ Եւ հրամայեաց ծա-
ռայիցն որ ընդ իւր էին՝ երթալ փու-
թանակի մինչ չէր մեռեալ մանուկն։
Եւ իբրև եկին մօտ 'ի վանան, մերձե-
ցաւ փոխիլ 'ի կենացս, և խնդրեաց
ջուր. քանզի յոյժ հեղձեալ էին
փոշք նորա. և նոյն ժամայն աւան-
դեաց զհոգին։ Էին ոմանք որ ա-
սէին, եթէ 'ի կախարդաց եղև այս
պատահմունք. և ոմանք ասէին, է-
թէ գինի արբ 'ի գիշերի և թոյնք
իժից կայր 'ի նմա. և եթէ այսպէս
եղև՝ զՀշմարիտն ոչ ունիմ ասել։ Եւ
ծառայքն ունելով վաղվաղակի դառ-
նալ 'ի քաղաքն՝ զի պահեսցեն զմա-
նուկն, և նա ասէ ցնոսա. Մինչ ոչ
եմ տեսեալ զսուրբն Մարուգէ և

զեղբարան, ոչ դարձայց 'ի տուն. և
ինչեալ 'ի գրաստէն գնացին ոտիւք
իւրեանց: Եւ հրամայեաց միւսմ 'ի
ծառայից իւրոց բառնալ զմանուկն,
և տարեալ եդին առաջի սրբոյն Մա-
րուգէի, և ասեն. Ահա չեղաք ար-
ժանի ուրախութեամբ գալ առ ձեզ
հանդերձ որդեկաւս մերով. բայց
արդ տամ զդա 'ի ձեռս քո սրբու-
թեանդ. գիտեմ զի զամենայն զոր
ինչ հայցես դու յԱստուծոյ՝ տացէ
քեզ: Եւ սրբոյն ոչինչ ուշադրա-
նեալ, քանզի դարձեալ տեղի եգիտ
էարն, և դառն աղանդակիցքն Մար-
կիանոսի զանպիտանն խօսէին:
Յայնժամ յղեաց սուրբն Մարուգէ
առ սուրբն Յակոբ զի եկեսցէ 'ի
վանս անդր վասն բժշկութեան ման-
կանն. քանզի նմա իսկ տուեալ էր
շնորհք բժշկութեան ցաւոյն այնո-
րիկ:

Իսկ սուրբն Յակոբ իբրև լուաւ՝
յարեաւ վաղվաղակի հանդերձ հի-
պարքոսաւն որ էր եղբայր Պաւղո-
սի, և այլ մեծամեծօքն, և եկն՝ վասն
Թաղելոյ զմանուկն: Եւ հրամայեաց

ժամ հարկանել և ժողովել զկրօնաւորսն ամենայն. և առեալ զմանուկն 'ի վերայ բազկացն՝ եդ զնա յաշտիճան բեմին. և ինքն խոնարհեալ եկաց յաղօթս և ասէ. Տէր մեր Յիսուս Քրիստոս, բժիշկ բարեաց որ ելեր 'ի բնակութիւնս մեռելոց և բժշկեցեր զհիւանդացեալ բնութիս մեր, որ անկեալ կայաք 'ի մահիճս մահու, կանգնեցեր զմեզ 'ի գլորմանէ և խոստացար տալ մեզ զկեանս անմահականս, զձայն կենդանի, որ արձակեցեր բարբառ 'ի գերեզմանն, և հրամայեցեր մահու դարձուցանել զՂազար չորեքօրեայ 'ի կենդանութիւն: Լուր, տէր Աստուած, պաղատանաց ծառայի քո և դարձո 'ի կենդանութիւն զպատանիս զայս. և զոր արարեր 'ի ձեռն Եղիայի և Եղիսէի, արա այսօր առ մեզ. ոչ թէ վասն արժանեաց իմ Տէր, այլ վասն անուանդ քոյ սրբոյ զի փառաւորեսցի, և զօրութիւն խաչի քո մեծասցի ընդ ամենայն ազգս և ազինս և լեզուս. ծանիցեն զքեզ ամենեքեան որք մոլորեալ են և թիւ-

լեալ և ոչ ճանաչէն զքեզ թէ դու
ես Աստուած Ճշմարիտ, որ սպա-
նանես և կեցուցանես, իջուցանես 'ի
դժոխս և հանես 'ի դժոխոց։ Եւ 'ի
կատարման աղօթիցն բղխեաց ար-
տասուս յաչաց սրբոյն և եթաց զգե-
տինն առաջի սրբոյ սեղանոյն. և ա-
ռեալ զկաւն որ յարտասուացն՝ եդ
'ի վերայ փողոց մանկանն, և նոյնժա-
մայն շարժեցաւ։ Եւ սրբոյն բուռն
հարեալ զձեռանէ մանկանն, ասէ.
Յոհաննէս, արի կաց յանուն տեառն
Յիսուսի Քրիստոսի։ Եւ նոյնժա-
մայն մանկանն բացեալ զաչսն, տե-
սեալ զժողովուրդսն և զսուրբն՝ և
նստաւ 'ի վերայ աշտիճանի բեմին,
օրհնէր զԱստուած և գոհանայր
զպարգևողէն այնպիսի շնորհաց։

Հիպարքոսն և ամենայն ժողովն
իբրև տեսին զեղեալսն՝ յահի մեծի
եղեալ, պատկառէին 'ի տեսլենէ
սրբոյն. քանզի ոչ տեսանէին զնա
որպէս մարդ, այլ որպէս հրեշտակ
Աստուծոյ. աղաղակեցին միաբան
ձայնիւ և ասեն. Սուրբ սուրբ սուրբ
Տէր զօրութեանց, լի են երկինք և

երկիր փառաք քո։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ եհատ զնա ցհայրն և ցմայրն. և նոքա աղաչէին առ իւր ունել։ Իսկ սրբոյն պատասխանի տուեալ ասէր. Ոչ է պարտ թողուլ զդա առ իս, քանզի տղայ է հասակաւ, ուստի և 'ի չափ երիտասարդութեան հասցէ։ Եւ արարին յաւուր յայնմիկ տօն մեծ, և պահեալ զօրն ողջոյն՝ ոչինչ ճաշակեցին։ Եւ 'ի վաղիւն մեալ յեկեղեցին մատուցանէին պատարագ, և բաշխէին հաւատացելոցն զփրկական խորհուրդն. և հրամայեաց աղ և հաց ճաշակել. և ոչ անկանէր 'ի մտաց նոցա սքանչելիքն զոր տեսին։ Յայնժամ օրհնեցան 'ի միայնակեցացն և 'ի սրբոյն Մարուգէէ. և յարուցեալ սուրբն Յակոբ հանդերձ հիպարքոսիւն և ամենայն բազմութիւն՝ գնաց 'ի քաղաքն իւր. և համբաւ սքանչելեացն և յարութիւն պատանւոյն ընթացաւ ընդ ամենայն կողմանս դաւառին որ շուրջ զքաղաքաւն, և որ 'ի բացեայ լուեալ էին՝ օրհնութիւն մատուցանէին Աստուծոյ տուո-

ղին այնպիսի շնորհաց : Եւ 'ի գալ նոցա 'ի քաղաքն՝ ելին ընդ առաջ նոցա արք և կանայք , երիտասարդք և կուսանք , ծերք և տղայք • բերէին առ նա բազում հիւանդս , և բժշկեաց զամենեսեան 'ի շնորհացն : Նաև զբազում նշանս և զխստամբերութիւն ո՞ կարէ պատմել :

Եւ ապա ՄանաՃիրհ ուշտունի յաւարի առ զվիՃակ սրբոյն , և դնէր զերկոտասան սարկաւագունսն 'ի բերդին Մանազկերտ կոչեցեալ : Իսկ նորա հետամուտ լեալ՝ իբրև լուաւ զհամբաւ գուժին , եկն եհաս զորուն և նահապետին ՄանաՃրհի : Եւ տեսեալ ՄանաՃիրհ՝ անկանէր յոտս երանելւոյն և խնդրէր թողութիւն • և նենգիւ խոստանայր տալ զգերեալսն՝ պայման եդեալ առ վաղիւն : Եւ սրբոյ հայրապետին երկու օթս արարեալ գայ փութանակի առ պայման ուխտին խնդրել զսարկաւագունսն : Իսկ անօրէնն ՄանաՃիրհ՝ ատունգանել ոչ ակն ածէր յերանելւոյն • ծովասոյզ արարեալ հեղձուցանէր զգերեալսն : Իսկ իբրև

ետես սուրբն Յակոբ զգործ ա-
նօրինին, յարտասուս եղեալ լայր
դառնապէս և գոչէր առ Աստուած.
և բացեալ զսուրբ և զսոսկալի բե-
րանն՝ անէծ զՄանասէիրհ և զերկիրն
ուշտունեաց: Եւ ծածկեաց զհրա-
կերպ դէմն, գնաց 'ի սահմանաց
անտի հանդերձ իւրայովքն:

Եւ հասեալ 'ի գաւառն Աղձնեաց
հանդէպ գեղջին Բելու կոչեցեալ, և
անհեատանայր 'ի տեսութենէ երկիրն
ուշտունեաց. ապա հարցեալ ցաշա-
կերտսն, թէ դեռ ևս երևի՞ գաւառն
ուշտունեաց. և նոքա ասեն՝ ոչ: Ա-
պա խորհուրդ 'ի մէջ առեալ ողոր-
մեցաւ առ յապա ժամանակն. թա-
ւալեցոյց երկոտասան վէմ և հի-
մնարկեաց. և ապա տարածեաց
զհրաշալի բազուկն և լուսթեամբ
աղօթէր, և առնոյր զխնդրելին որ-
պէս զՄովսէս և զԱննա: Եւ հնա-
զանդեալ ապառաժն վաղվաղակի
ջուր բղխեցոյց. և տեսեալ աշակերտ-
ացն՝ սքանչացան. և անկեալ յոտ-
սին համբուրէին, և տային փառս
բարերարին: Եւ սակաւ մի զտեղի

առեալ՝ զգաւազանն տունկ արկա-
նէր, և յուղի անկեալ սրբոյն՝ գնաց
'ի տեղի իւր։

Ազդ եղև աքանչելիքն առ տուրքն
Արիստակէս հարազատ իւր. բա-
զում պաղատանս արձակէր վասն
աշխարհին ուշտունեաց, լուծանել
'ի կապանացն և զգիրսն տալ զիսըն-
դրելին, զոր ինքնախօս արարեալ
Զգօն կոչեցեալ։

Եւ նորա կացեալ 'ի մարմնի ամ
մի՝ փոխի առ Քրիստոս, որ և զՀրեշ-
տակս զարմացոյց. զի այսպէս յի-
շատակաւ էլ նա յաշխարհէս։ Յա-
ւուր միաշաբաթու ասէ ցեղբարսն.
Այսօր տեսի զՀրեշտակն որ հրա-
վիրէր զիս ելանել 'ի մարմնոյս և
մտանել առ Աստուած։ Եւ հրա-
մայեաց հսկել զգիշերն ամենայն մին-
չև 'ի ծագել արեգականն. և մտա-
նէր 'ի ժամ պատարագին և կատա-
րէր զփրկական խորհուրդն։ Եւ տե-
սեալ զՀոգին տուրբ աղաչէր խա-
ղաղութեամբ անցանել ընդ իշխա-
նութիւնսն և ընդ պետութիւնսն.
և կատարեալ զանարատ պատարա-

գին, եւ անէր լուսատեսիլ եւ զուարթ երեսաք։ Զոր տեսեալ բազմութեն յարտասուս եղեալ. եւ հրամայէր լռել եւ սակաւ մի կերակուր առեալ սկսաւ աւետարանել նոցա այսպէս. Արք եղբարք, լուարուք ինձ, յիշեցէք զպտուղն 'ի գնալ նախահօրն, որ և Աստուծոյ ջան հատոյց և սրբոց նորա. և փոխանակ անախտ դրախտին ժառանգեաց զերկիր անիծաբեր։ Յիշեցէք զհալածանս մարգարէից, որք սպանան յընտանեաց իւրեանց։ Յիշեցէք զկանայս ոմանս հալածեալս վասն անուանն Տեառն, որք զփառս աշխարհիս արհամարհեցին, և զսէր սորին որպէս զխաղս մանկտուոյ ոչինչ համարեցան. և բազում և մեծամեծ ՀԳնութեամբ եւ յաշխարհէ։ Յիշեցէք և զամենայն դասս առաքելոց և մարգարէից և սրբոց մարտիրոսաց և զամենայն սրբոց, որք սասաիկ և զանազան տանջանօք վասն Քրիստոսի զանձինս 'ի մահ եդեալ փոխեցան 'ի Քրիստոս։ Յիշեցէք զնոյն ինքն զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զողորմածն,

զբարեբարն, զանմահն, և զնորին համբերութիւնն վասն մեր մեղաւորացս 'ի հակառակութենէ անօրինացն. զանարգանաց և զձաղանաց զմահ կրեաց այնչափ այպանօք. 'ի մէնջ ապախտաւորեալ երախտաւորն մեր, ոչինչ ըստ արժանեաց փոխարէն հատուցման ընկալաւ: Բայց աղաչեմ մի անտես առնել զերախտիս բարեացն Քրիստոսի, այլ մնացէք 'ի վարս ուղղութեան, քանզի կալոց եմք առաջի բեմի նորա առնուլ վարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց: Արդ ընկեցէք զչարիս յանձանց ձերոց, և մի խնայէք 'ի մարմինս, զի օտարացուցիչ է յԱստուծոյ: Եւ արդ ես անպարտ եմ յարենէ ամենեցուն ձեր. զի ոչ դադարեցի զտիւ և զգիշեր պատմել և ուսուցանել և հաստատել յերկիւղ և 'ի սէրն Աստուծոյ: Քանզի գալոց են յաւուրս ձեր գայլք յափշտակողք և սուտապատում վարդապետք, որք ոչ խնայեն 'ի հօտն Քրիստոսի: Եւ արդ յամենայնեղութիւնս ձեր գոհացող լինիջիք և հաստատուն կա-

ցէք պինդ ունելով զխրատս ուխտի
իմոյ, անդադար խոկալով 'ի սէր և
յերկիւղն Աստուծոյ. զի զվարձս
համբերողացն ընկալջիք 'ի Քրիս-
տոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք
յաւիտեանս:

Եւ ասացեալ զամէնն՝ օրհնեաց
զնոսա և ծունր կրկնեալ երիցս խոս-
տովանելով զամենասուրբ զԵրրոր-
դութիւնն, և կողմնեալ աւանդեաց
զհոգին 'ի Քրիստոս և հոտ անոյշ
բուրեաց, և լոյս 'ի վերուստ եր-
թևեկս առնէր 'ի վերայ սուրբ նըշ-
խարացն. և բազում լալիւն լինէր
ժողովրդոյն զի զրկեցան 'ի սուրբ
հովուէն: Եւ կատարեալ զկարգ ա-
ղօթիցն, եդին 'ի գերեզմանի 'ի
ներքսագոյն և յանձեռնհաս 'ի յա-
փըշտակողաց, որ կայ մինչև ցայսօր:

Եւ զերիս ամս ընդ անիծիւք ե-
կաց երկիրն ուշտունեաց, մարդ և
անասուն անծնունդ, և պտղաբերքն
գօսացեալք, և անչափ գեղեցկու-
թիւնք խամրացեալք, որպէս ասաց
ոմն 'ի պատմագրացն, եթէ նախ
քան զանէծն Յակոբայ՝ նման էր

երկիրն ուշտունեաց դրախտին Ադե-
նայ։ Եւ ապա խորհուրդ առեալ ոմն
յազգէն Մանաճրհի, ոմանք քոյր
ասեն և ոմանք հօրեղբօրորդի,
քանզի Մանաճիրհ սատակեալ էր,
յուղի անկեալ գնաց 'ի խնդիր նըշ-
խարաց, խնդրել զբժշկութիւն ազ-
գին և գաւառին. յոյժ աշխատաբար
զծունկքն և զերեսն ընդ գետինն
քարշեալ, մինչև քերթեալ լինէր. և
հասեալ 'ի տապանն անդադար ա-
ղօթիւք ողբայր զքառասուն օր։ Եւ
ապա լուեալ պաղատանաց նորա
սրբոյն Յակովբայ, ողորմեալ պար-
գևէ նմա ման, որպէս կենդանի,
մատուցեալ զանարատ և զսուրբ աջն
հատեալ, տուեալ նմա զկոճ մա-
տինն։ Եւ սպասաւորքն սքանչա-
ցան, և օրհնեալ 'ի տեսլեանն զաշ-
խատութիւն նորա՝ արձակեաց զնա։
Եւ նա ուրախութեամբ հասեալ
'ի գաւառն Աղձնեաց՝ 'ի բլուրն
Երկաթահանս՝ աւետիս մատուցա-
նէր գաւառին։ Իսկ յորժամ հասաւ
համբաւ աւետեացն, գոհ տուեալ
հաստանէին բազմութիւն ժողովրդն,

որ կոչի Առաքելոց բլուրս. զի և անտի գնային աւետարանքն և գունդք գունդք զմիմեանսն փարէին, և անկանէին յոտս բերողին զնշխարսն։ Եւ կայ մինչև ցայսօր կարկառ մանր քարանցն, որ ունի զլթիւ համարոյ եկեղեցոյ Ժողովրդեանն։

Եւ առեալ տանէին զնշխարսն զառ 'ի վայր լերինն յերկիրն ուշտունեաց, և նոյնժամայն արդեան. քանզի ոչ հնար եղև ումեք շարժել՝ ոչ գրաստով և ոչ մարդով, և 'ի զարմացման կային բազմութիւնքն զերիս աւուրս։ Եւ 'ի տեսլեանն հրեշտակ Աստուծոյ երևեալ՝ հրամայեաց ելջուցանել 'ի տեղւոջն. և նկատեալ 'ի ձորակէն տեղի մի բարձրաւանդակ, և անդ հիմնարկութիւն առնէին սրբոյ եկեղեցւոյ։ Եւ ելեալ համբաւ սուրբ աջին, և անդր հասանէին 'ի մօտաւորաց և 'ի հեռաւորաց ընծայ բերեալ. և առնուին ողորմութիւն բժշկելով յիւրաքանչիւր ախտից և 'ի հիւանդութեանց։ Եւ սահմանն ուր բնակեցաւ սուրբն Յակոբ՝ ընդ Թրակացւոց իշխանու-

թեամբն էր, որ այժմ կոչի Մոգս։ Իսկ թագաւորն Հայոց որ էր յաղ-
գէն արծրունեաց՝ի թոռանց Աբգի-
մելէքայ (5) որդւոյ Սենեքերիմայ ար-
քային ասորեստանեայց տայր գանձս
և գնէր զտեղին, և շինէր փառա-
զարդ եկեղեցիս, կարգէր քահանայս
և կրօնաւորս՝ի փառաբանութիւն
ամենատուրբ Երրորդութեանն. այժմ
և միշտ և յաւիտեանս։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 Միւս օր • պարագրէալ։
2 Միւս օր • լարայ։
3 Միւս օր • ղէարիպուրան։
4 Միւս օր • ուշ եդեալ։
5 Միւս օր • Աբդլմելէքայ։

ՎԱՐՔ

Ս. ԻԼԱՐԻՈՆԻ

ՎԱՐՔ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ

Ի Լ Ա Ր Ի Ո Ն Ի

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԿՐՕՆԱՒՈՐԻ

ԵՒ ՀՕՐ ՎԱՆԱՅ

Ի Պաղեստին քաղաք մի՛ն է ոչ նուաստ քան քառասուն և հինգ ստադիոն 'ի բաց ունելով 'ի Գազայէ, որ մատոյց մեզ զայս զմեծ զանապատի զսքանչելիս և զբազում յառաքինութիւն զԻլարիոն. ոչ եղեալ 'ի հարց բարեպաշտից, այլ ըստ բանի վարդի որ 'ի փշոց, 'ի խրատուց՝ ոչ անման համայն զվարժուն յինքեան ծանուցեալ. և զայս ապաքէն ըստ աստուածային խնամոցն լինելով. զի այսպիսի բնութիւն բարոյ ինչ և ոչ իրաց բանից մեղանչել։

Արդ առաքեն զնա ծնողքն յԱղեքսանդրիա ըստ տուփման իմաստու-

թեան. իսկ նա յուսումն անկարկէր ընդ մանկանցն՝ մանուկ ևս և ինքն գոլով. իսկ զբնութեան նորա զքաջութիւն, զզարդանան իսկ և զգուշութիւն յայտնէր գործն, որպէս նշանագիր ինչ մաքուր որոց 'ի նմանէ գործելոցն բացերևելով. զի զտեսարանս թէատրոնից նմա, և զՔանս ձիընթացից, և զգազանաց գօտածութիւնս, և զշարախառն գրկարկութիւն մանկագունից, և գրեթէ զամենայն ուռնայն զբաղմունս և ըզպատրանք և զփափուկ անձանց երկընչոտութիւն առ ոչինչ համարելով. և զայս ոչ վայրապար, այլ վասն առաւել փափագելոյն յառաքինութիւն. և ունէր 'ի սկզբանէ ձնայեցումն ակինն առ խոշոր վարս։

Այնուհետև այսպէս վերահանելով, և զայսպիսի ստուգութեան առաքինութիւն իսկոյն 'ի գրոյն վերերևեցուցանելով առ վարսն Անտոնի որ համբաւէրն մեծապայծառ՝ քարշէր անձն Իլարիոնի, և 'ի սէր առն կապէր. և հոգ էր մեծաբար նմա եթէ զիարդ տեսցէ զԱնտոնիոս.

փութայր գնալ առ նա և գտանել զնորա մեծագոյն առաքինութիւնն որ առ 'ի բաղմաց համբաւէր. թէր. ևս իսկ զայն ոչ հաւատի մտել համարելով իբրև զբազումս զՀշմարտութիւնն, այլ առաւել դնել գործելոցն միշտ և հրաշափառագոյն։

Եւ տակաւին յայնմ հետէ և աստուածայինն Անտոնիոս յայնժամ զմիտն ազատ և զանձն քաջազան. և ինքն լսելով զմանկանէն, և անդէն 'ի բոլբոջէն թէ որպիսի լինիցի տուն կն զմտաւ ածեալ, կամ մանաւանդ ներքսային աչօք տեսանելով զկնի երկու աւուրց գալոյ նորա 'ի միայնկեցականն՝ մաքրեաց զնա և կատարելագործեաց կերպիւ. և զի ստէպ գայր ամբոխն անդ Անտոնի վասն, խռովեցուցանել զլռութիւն զոր փափաքէրն, և մաքուր զնա առնուլ ոչ ներէին. իսկ նա 'ի ներքսագոյն անապատն հեռանալ ելն խորհէր։ Իսկ Անտոն զԻլարիոն կոչելով ասէր. վերադարձիր, որդեակ, 'ի բարեպաշտութիւն և 'ի ջանս առաքինութեան մինչև 'ի վախճան, և 'ի համբերու-

թիւնայսոցիկ և'ի ժուժկալութիւն, զի զերկնից արքայութեանն առոգիակ և քաղցրագոյն զպտուղն կըրթեսցեն։

Զայս ասելով մաղեղէն ևս պատմուճան նմա և մաշկեղէն տուեալ վերարկուս, և 'ի յիւր առն հայրենեացն վերատին գնալ առաքէր զնա հանդերձ եղբարբք ոմամբք այց առնել. ապա նա իմն որպէս էր ինքնադէտ առնէր, և 'ի ներքսագոյն անապատն մեկնէր և Իլարիոն 'ի Պաղեստին վերատին երթայր. և գտանէր մեռեալ զծնողսն և զգոյսն նմա թողլով ոչ չափով. իսկ ինք ոչ վայելուչ համարելով զբաղումն, առ 'ի մեծամեծս տեսանելով զայնոսիկ ոնանկաց բաշխէր՝ փոյթ առնելով զերկնից գանձարանն ատանալ։

Ամք հասին յորում գործէր զայսոսիկ՝ էր հնգետասան արդարոյն. և յետ այսորիկ տենչայր անապատի, և գայր 'ի փոքր ինչ այր յիսուն և երկու ստադիոն 'ի քաց ունելով 'ի տեղւոյն որ Մարիումայն անուանի, ուր աւազակաց դեգերանք և սովոր

էին անդ ժողովել։ Ապա ոմանք 'ի սիրելեաց վասն աւազակացն 'ի բաց գնալ 'ի յայրէն խորհէին։ Իսկ Իլարիոն զուարթաբար ասէր ցնոսա. Ահաւոր է հոգւոյ մահ. իսկ այս որ մարմնոյ է, ոչ է դժնդակ ինչ, ուր և ուստի երբէք հասանէ գալ։

Իսկ էր Իլարիոնի մաղեղէնն պատմուճան, և մահիճք՝ երկիր. և մորթն այն վերարկու վերոյ իւր կալով զոր 'ի վերադառնալն 'ի Պաղեստինէ որպէս և ասացաք, մեծն Անտոն էառնմա։ Իսկ կերակուր հնգետասան խխադաս, որ է չոր թուզ, և էր ժամանակ կերակրոյն յորժամ տիւն խոնարհէր։

Զայս տեսեալ որ իսկապէս պատերազմողն է մարդկան, կրճատէր զատամունսն և բնաւ ոչ կարէր բառնալ. սակս այսորիկ և արկածս բազումս առ նա՝ առնելով, բազումս ամենայն ուստեք մակածելով զդիւրժողականն, և 'ի ձեռն ամենեցուն պարտեալ լինէր. և ոչ այնպէս 'ի բաց կայր. զի անպատկառ չարութիւնն և առ մարտ առաքինութեան

յանդուգն է յոյժ և դժուարարդել. աննուազ պատերազմ նմա բաղձալով ստորարկանել 'ի ձեռն նախանձոյ սրեալ: Ապա դարձեալ արկանէր և դարձեալ 'ի բաց վազէր. և 'ի ձեռն ցանկութեան հզօրաբար կռուեալ պատերազմէր ընդ նմա, զոր 'ի բնութէ և յանտեղեակ խորհրդոց մակաբերէր: Իսկ նաև դարձեալ ընդ նմա հարկանէր. և առ վէճն համբերութեան յենոյր զոտս քաջաբան ընդդէմ ջանալով. զի հարկանէր զլանջս իւր Իլարիոն որպէս թէ 'ի չարիս զբօսնու, և անտի զչար խորհուրդն փախստական առնէր. և գեղէր զմարմինն 'ի գահ ծարաւոյ և 'ի կարօտութիւն կերակրոյ և յայլ թշուառութիւնս. յաւելագրէր և զասացեալն 'ի Դաւթէ. Ես 'ի նեղել նոցա քուրձ զգենուի, և պահօք խոնարհեցուցանէի զանձն իմ. թերևս ապա 'ի գոգս աղօթք իւր դառնայր, քանզի աղօթէր և զԱստուած կարդայր 'ի մարտակցութիւն: Մինչն բոլոր վայրիս ուտէր, և զայն զերից աւուրբք յառաջ ա-

ծելով, իբր զի մի լուծուցն մարմնոյ կրել: Սաղմոսէր ուժգնաբար, ուրեմն և սաղարթ ժողովէր յարմաւենեաց և սիրոյս հիւսէր. որպէս զի մի յոյլ և ունայն գտցէ Թշնամին զնորա անձն և չար խորհուրդս 'ի նմա սերմանեսցէ, և զմաքուրն զայն պղտորեսցէ զտրամախոհութիւն:

Ապա ամենայն ուսաւեք տարակուսեալ Թշնամին, և յայտնի զինքն առնէր. և զորս նախ էարկ 'ի բաց հարկանէր զԻլարիոնէ, և գայր յայլ գժնեայ պատրանս բազմապատկոյն: Մանկունս փափուկս և կանայս և առիւծ կեղծաւորէր. երբեմն ձայնէր իբրև զտղայ, և երբեմն որպէս կին կոծէր և ողբայր, և այլ երբեմն ըստ նմանութեան առիւծոյ մնչէր և զատամունն կափկափէր, և բազում երևոյթքն և պարսք մեքենայիցն. սակայն ունայն լինէր առ ճգնաւորն:

Իսկ նա ոչ մոռանայր զայն թէ յումմ ումեքէ է և ընդէր. և ոչ իբրու յետ գառնայր և վհատէր յեղեալոցն. այլ զի ոչինչ այլ մերձ ունե-

լով զգէն որ հակառակ կալոյն պի-
տոյ էր, ապա զնշանն ասեմ զաս-
տուածային խաչին՝ զայն քաջաբար
ընդդէմ նմա արկանէր. ապա ըստ
այնմ գիշերին կարծիս տայր 'ի կառ-
սպիտակ ձիոց տեսանել 'ի վերայ
դլխոյն մեծամեծ ճայթմունս բամ-
բասանաց ընդդէմ իւր բերելով և իբր
յերկիր կացուցանելով զայն կլա-
նել. և նա 'ի նոյն զմովսէսեանն եր-
գէր. Երգեսցուք Տեառն զի փառաւք
է փառաւորեալ. և զոր 'ի կարգի
երգոցն: Եւ իսկոյն զվերջին պար-
տութիւնն ընկճեալ, և ոչ այնպէս
սպառնայր զարկուածս նեռաձգու-
թեանն, այլ կին նմա 'ի նինջ քնոյ
ևս խտխտելով առ 'ի հեշտութիւն
ցուցանէր, և երբեմն կերակրոց զա-
նազանութիւն ցուցանէր. երբեմն
աղօթելով նորա գայլ երևէր մռընդ-
ջելով և աղուէս. էր և այլ ինչ յոր-
ժամ այլ ինչ ամենայն ուստեք բիւր
դիմօք և կերպիւք կեղծաւորէր. զո-
մանս առ խաղալեօք, և զոմանս առ
երկեցուցանել. զի կամ հիացուցա-
նէր կամ առ ներուն հարթ իջուա-

ցէ լուծանելով զՀեպն։ Իսկ նորա բազմաց 'ի դէպ էր զգուշութեանց նոցին. այլ էր կարծրագոյն մանաւանդ 'ի խստավարութիւն տալով զինի. արտաքոյ այրին սակաւիկ տաղաւար եհար 'ի լայնութիւն չորս ոտն, և 'ի բարձրութի երիս թիզս. 'ի նմա արգելլով զինք ինն և տասն ամս բերելով հասակին մինչև 'ի քսանն մերձենայր առ 'ի յարևոյ կիզելով, և ընդ ձմերայնոյ վայրենութեան մարտնչելով. զի ոչ 'ի սառամանեացն յաղթեցաւ, և ոչ 'ի խորշակէն պարտեցաւ։ Նա իսկ և յամին մի անգամ զՀեր գլխոյն հարթէր. և էր նորա ժամադիր 'ի գալուստ պաշտելի պասեքին և 'ի պայծառ օր յարութեանն. 'ի մահիճս պիտոյանալով 'ի փայտից յարմարեալ, և ոչ փոխէր զմաղեղէն պատմուճանն զայն, մինչև անցանէր ժամանակն և բնաւին հերձուտէր. որ և ոչ ևս այլ ծածկել զմարմին իւր կարող լինէր, այլ և ոչ լուանալ զնա կամ 'ի բաց դնել արժան առնէր ասելով. Աւելորդ է խնդրելն մաքուր մաղեղէն։ Այսպա սկսանելով

որպէս ասացաք զՀգնուԹիւնն, հինգ և տասն խսխագայս միայն, և զայն առ երեկոյին յառաջ գալն։

Բայց ԹՇնամին 'ի ձեռն մանկուԹեան մարմնոյ 'ի վերայ նորա յառնելով մինչ գեռ ևս մանուկ էր, և ոչ գեռ ևս մարմնոյն 'ի ժուժկալուԹիւն լինելով, նա 'ի բաց եհան ըզԹիւ չոր Թզոցն, և հում բանջարօք պիտոյանայր, մինչև հասակն 'ի քսան ամս ելանել, և 'ի կարգի զբոլոր չորս ամս ԹրջեալՀ ոսքան հաղորդէր. և զայն 'ի չորս ամսն որչափ քսեսուի միոյ և կիսոյ։ Սակայն 'ի քսան և եօԹն ամէն չոր հացի և աղի պիտոյանայր, և անտի մինչև յերեսուն ամ կենաց իւրոց վայրի բուսովք և եղեգան արմատովք միայն զկենացն պատճառն առնոյր. և անտի մինչև ցհինգ ամն նոմա լինելոյն, իբրու Թէ յերեսուն և հինգ լինելոյն՝ հաց գարեղէն էր կերակուր նոմա, և այնպէս 'ի նուկՀոյ չափելով. և զայս յայն սակս, վասն զի բազում էր նըւաճումն մարմնոյն. այսպէս և ափաճանելին խոշոր և անարուեստք ա-

մենայն. նմին իրի վնասէր նմա ակն, և զաչացաւութիւն մատուցանէր նմա. և ոչ միայն այս, այլ և պէսպէս չարչարէր զմարմինն, և ամենայն ուստեք չարաչար նմա վտանգք բերէր, յաղագս այսր սակաւ մի ձիթոյ պիտոյանայր՝ զոր արկեալ 'ի բանջար կերակրէր. մինչև արձակեաց զվաթսուն ամն յոսպն և պտուղ մրգոց և յայլ ոլոռունս կերակուրս և ոչ սակաւ մերձենայր. և վաթսուն լինելով ամաց, և նա յամենայնի ունել զհաց քսան ամ, մինչև եղև ութսուն ամաց. յորմէ կերակրէր հաց 'ի հինգ գրամակշիռ ընդ աղեր 'ի խառն բանջարոյ:

Տակաւին ոչ գիտեմ ո՞րպէս պարզագոյն ունել բանս յաղագս ժուժկալութեան փափագելոյ. և ոչ բնաւ առնուլ և նախայափշտակեալ ուրեք զկատարած նորա. զի ահա դարձեալ վերակոչէ զմեզ ունել զնրացն զհետևումն և զոր 'ի կարդին զուղղութիւն առն պատմել:

Ութեատասն արդեօք լինելով ամս, և զտաղաւարն զոր երանելին ձե-

ռամբ իւր կառոյց, աւազակք կա-
ցեալք խնդրէին զնա զբոլոր գիշերն,
և իբրու թէ ըմբռնել զսուրբն ապա-
քէն առնէին, սակայն ունայն լինէր
ջանք նոցին. քանզի առաջի աչաց ու-
նելով զխնդրելին, և ոչ տեսանէին,
Աստուծոյ զծառայն իւր ևս պար-
փակել ախորժելով, իբրու ոչ ան-
երգելի ինչ եցէ և 'ի վերայ դոցա ա-
սել զաստուածապատումն մարդա-
րէին յԵսայեայ. Շօշափեսցեն զպա-
րիսպս որպէս կոյրս, և իբրու ոչ գոլ
աչաց շօշափեսցեն:

Իբրև էանց գիշերն և եկն տիւ,
տեսանէին զսուրբն մերձ իւրեանց
և առ ինքեանս էապէս, և զարհուրմն
կալաւ զնոսա, և տարակոյսք
որպէս 'ի ձեռս 'ի ձեռն նոցին գոլով
զամենայն գիշերն և առաջի աչաց
կալով և բնաւին ըմբռնել ախորժելով
անտեսանելի էր. ապա 'ի միտ
առին 'ի նոյն աստուածական իմն զօ-
րութիւն լինել զնոցին աղաչել ըզ-
ձեռան և ունայնացուցանել զներ-
գործութիւնսն. ապա իբրև առ
կատարեալս նմա և զբարեկամու-

թեան զոյգ խօսելով եթէ յարիցեն 'ի վերայ աւազակք, զինչ առնէիր դու, տեղեկանային: Իսկ նա զուարթաբար ամենեին և հեզ՝ ասէ. Մերկոյ զինչ երկիւղ լեցի յաւազակաց: Եւ նոքա դարձեալ ասեն. Իբրու և ոչ 'ի մերկս խնայէ սուր: Եւ երանելին պատասխանի ետ և ասէ. Զառ 'ի մեռանել պատրաստն ապա և ոչ սուր երկեցուցանէ: Զայսոսիկ լուեալ աւազակացն և աստուածական զօրութիւն առաւել լինել կարծեցին զնրան, և իսկոյն ջերմագոյն եղեն յապաշխարութիւն, և հզօրաբար զղջացուցին զանիրս. ապա և խոստովանեցան զանօրէնութիւնն, և բազումս ասելով Յիշեա և զմեզ, և 'ի նոցանէ աղաղակելով զայս. որով և առ ոտս դարձեալ անկանէին որպէս նախ 'ի խաչին՝ առ աշակերտն Քրիստոսի գթալ յիւրեանս: Սակայն այնպէս հետևէր և այլ բան որ հանդերձեալս է 'ի փառս Աստուծոյ. և Իլարիոն յայտնի առնէ նոցա զիւրն ընտանութիւն:

Իսկ կին ոմն հնգետասան ամս ա-

մուլ գոլով Յերուսաղեմայ մաա-
չի առ սուրբն, թերևս նա յետ որո-
շելոյն յանապատ, զկնոջ գէմս ոչ տե-
սանել բնաւ թոյլ ետ. և բաղումն
կոծէր և արտասուէր հեծեծանկ բե-
րելով գորովական, որպէս ախատա-
ցեալ գոչելով վիճաբանէր առ 'ի յո-
ղորմել իբրև զի արձակեսցէ զամլու-
թիւն իւր: Իսկ նա մարդասիրա-
կան ակամբ նայեալ 'ի նա, ասէ
ցնա. Երթ 'ի տուն քո, և տացէ Տէր
զհայցուածս սրտի քո: Եւ նա հա-
ւատացեալ գայր առ այր իւր խնդու-
թեամբ, և ոչ բաղում աւուրս 'ի մի-
ջի և սաղմն առեալ արդանդ կնոջն
լինի, և մանուկ քաղցրիկ 'ի նմանէ
տեսանիւր 'ի մայրական պէտս ըն-
ծայական: Ամ մի անցանելով կնոջ
ծնանելոյն, ածէ մայրն զմանուկն
առ Իլարիոն. և նա քաղցրիկ նայե-
ցեալ, և օրհնութեան իբրև նորոյ
պտուղ արժանացուցեալ, որոյ ոչ
նուազ ինչ աղօթիւք նորա արդանդ
իւր երկագործեաց, որպէս անձրև
պիտանի լինելով յերկիր ծարաւուտ
առ երկունս իւր յարուցեալ: Ահա

ամք երեք առ երեսուն էր հասակին Իլարիոնի, և զհրաշափառ նշանս զայս եցոյց։

Յետ այսորիկ այլ ոմն կին անուն Արիսաէնէտի 'ի սինկլիտոսաց Էլևթերոսի եպարքոսի ապարանից, կին առն ամպարշտի բարեպաշտաբար բնակակցեալ. կինս այս երից մանկանց մայր լինելով, համայն զերիան գժնդակ ախտ ըմբռնեալ չորեքօրեայ ջերմամբ և գժնդակ չարչարեալս, մայրական աչօք տեսանէր, քանզի ձեռք և արուեստք բժշկականք անգործ մնայր. և 'ի ցաւոցն յաղթեալ յայտնի խոստովանէր կինն 'ի բնական աղեացն մահաւանդ կամ մանկունքն յախտից բոցակիզէին հրով. անյուսացեալ յայլ ամենայնէ առ մեծն Իլարիոն ապաւինէին, և ողբս համայն և երդմունս և արտասուս շարախառնելով, հաւանեցուցանելով զնա 'ի գաղացիան դարձեալ գնալ յայցելութիւն մանկանցն իւրոց. նա ևս գրէ զի քաղաքն ամենայն 'ի կռամոլութիւն չարաչար ախտանայր, և առաւել զի կողմն այն

դժնդակ ախտաժեռեալ. ուստի ոչ նոցա յառաջագոյն 'ի խորանէն և ոչ փոքր մի թոյլ տալ մինչև ելցէ :

Այնուհետև սուրբն յարուցեալ անտի զկնի մարդոյն արևու հասանէր 'ի քաղաքն, և ձեռն դնէր 'ի վերայ ախտաժեռելոցն. ապա և զաստուածային անունն Քրիստոսի կոչելով, զդևան և զցաւսն անբաւս անյայտ առնէր. նախ իմն զքիրան չորացուցանէր զջերմացեալոցն զմարմնոց 'ի բաց հանէր որպէս Մովսէս 'ի վիմէ ջուր երբեմն. ապա և զմանկունսն արագ բժշկէր, կերակուր ախորժականնոցա կարգէր, նշան տալով զայն անսուտ ողջութեանն. և նոքիմբք զկերակուրն քաղցրութեամբ յառաջ ածեալք, և որպէս 'ի քնոյ գիւրաւ այնպէս վաղվաղակի յարուցեալք : Ապա նոքա զյաւերժական զգոհացողութեան Աստուծոյ զհամբաւն ընդ Պաղեստինի համայն և ընդ ամենայն Սորիս արագաբար անցանէին, և ամենայն ախտաժեռելոց բազմութիւնք յամենայն կողմանց առ նա խռնէին աննախանձ և անվարձ ըզբժշկութիւնն առնլով :

Այսպիսի իրագործութիւն վարուց և պաշտամանց բազում՝ 'ի հելլենացւոց արար, իբրու ոչ միայն փոխադրիլ առ բարեպաշտութիւնն որ մեծագոյն գոլով էր բժշկութեան հիւանդաց, այլ և զմիայնակեցական կերպ զգենուլ, թերևս ոչ ուրեք վասն ըստ պաղեստինացւոցն, ուր ոչ էր յառաջագոյն միայնակեցեաց իսկապէս. նախ աստուածայնոյն Իլարիոնի այսրէն գեգերիլ, և բազմաց այնոցիկ ինքնագործ կացոյց սքանչելիս. և ոչ անուն վանից էր 'ի Պաղեստինի և ոչ միակեցաց, նա և ոչ տուփումն առաքինութեան և ոչ ոք վերատրութիւն առ լաւագոյն. վասն զի յԵգիպտոս մեծն Անտոնիոս և 'ի Պաղեստինի աստուածայինն Իլարիոն կոչելով բացափայլեն. ոմն ըղձերական և միւս զմանկութեան ուսնելով զծաղիկ և զառաքինութեան գեղ զվայելչագոյն :

Աստուածայնոյս այսմիկ Իլարիոնի և այլ ոմն կին յառաջ ածի 'ի Յապորոն Կուրուրինոսէ, 'ի տաներորորդ ամի Հասակին զրկեալ 'ի լու-

սոյ, որ և զգոյս իւր զամենայն ծախեալ էր առ բժիշկս և ոչ ինչ օգտեալ. և գտեալ զարագ բժիշկն Իլարիոն, և դիւրաբար առեալ ըստ՝ խնդութեամբ գնաց 'ի տուն իւր:

Յետ այսորիկ և կառավար ոմն 'ի քաղաքէն Գազա 'ի վերայ մահճաց բերեալ առ նա յուսմեմնէ, վերոք դիւական խոցոտեալ այնպէս՝ իբրև ոչ փոքր ինչ տեղի ամբողջ բերելով, մինչ զի անշարժ կայր 'ի մահիճսն, հելլենացի գոլով, սորա միայն զուրացութիւն աղանդոյն տուեալ, ըզվերնադնացութիւն բժշկութեանն փոխանակ առնոյր. և այսպէս ըստ բանի բժշկութեան հոգւոյ և ողջութիւն մարմնոյն հետևէր, իբրև մեծագոյն ետես զբարին անակնուն-ել ինդրոյն:

Զինչ ապա որ ըստ երիտասարդին այնմիկ որոյ անուն Մէսիկա էր 'ի յագարակացն Երուսաղէմի, այնպէս հզօրաբար կապանօք երկաթեօք 'ի վայրենի դիւէն ըմբռնեալ էր, իբրև զի և ոչ կապանք երկաթոյն զօրէր զնա ընտանեցուցանել. այլ

բազմաց յանկարծակի պատահելով
'ի վերայ վազէր, ոմանց ունչս և ո-
մանց զչրթունս և զոմանց ունկն ա-
տամացի խածանէր, և ձեռք և ոտք
'ի շղթայիցն ժանտացեալ էր, և բո-
լոր ամենայն Պաղեստինի տանջեալ
լինէր դաւնագոյն յերիտասարդէն,
և չարաչար անմարանելի և անընդ-
դեալ իբրև նուագարան ինչ և կարծր
զէն բնակակցեալ դիւին ընդ մարդոյն
բացերևելով: Այնպէս հազիւ ու-
րեմն մեքենայիւք ինչ և արուեստիւք
ձեռին ըմբռնեալ խատագոյն կապա-
նօք ածեն առ ամենիմաստն Իլարիոն:
Իսկ նա մարդասէր գոլով, առաջ-
մայն ձեռն եդ 'ի վերայ վայրենւոյն
այնմիկ և ասաց զահաւոր անուանն
Քրիստոսի՝ վաղվաղակի զդևն 'ի բաց
հալածեաց, այնպէս հեշտիւ և դիւ-
րաւ, իբր զի ոչինչ պիղծ և զաղիր
մնալ նշան. այլ ողջ զերիտասարդն
և աղատ յամենայն չարեաց տայր
յընտանիսն իւր. և այլ ոչ ևս նա
չար ինչ կրեաց և ոչ յայլս գործ-
եաց:

Նման էր ջուրց գետոց աքանչելիք

առնս, և զուգահաւասար նոցին բղխէր։ Երբեմն այր ոմն սինկլիտիկոս Աբրիոնոս անուն 'ի քաղաքէն Աքիլլեասայ որ կայ առ կարմիր ծովուն բոլորովիմբ կապեալ 'ի դիւէ լեգէոնէ, և որքան ի՛ցէ սովորութիւն դիւացդ դժնդակութեան՝ առնէին 'ի վերայ նորա զբժշկութեանց հնարս. և յամենեցուն այսպէս անյոյս մընայր. ածին առ սուրբն կապանօք, և ինքն հնազանդէր ծովեզերէն բերեալ. իսկ այսրէն սքանչելին գնէր եղբարցն զքաղցրութիւն վարդապետութեան։ Իսկ չար Լեգէոնն այն կայր ընդ այլոցն յանդուգն 'ի չարիս և յառաջ մատչէր սրբոյն 'ի ձեռն չարչարեցելոյն Աբրիոնոսի այնպէս կալով դիւրաւ կապանօք, զոր սփածեալ և քարշեալ խլեաց 'ի յրմբռնողացն 'ի բաց շարժեալ զբազմութիւնն. և յանկարծակի անկաւ առ Իլարիոն գրկարկեալ զնա յետուստ և 'ի վերայ գլխոյն ելանէր։ Եւ որ մերձ կային գոչէին և ահիւ զի մի՛ ինչ չար արասցէ սրբոյն. քանզի 'ի պահոց և յայ-

լոց առաքինութեանց թարշամեալ էր մարմինն։ Իսկ նա ցածիկ ասէր. թոյլ տուք զընդդիմամարտն դիմել յիս. և հասատեալ զոտն յերկիր էառ զՀերոց գլխոյն Աբրիոնոսի և փոքր ինչ շարժեաց իբրև զաղային կամ զայլ ինչ յոյժ տկարի և դիւրմբռնելոյ և էարկ յերկիր. ապա կնքելով զնա և աղօթս ինչ ասելով յանկարծակի փախատական առնէր զջար լեգէոնն, և զԱբրիոնոս զուարթ կացուցանէր քաջախրատ և իմաստախոհ գոհութիւն տալով Աստուծոյ։

Զկնի այնմ ամի անցանելոյ եկն Աբրիոնոս ցուցանել կամելով թէ ոչ առ անգոհացող անձն եղև բարեգործութիւնն և կամ թէ ոչ ուսաւ առնել զակնդքն բարւոյ, առեալ զկին և զորդիս և ինչս բազումս որչափ կարծէր նմա բաւական լինել՝ի հատուցումն այնպիսի բարեգործութեանց, եկն առ սուրբն ասէալ արդեօք ընդունել զնշխարն՝ թերևս անդիտացեալ թէ զայն մատուցանէ զոր փախչել յայնմանէ ուսաւ Իլա-

ՐԻՈՆ 'Ի ՎԱՂՈՒՑ ՀԵԱՏ ։ Իսկ նա ոչ ընդունէր զայն, այլ ընդունէր զբարս մուտացն պիտանի, և հրամայէր բաշխել կարօտեալոց զայն համայն տալով առ յոլորմունթիւն. բացատպաւորաց յինքեան զօրինակն ցուցանելով, թէ զէն զոր առ Աստուած գնելոյ իւր 'Ի վերս չէ պարտ 'Ի վայր ընչից և ոչ այլ իրի. այլ այս ամենայն իսկ՝ փոքրագեաց և իսկապէս փոքու արժան. իբրու թէ ինքն այսպիսեաց էր աենչացող. ոչ ապա և այսպիսի նշանաց արարող երևէր. այսպէս ուսեալ նա և հաւանեալ, և օրհնութեանց հասեալ ընդ կնոջն և մանկանցն գնաց 'Ի տուն իւր ։

Ի փորձ եկն իսկ այսպիսի աքանչելեաց և քարահատն որոյ անուն Անանոս, որ 'Ի դրացի մուտակայ վանս սրբոյն քար հատանէր, և լքաւ յանկարծակի անդամն. ապա ոչ ոտիւքն իւրովք, այլ մանաւանդ 'Ի ձեռն այլոց ածաւ առ մեծն. և ձեռաց իւրոց վերադնելով, ով աքանչելեացն, միայն աղօթիւք արժանացոյց զնա բժշկութեան. և գնաց 'Ի տուն

լուր, ոչ ուրուք օգնութեան կարօտեալ. և զարուեստս իւր այսպէս նախագոյն անարգել առնէր:

Եւ ոչ զզինուորագլուխն Իտալիկոս քաղաքին Գազայ այնպէս պիղծ սեալով ընդդէմ սքանչելի առն, և այսպէս մանաւանդ, որ և քրիստոնեայ էր և քրիստոնէից բաժնոյն, և կատարէր նա զսովորութիւն ձիրն թացիկ իրաց քաղաքին ըստ օրինին ունելով: Զինուոր էր և այլ ոմն անուն Մարնան'ի կողմանէ ամբարբաշացն Ջանս և ինքն ունելով'ի կռամոլութիւն, և'ի ձեռն պիղծ գործոց կախարդութեան դիւականի զաղփուումն լինէր ուժգին ձիոյն Իտալիկոսի զկառավարականն անգործ կատարել. և Մարնան ունէր զյաղթութիւնն և հպարտանայր. և զգուռողութիւնն ոչ բերելով Իտալիկոսս և ոչ զյաղթին միայն, այլ և զհայհոյանսն նորա և զայպանել հելլենացւոցն հանապազ, և լսելն թէ ո՞ւր է օգնութիւն Աստուծոյն քո Քրիստոսի, առ սուրբն ապաւինէր: Իսկ սուրբն պարկեշ-

տաբար քմծղրեալ ասէ. Ընդէր ոչ տաս զձիսն 'ի սպասս աղքատաց առնել զերան. այլ այսպէս բազում ամօթով ունիս և զտրամողն նախատող։ Ասէ Իտալլիկոս. Ոչ կամաւ առնեմ զայն, և ոչ է իրքն մտօք մերովք. այլ հարկ հրապարակին և օրէնք թագաւորական առ վչտագնութիւն, երկնչիմք զի մի պահանջեսցեն 'ի մէնջ զայն. այլ աղաչեմք հայցել 'ի յարքունեաց դադարեցուցանել։ Մեծն ասէ. Յուլանամ վասն նորա աղաչել և ոչ վայելուչ է համարելով առ Աստուած լինել։ Այլ քանզի իրքդ հայհոյութեան պատճառ է առ ինք լինել, և այլ իբրև որոց մերձ կան աղաչելով, պարտ է և զնոցայն ոչ անտես առնել այնպէս ունել զԻտալիկոսն, լուանալ հրամայէր զբաժակն ջրով որ առաջի իւր ըստ սովորութեանն էր. քանզի խեցեղէն էր, և դնել 'ի ձեռն Իտալիկոսին։ Զայն նորա առեալ ջրովն մաքուր սրակեալ 'ի ձին և ձիավարն ընդ զինուցն և կառացն, զի ամենեքեան կապեալք են դիւթութեամբ

հակառակացն։ Զայն տեսեալ և խոստովանեալ շնորհս Աստուծոյ և Իլարիոնի, առ ժամայն գնայր 'ի տուն իւր, առեալ զՋուրն զայն որ 'ի բաժակն ետես ձիս կապեալս ապականել զամենայն. ապա և պաշտելի նշանաւ խաչին կնքէր և 'ի նմանէ փոխելանէր 'ի վերայ Իսալիկոս յաղթեալն և 'ի յետին ամօթ արկանէր զհակառակամարտան, և բազմաց փրկութեան պատճառ եղև իրքն։

Ապաքէն բաւական բարեաց Իլարիոնի և այսոքիկ եթէ ոչ զոր 'ի կարգին յաւելադրեցից, այլ երկընչիմ մի յանյագութենէ գրոյն փախչելով 'ի յանցանս հեղգաբար անկայց. մանաւանդ առ 'ի յայսպիսի լսողաց զորս 'ի պատմութիւն բարեաց այսպէս առաւել գիտեմ չափոյ. այլ զբազմաց զանց առնելով. և զոր ասեմն բարիոք և աւանդեմ ձեզ պատուել 'ի յաղ զնորա բարին։

Կուսի ումեմն կրօնաւորի վավաշոտ մանուկ տուիեալ, իբրև ոչ է-

հաս տուփանացն, զինչ բերէր առ
'ի գորովոյ մանկեգնութեանն. մոգա-
կան արուեստի տայր զինքն այնպի-
սի տուփանօք անպատուեալ ոչ իր-
նայելով առ ներումն. պղնձի թիթ-
ղըներ լինի և կերպարանէ զոմանս 'ի
գիւաց 'ի ձեռն գրոշածի և բարակ
գերձնով կապեաց. ապա և բանս
ոմանս մոգականս նշանագրեալ փա-
փագողականս որպէս ինք կարծէր
առնել, թէպէտ ամենայնիւ ատելի
ինչ և աննուէր, առ շեմիւք տան կու-
սին փորեալ գաղտ եդ. և առժա-
մայն վազեաց 'ի գիւաց ոյք զախտա-
սիրութիւն բորբոքէին համայն քար-
շէր առ տուփումն մանկան, և չարա-
բար 'ի նմանէ ունելով և թշուառա-
բար կորնչէր հեաւէր և մնայր յայտ-
նապէս. դարձուցանէր զդէմս կրճը-
տէր զատամունս, գալով առ երեան
յատուկ և 'ի թիկունս անզարդ
զարդարելոյն նատէր և զանուն արա-
փողին խստաբար գոչելով: Իսկ մեր-
ձակայքն զգացին զչարէն, և ըզ-
ծանրութիւն նորա և զմոլեկանու-
թիւն տեսեալ հարցանեն. և զամե-

նայն յոչինչ համարեալ՝ ածէն առ սուրբն զկոյսն օգնութիւն գտանել ընդդէմ սատանի փափագմանն։ Հայր սեփհական, ասէն, սատանա իբրև լեգէոնին երբեմն փրկելով զերիտասարդն։ Եւ նորա սատանայ դիւին ելանել, և դէն գոչէր. Ո՛վ բռնութեան, ո՛րքան չարչարեալ անիրաւիմ. հրամայեա ինձ ելանել, ծառայ Աստուծոյ. սակայն այլ ոչ զասր իմ կապիլ'ի դերձան թիթղանն յերկիր ընդ սեմօքն թաղելով եթէ ոչ որ կապեաց զիս մանուկն արձակեսցէ։ Շարժէր այս առ ծաղր զերանելին և ասէ. Իսկապէս մեծ և անմարտնչելիդ, դու զզօրութիւն թիթղանն և անօար դերձնին ըմբռնեալ ես. ընդէր նախ քան յըմբռնելն մըտանել զքեզ մանաւանդ. այլ այնպէս զողջախոհ կոյսն անարգեցեր զարդուք։ Իսկ դէն թաքուցանել կամելով համայն ակամայ խոստովանի գործ լուսոյ առնելով որ յոյժ խաւարեալ էր, և տայ չար գործոյ ճըշմարիտ և լաւագոյն պատասխանի. ասէ. Եւ ոչ մի ինչ իմ պէսք առ

նա կոչելոյ, զոր ունէր այլ դև զը-
ժուարակիր բազում դժնդակագոյն
իմ զզարգանս։ Զայս ասելով չա-
րին, սատեաց նմա Իլարիոն եղեալ
ձեռն 'ի վերայ գլխոյ կուսին, ահա-
ւոր տանջանս ոմանս երևեցան դի-
ւին, իսկոյն հալածեալ փախստա-
կան լինէր. իսկ կոյսն 'ի բռնութենէն
արձակէր, և զարդուք մերձ կացեալ՝
ստգտանէր զնա 'ի յայն սուրբն ըզ-
պարտն, իբրև պատճառ ինք լեալ
մահից դիւին. ապա կուսին ողջախոհ
լեալ և ողջացեալ յուղարկէր առ-
ժամայն ընդ բերողն և ասէր. Եւ
ոչ մի ինչ ընդ մեզ ունել իշխանու-
թիւն չար դիւաց, եթէ ոչ մեք յա-
ռաջագոյն տամք զպատճառ. և ոչ
անբան անասնոց թէ ոչ թոյլ տա-
լով Աստուծոյ. քանզի և առ անաս-
նոցն Յոբայ հայցեալ էառ. և զոր
ըստ խոզեցն յայտնէ աւետարանն՝
ձեզ մանաւանդ ըստ զօրութեան
տուաւ առ 'ի Քրիստոսէ տուրս վան
նորա կոխել մեզ 'ի վերայ օձից և
կարճաց և զամենայն զօրութի թըշ-
նամւոյն։

Արդ ունէր իմն այս այսպէս, և այնպէս սիրեալքք ամենայն առնուին զառն սքանչելիսն. Եհաս իսկ համբաւ նորա մինչև ցԹագաւորս. մարԹէր այս և առաւել ընդ կողմ երկրի 'ի սակաւ ժամս անցանել և յայտնի լինէր և հռչակէր եԹէ չար և եԹէ բարի. Թէպէտև ոչ Թագուցանել կամէր զայն, այլ նա 'ի բերանս բազմաց երգել առնէր։ Քանզի յաստացելոցն Կանդիտատոն ոմն որ մանաւանդ ծանօԹ էր և մերձակայ Թագաւորին, 'ի մանկուԹեան հասակէ ևս դև ունելով և գաղտ խառվեցուցանէր զնա. և զգիշերն աղաղակէր համայն և հառաչէր և կրճտել ատամանցն առնէր, այսպէս առանձինն գայր առ Թագաւորն Կոստանդիոն և յայտնէր զախան և զնենգուԹիւն պիղծ դիւին. ապա և զբժիշկն զորպիսի գուշակէր։ Արդ ակնարկուԹեամբ Թագաւորին 'ի Պաղեստին առ սուրբն գայր. իսկ 'ի նա 'ի յաջաց Կանդիտատոսին տեսանելով յորմէ գայ, և ուր վասն՝ առժամայն ծանեաւ. և չար դևն զգալստեանն

զարբոյն ոչ բերելով, յաստուկ 'ի սատանումն լինէր. և ինքն համբերելով և իսկոյն բարձրացուցանէր զայրն և օգնէն տայր ոտիցն ոչ բնաւ յերկիր կալով: Զարմացոյց զմերձակայսն ոչ այս միայն, այլ զի և անուսումն գոլով այրն այլոց լեզուաց, զի ոչ զփոքագացւոց միայն և իտալացւոց պատասխանէր քաջահանձար զհարցմունս սրբոյն, այլ զգաւառին պաղեստինացւոց զլեզուն խօսելով դեռն խոստովանէր 'ի ձեռն այնմիկ լեզուի որպէս իսկզբան որ եմուտ 'ի նեղքս ինքն. և քանզի անազգ էր ասացեալն զինուորացն որ մերձն կային Կանդիտոսին և մանկանց նորա, երանելին զի և նոցա առնէր քաջայայտ՝ լեզուաւ հելլենական սկսանէր զհարցանելն. և դեռն զհետ հելլենական պատասխանէր նմա, որ դիւթական չար արուեստիւ զոր առ ինքն ընտանութիւն առնէ: Երանելին 'ի լեզուէն յայնմանէ ոչ ամենևին համբերեալ 'ի բաց գնալ զԿանդիտատոսն, այլ կոչէր զանուն Քրիստոսի. և հրա-

ման տայր փախչել՝ի բաց չար դիւին։ Իսկ նա թէ և ակամայ՝ հրամանացն սպասաւորէր, և առժամայն՝ի բաց հալածէր. և այրն ազատէր՝ի վնասից նորին. և ինքն իսկ Կանդիտատոն իբր շնորհս բարեգործութեանցն ոսկի բարեմտաբար սրբոյն մատուցանէր։ Իսկ սրբոյն հաց ձեռաք իւր ցուցեալ, Այսպիսեաւս, ասէ, կերակրիմ. և էր հացն ստոյգ գարեղէն. և զոսկի որ՝ի ձէնջ պատուի՝ հաւասար կաւոյ համարիմ։ Ասաց և իսկոյն և օրհնութիւն նմա փոխատրեալ, արագ զոսկին հրամայեաց յեռս դարձուցանել. ոչ միայն զդևն փարատեալ, այլ և զոսկին անպատուել ուստից. իբաք ոչ նուազ պիղծ դիւին ընչասիրութեաքն խառնեցուցանել։

Ապա այսպէս հասարակ ամենեցուն գանձարան բարեաց առաջի եղեալ կայր, և այսպէս ոչք չարաչար չարչարէին, առ՝ի նմանէ անվարձ և դիւրաւ առնուին զբժշկութիւն. վասն զի ոչ միայն առ մարդիկ զբաքանչելիսն կացուցանէր, այլ և

բազմաց յանբան կենդանեաց զինչանէր բարեսիրաբար՝ որք կիրս ունէին և կարօտէին վերակացութեան, իբրու թէ ուղտ յոյժ մեծ և բաւական 'ի յաղթ մարմնոյ, զտեսողն 'ի հիացումն շարժեալ դիւաց բնակութիւն լինել 'ի նմա. և բռնութեամբ զնա առ 'ի բազմաց ձեռաց հազիւ ածեալ շրջելով զաչս և փրփրելով. և զայլն զորս դիւահարք յինքեանս առնեն, հեշտիւ այրն Աստուծոյ բժշկեաց։

Այսոքիկ հասանէր և առ Անտոնիոս մեծն, և ցնծայր հոգւով ընդ այրն հոգևորաբար. և որպէս 'ի վերայ մանկան հայր, այնպէս յեցեալ կալով էր. և բարի համբաւով նորա վասիկանայր. խուռն և անպղերգ անուանէ զԻլարիոն, և սիրելական գրով ողջունէր. և զորս յԱսորւոց առ ինքն գային յորոց և ոմանք բժշկութեան հասանէին՝ աղաղատէր Անտոնիոս զՀեռագոյն զայն թշուառութիւնն, և թէ զբժիշկն մերձ ունիք, և դուք զարտուղի այլուր խնդրէք։ Էնոյր ապա ամենայն Պաղեստինի

այսպէս առեալ զԷլարիոն 'ի Լեւոս-
սուիսաս որոյ և զնորին քաղցրութիւն
իբրու և վանորեայս ամենայն ուրեք
կառուցին, գործեալ 'ի նոսա և զմիա-
կեացս զգեաստ ընդ առաքինութեան
մնանել և այլոց ստուգութեանց.
մնայ մատչել և հայցեալ տալ իւ-
րաքանչիւրոցն և վանորայիցն իւր
յոտս անկեալ երանելւոյն այնմիկ
տեսանել. իբրև զի օրինակ 'ի նմանէ
առնուլ յեղանակի կրօնաւորաց:
Իսկ նա 'ի գալ ժամանակի ամոյ
նախ կթոցն, իսկոյն 'ի վանորայիցն
յիւրաքանչիւրոյ մատչել և կանոն և
օրինակ պարկեշտ քաղաքավարու-
թեանց, զոմանս ասէր և զոմանս
առնէր, մանաւանդ աւանդեալ. ա-
պա և բաւականս առնուլ յառաքի-
նութիւն բացափոխէր:

Գնայր իսկ երբեմն յանապատն
Կադէս, որպէս զի տեսցէ զոմանս
յաշակերտացն որ անդ և ոմանք հա-
մայն բաղմութիւն այլոց աշակեր-
տացն ոյք հանդերձեալ էին գալ
Ճանապարհաւ 'ի քաղաքէն Լուզիս.
ըստ այնմ աւուր յորում ամենամ-

բոխ տօնի ոչ միայն բազմութեանց քաղաքին, այլ և շուրջ ամենայն գաւառացն կատարէին տօն պղծոյն Ափրոդիտի։ Եւ այնուհետև այսպէս 'ի քաղաքն մօտեալ բանք սրբոյն, ամենեցուն պարգևէր թէ հանդերձեալ է Իլարիոն գալ 'ի քաղաքն. և քաղաքն ամենայն քաղցր յուսով ներային և աչօք տենչային տեսանել ամենեքեան դէմս Իլարիոնի միայն։ Արդ իբրև եկ'ի սահմանս քաղաքին, անդրէն բազմութիւն ամենայն հասակաց ամենեքեան յանկարծակի որպէս հոսանս հեղեալ գետոց 'ի նախահանդիպումն Իլարիոնի, և ամենեցունց յերկիր անկեալք գոչէին Աստուծոց բարբառովն, Տէր օրհնեա, իբրև 'ի միոյ լեզուէ գոչելով։ Այսպէս պատուական ինչ է առաքինութիւն և պատկառելի, ոչ որոց փափաքեն նմա միայն, այլ և որոց ոչ ինչ առ նա ունին և ոչ առաջի եդեալ։ Այնուհետև երջանիկն Իլարիոն զջերմութիւն նոցա և զբարան մատաց ընդունելով, ճառէ և յաղագս ճշմարիտ հաւատոցն քրիստոնէից.

և իբրև բարի ինչ երկիր գտեալ և
ամենակ ընդունել զսերմ Ճշմարտու-
թեան, այրկանէ 'ի նոսա զսերմ բա-
րեպաշտութեան. և հանդերձ ար-
տասուօք ապաչէալ զԱստուած վասն
նոցա 'ի բաց կալ նոցա 'ի պատրա-
նացն, և որքան օրէնք քրիստոնէից
խորհրդածէ. և 'ի մաքուր բարեպաշ-
տութեան պաշտօնս ընծայեաց: Իսկ
նոքա ջերմագոյնք լեան, և այլս էա-
պէս առ տակաւին և այժմ յաս-
տուածապաշտեալ սկսանելով, ա-
ռաւել յարշաւանս ստացեալք. վասն
զի և բնութիւնքն ջերմագոյնք մարդիկ
յաղագս իրացն սկզբանց. իբրու
յագուն ըստ փոքու և զսովորու-
թիւնս շլացուցանէ զյոյժ եկեալն
որք և ասէին ոչ թողուլ զնա 'ի բաց
գնալ 'ի քաղաքէն. և ոչ նա 'ի բաց
գնայր 'ի քաղաքէն մինչև նշանա-
գրեացէ նոցա եկեղեցի. և զառաան
ինքն մեկնեացէ նախ, և զչինուածոյն
կերպ բացանշանեացէ:

Այսքանի եղև փոփոխումն նոցա,
և այսպէս յաղթեցան 'ի քաղցրագոյն
նորա լեզուէն. իբրու և ինքն նոցին

քուլմ որպէս զի որ զնոցին անպա-
տուուլթեանն զոհողն պատմէր 'ի վերայ
գլխոյ պսակ դնել. քանզի սովոր էր
պսակելով զայն դնել ձեռամբ երա-
նելոյս այսմիկ 'ի Ճակատն որքան
ունէր խոստանայր իսկոյն, և կնքել
կնքաւն Քրիստոսի և կատարել 'ի
ձեռն մկրտութեան: Զայն տեսեալ քա-
ղաքն մկրտեցան ամենեքեան նոքա
և լուսաւորեցան անձամբ. 'ի յանցա-
նել ամին եպիսկոպոսարան զուգա-
հաւասարեցին և դարձեալ եղբարց
վանս. 'ի վանս իմն ումանք այգի ու-
նէին, որոց պատուէր եդ սուրբն
զնախապատուղն բերել Աստուծոյ և
զՃիւռ նմին Ճռաքաղ ոչ առնել. այլ
թողուլ այլոց, և զայլս 'ի յայն հան-
գանակել. և պատուիրանօք զայս
հաստատեալ և որպէս յառաքինու-
թիւն նոցա եղեալ. և մի այնպէս
Ճշգումն անարուեստ 'ի նոսա գտա-
նելով. և նոցա յոյժ ինչք և ագա-
հութեան տուփումն յաղթեալ, իբ-
րու զի դիւրաւ մատնել զՀոգւոյն և
սակաւ տալ յընչից ունել 'ի պէտս
և ոչ տեսութեան վանից ինքն և ոչ

այլոյ օգտութեանց արժանացուցա-
նել ներեաց. որպէս յառաւելութէ
ճառոցն իւրոյ, և 'ի փոխատրութիւն
ամենայն յամենայնի անյուսացեալ
և 'ի յայնքան մարդատեցութիւն և
'ի խստութիւն եկն նա, իբրև զի և
Իլարիոն ընդ եղբարն անցանէր,
խստագոյն պահապանս եդեալ այ-
գւոյն. իբրու ոչ գալ մերձ կամ ճիւ
անտի առնուլ 'ի սակաւ մխիթարու-
թիւն աշխատանաց ճանապարհին:
Սոքա իմն հետևին ուրեմն յօժարու-
թեան ճշդողս առնել. և ոչ հետ ո-
տին 'ի յայգին էարկ, սակայն այն
ամենայն իրք 'ի հակառակն եղև, որ-
պէս և բանս որ զկնի սակաւոյ յայտ-
նէ. քանզի պարտ էր յառաջագոյն
բարի և օտարասէր ունել զանձն. և
փոխանակ այնմիկ 'ի բաց կալ 'ի ճըշ-
դութենէ և 'ի փոքրոգի լինելոյ:

Իսկ աստուածայինն Իլարիոն ան-
տի անցեալ գնաց 'ի վանան որ Իբա
կոչեցեալ էր, և ընկալեալ զնա ա-
ռաջնորդ վանիցն այնմիկ ամենայն
հեշտամտութեամբ հանդերձ եղ-
բարբքն, և ամենակատար 'ի հեշտու-

թեան լինելով, և կրթութիւն ան-
ձանցն նոցա յառաջ նոցա զհետ լի-
նել։ Սակս այնմիկ առաջնորդն զեպ-
բարան յայդի իւր անցանել աղաչէր
փափկանալ յայդ յողկուզացն։ Իսկ
և նոքա իբրև երեք հազար հաւատոյ
գոլով համայն և 'ի պատուական ու-
մեմնէ ստիպեցաւ, և նեղեալ սուրբն
եկն 'ի յայդին և օրհնեաց զնա. մին
և ամենեքին ընդ նմա և կերան յաղ.
իբրև ոչ յինքեանց մանաւանդ թէ
հպարտութեան մտաց կոչողին շնոր-
հելով հայեաց ինձ գործ արժանի
հատուցման յԱստուծոյ արդար դա-
տաստանացն. զի յօրհնութենէ ե-
բանելոյն յառաջագոյն ուրեմն ըզ-
չափ հարիւր փարչից այդին գործե-
լով, յայնժամ թերևս առ 'ի բաղ-
մաց բերանոյ այնպէս կերեալ, ե-
րեքպատիկ զգինին բացակատա-
րեաց։ Իսկ ճշդողին 'ի սովորակա-
նէն բաղումն նուազեաց, և այն քա-
ցախ եւ՝ ոչ ուրախ առնելով զսիրտս,
այլ քեցեալ և ըստ միմեանց պարար-
տութեան հակառակ ունել զանձն
տեառն. և զի 'ի պտղոյ գնացից իւ-

րոյ հնարեալ, ասէր աստուածային զայն զանպտղութիւն զայն կթեաց։

Իսկ երբեմն սրբոյն և վասն այսմիկ նմա յեղբարցն պատմեցաւ վասն ումեմն իբրև պարտէզ ունելով անձին, և ոչ սակաւ ինչ 'ի բանջարաց որ 'ի նմա տալ ումեք ունել յեղբարցն։ Իսկ նա իբրև ուսաւ ճշմարիտ լինել զասացեալն, առ դէմն լինել առնէր և զայլս կոչէր մերձ և ոչ նմանել ասէր անսէր բարուցն. այլ ատել զանգթութիւն նորա և զնա յանդիմանեաց. այսպէս լինելով կրօնաւորն ոչ դադարէր աղաչել զեղբարսն և առաւել քան զայլսն՝ զԻսիքիոս կոչելով. զի նա հանդիպէր սրբոյն այնպէս 'ի պէտսն սպասաւորել. զնա 'ի դէպ համարեալ առ 'ի մաղթել զնա առ հաշտութիւն. և երբեմն դալար մատոյց նմա սիսեռն. իսկ նա խմաստուն գոլով և խորհեալ պատճառս զայս առ բարեխօսութիւն առնուլ, եգեալ 'ի սեղանն օրհնել աղաչէր զԻլարիոն, կէս ամսոյ ինչ որ զայն մատոյց. այլ նա մերձ գոլով և սիրտ նորա խօսէր

որ ստեղծ առանձին զսիրտս մեր. զի ոչ եթող բնաւ զեղեալն յանգիտութիւն:

Զայսոսիկ ստամբակաբար ըմբռնեալ Իսիքիոս, եւ ոչ սգաս, ասէր, թէ ուրքան հոտեալ է այս անյագութ: Եւ նա ընդդէմ ասէր հարթ. Ոյք անյագութիւնք հոտոց սիսառանէ ունիցին: Սուրբն հաստատելով դարձեալ զասացեալն, Դիր զդա մերձ եղիցն և լռեա. զի ոչ բնաւ մերձեացի 'ի դա: Եւ մերձ դնէր ապա Իսիքիոս, և ըստ նախասացութեան սրբոյն եղն իբր 'ի քար նայեալ ոչ բնաւ կամեցաւ մերձեցուցանել 'ի նա զբերանն: Էր ինչ իսկ և այսպիսի երջանիկն Իլարիոն. զի համայն ինչ նմա մերձեալ որպէս և զայս 'ի մարմնոյ առնոյր հոտ. սոյն իսկ և հանդերձից շոշափելոյ յայտ նմա եղև՝ լինէր, որ է ախտ որ մատչէր յառաջ զօրանայր:

Ապա զամս վաթսուն և երեք վարելով մեծին Իլարիոնի, նեղէր 'ի բազմութենէ մատուցելոցն. վասն զի յոլով էին որք գային առ նա. մա-

նաւանդ որք ախտաժետեալ էին, առ բժշկութիւն դիմէին, յորմէ փառս մարդկային պատուոյ համարէր լինել սուրբն և դժուարանայր յիշելով զառաջին լռութիւնն, և ըզբազում անգամ արտասուէր առանձինն: Իսկ եղբարցն հարցեալ ըզպատճառս տրտմութեանն, և նա ասէր. Դարձեալ յաշխարհ դարձայ, որդեակք. զի զփառս և զվարձս այսրէն ունիմ զիմ. որպէս տեսանէքդ՝ ամենայն Պաղեստինի և որք շուրջ զդովսաւ ագարակք՝ փառաւորեն զիս. և դուք իսկ հաւասար, և տեառնական ընծայէք ինձ պատիւ: Զայսոսիկ լուեալք .քաղցրիկ այնոքիկ եղբայրութիւնքն խմացան եթէ գաղտ զփախուստ խորհի, բազում յաղագս նորա զպահպանութիւն զգուշանային և աննինջ աչօք դիտէին, զի մի գաղտ հովիւն իւրեանց 'ի միջոյ հօտին փախիցէ, և մանաւանդ քան զայլսն Խիքէոս, զի յոյժ սիրեցեալ էր 'ի հօրէն, և որպէս մաերիմ մանուկ հոգւոյ նորին զնորա շուրջապակէր:

Ի յայսքանիս մերձ էր գեղ նո-
ցա, և դարձեալ էր Արիսաէնէան
զոր նախ առեալ բանս ծանոյց ընդ
մանկանն Եթէ և որպէս Իլարիոն
զնոսա ախտացեալ մերձ 'ի մահ՝
բժշկեաց։ Արդ ապա մատուցեալ
աղաչէին աղօթից հասանել, իբրու
առ մեծն Անտոնիոս գնալ հանդեր-
ձեալ։ Իսկ սուրբն յաղագս հոգևո-
րական իրի ճառեալ նախագոյն, ա-
պա ասէ Թէ նա յերկրէ փոխագրե-
ցաւ, և հաստատէր զասացեալն.
զկնի սակաւոց պատմէր յատուկ բե-
րելով զԱնտոնի զնշանակ զոր առ
Աստուած արտագնալոյն։ Իսկ աքան-
չելին Իլարիոն և ոչ սակաւ Թուլա-
նայր առ զսիրելին զլռութիւնն առ-
նուլ. այլ մանաւանդ 'ի նա ամբառ-
նալ խորհէր և դժուարանայր ընդ
եկեղեցն ամբոխումն. և որպէս աս-
տուածային ինչ քաղցրութիւն և
փափկութիւն և անճառելի լուսոյ
աղբիւր ծանուցեալ զնա՝ յոյժ ծա-
ղաւէր. մանաւանդ քաջալերէր զեղ-
բարան կցորդել բարուցն և յաւա-
նակ պատրաստել. զի ծեր էր և վաս-

տակեալ 'ի բազում ժուժկալութե-
նէն. և ջանք առաքինութեանն սա-
կաւիկ նմա զանձեալութիւն կարօտ
զօրութեանն։

Արդ իբրև եկանել կամէր 'ի յա-
ւանակն, արագ ընդ ամենեսեան եկ
զոյցն անապատանալոյն 'ի հովուէն.
և առժամայն բազմութիւն մարդ-
կանն իբրև երկուց բիւրուց զոյգ հե-
ղեալ իբրև վտակի և շրջապատեալք
զնովաւ իբրու ոչ լինել դիւրաւ գը-
նալ յաւանակին զանցս ճանապար-
հին, աղաչելով խառնելով ընդ պա-
ղատանս ջերմ արտասուս ոչ 'ի բաց
հեռանալ անտի, և ոչ թողուլ միայն
զինքեանս յախտս նեղութեանց ան-
օգնական և 'ի վտանգս և անբժիշկ՝
զոր բոլոր Պաղեստինէ յոյս անձին
էր ստացեալ.

Եւ զաւուրս եօթն անցեալ և
սուրբն մնայր 'ի նոցանէ այնպէս ան-
սուաղ անմխիթար, և ոչ սուաղ կե-
ցակուր ինչ գնել նեղելով և հակա-
ռակելով և զայնպիսի անջատումն
ոչ բերելով. այլ աղէսաբոյշ գոչելով
և ուժգնակի հեծեծելով, համայն

բաղձալով անկիրս ոչ համբերէին զբաժանումն նորա, այլ զՔերմադոյն խլձքն թէպէտ յոյժ գթայր 'ի նոսա սուրբն, և զմերձ լինելն Յիսուսի զոր տեսանել ունէր իբրև ընդ հայելի 'ի ձեռն լուսթեան, ուժգին հարկանէր զնա և հաւանեցուցանէր բերել քաջանձն զբարիոք հօտին զէքաւորութիւն:

Ապա քառասուն յեղբարցն զոյգ առնելով ընդ ինք յուղարկէր 'ի նոցունց և յեօթն աւուրս հասանէր 'ի լեառն Պիլուսիոն, այց առնել որոց 'ի մօտակայ անապատն բնակեալ եղբարցն: Եւ հասեալ առ խոստովանողն Դրակոնտիոս որ վասն Քրիստոսի խոստովանութեանն արձակեցաւ 'ի յիւրոյ եպիսկոպոսութենէն և աքսորեալ դեգերէր 'ի քաղաքն Տաւասատն: Արդ օրհնեաց զնա, և դարձեալ 'ի նմանէ օրհնեցաւ, և 'ի բաց գնաց 'ի Բաբելոն եգիպտացւոց, ուր ետես զՓիլոնա եպիսկոպոսն որ և ինք յաքսորս դատապարտեցաւ վասն ուղղափառ հաւատոյ և վասն զԱրիոսի յանդիմանելոյ զնորաձայնու-

թիւնն. ապա և յաւուրս երկու հասանէր 'ի յԱփրոդիտոն քաղաք, յորում էառեալ զԲասիանոս սարկաւագն. իսկ Բասիանոսա այս գործ ունէր, վարձել ուղաս և նաւաւ ջուր բերել առ լինել յարբու

որոց 'ի վանսն աստուածայնոյն Անտոնի. զի բնաւին անապատ էր այն ճանապարհ, և ոչ իւիք գնացս ջրոյ ունել։

Ուրեմն յարուցեալ և յԱփրոդիտու քաղաքէն մեծն Իլարիոն, և որ 'ի միջի զամենայն անապատն և զանջրդիան անցեալ զերիս աւուրս՝ հասանէր 'ի վանս մեծին Անտոնի. յորս երկուց ոմանց կրօնաւորաց յաշակերտաց նորա հասանէր, միոյն Իսահակ և միւսոյն Պլիսիանոս կոչեալ անուն. ոյք տեսեալք զաստուածայինն Իլարիոն՝ լցան ամենայն խնդութեամբ և ուրախութեամբ։ Իսկ էր վանս 'ի լեառն իմն՝ մանաւանդ խոշոր և ևս առաւել բարձր որ չինեալ էր, և ոչ ջրուոց կամ ուղտու ելս լինել անդ. և գոյր ջուր բարետեսակ և քաղցր 'ի ճաշակել, և յաղբերացն գետս լինէր, յորոյ ի-

ջանէր 'ի գեղ ուրեմն աւազուտ և արբուցանէր զարօրաձիգսն. անկեալ կայր և առ շուրթն գետոյն արմաւենիս երկայնաձիգս՝ պտուղ բազումս տալով. որ և ամենայն ուստեք ծածկէր հովանոցօք և ամենայնիւ քաջակազմ առնելով զգեղն և զգեղեցիկ և անպատմելի 'ի հեշտութիւն աչաց տեսանելոյ :

Արդ առեալ աշակերտն Անտոնիոսի մեծին զիմաստուն Իլարիոն շրջապատէր զբոլորն գեղն զայն և փափագանօք ցուցանէր. և 'ի յասացեալ տեղին հայրն մեր սաղմոսէր անդ, և կայր լռեալ 'ի հիւսուած զամբեղացն Ճգնելով. իսկ 'ի սովորական իւրոյ աշխատանացն փոքր ինչ հանդչել նստէր յայնմիկ. զի ասէր թէ Այս ծառոցն զոր ինքն Անտոն տնկեաց, և զկանաչս զայս ձեռօք իւրովք վաստակեցաւ 'ի պարտիզս, և աւազանս ջրոյ յորմէ արբուցանէր զպարտէզն, որով աջողակ գործն այն բազում ջանիւք և քրտամբք լինելով :

Զայսոսիկ նա քաղցրիկ պատմէր,

և Իլարիոն նոյնպէս լսէր, և եկեալք
'ի տեղին յորում սովոր էր Անտո-
նիոս ննջել, հատեր 'ի նմա ծերն,
ապա փարփագանօք և երկիւղիւ համ-
բուրէր զերկիրն. և մոեալ 'ի պար-
տէզն ցուցանէր նմա ծառս արդա-
ւանդս պէսպէս պտղօք, զոր ասէր
ոչ նախ քան զերիս ամս անկեալ ե-
րանելոյն. յաւելագրեաց ապա և
զպատմութիւնս զայս հանդերձ սքան-
չելեօք հեշտութիւնս ունել:

Զոկք վայրի կենդանեաց ուր էին
'ի սկզբանէ զպատճառ գալոյ 'ի
ջուրն և չարաչար առնէին պարտի-
զին, և զվաստակք Անտոնի անա-
րուեստիւք ժանտացուցանէին: Արդ
երբեմն սովորութեանն պատմելոյ
զջոկն 'ի կարգի առնէր կալ. ապա
գաւազան 'ի ձեռս առնու և հեզիկ
'ի կողս նոցա հարկանէր և ասէր.
Ընդէր անիրաւէք զիս՝ ոչ ինչ անի-
րաւեալ յինէն, և ընդէր ժանտա-
ցուցանէք զպտուղն զոր դուք ոչինչ
աշխատեցայք: Զայս ասելով պա-
տուիրեաց մի ևս բնաւ ելանել 'ի
պարտէզն. և նոցա զպատուէրսն

զգուշաբար պահելով, միայն գայլին և ըմպէին 'ի ջրոյն, և բնաւին ոչ բանջարոյն և ոչ այլ իրի հպէին 'ի պարտիզի։

Զայս լուեալ Իլարիոնի աղաչէր զնա 'ի բոլոր անձնէ ցուցանել զտեղին ուր կայր մարմին երջանկին Անտոնիոսի։ Իսկ նոցա ոչ ախորժելով յանլսողութեան տրտմեցուցանել զծերն, իմաստասիրեն զպատճառն այսպէս. և առեալ զնա յածէին շուրջ՝ տգիտութիւն և մոռացումն կերպարանելով վասն պատուիրանացն հօրն. քանզի պատուէր տրեալ էր նոցա երանելին ոչ բնաւ յայտնել զԱնտոնէ և ոչ յայտ առնել զտեղին։ Եւ պատճառեալ ըզպատուէր պերգամացւոյ ումեմն առն, ոչ միայն ընչիւք, այլ և հաւատով հարուստ ամենայնիւ բարեկամ Անտոնի, ևս շուրջանակի նորա տաճար շինել 'ի հիմանէ իբրու ըզքահանայական մարմին նորա թաղել 'ի նմա, և զտաճարն յորջորջեալ յանուն սրբոյն։ Իսկ նա իմն զառաքամայս ամենայն անտես առնե-

լով և զմարդկան պատիւն նուաս-
տագոյն ոմանս լինել աստուածայ-
նոյն ընտանութեան, համարելով օ-
տարութիւն առ Աստուած այց առ-
նէ զայս ոչ լինել. վասն որոյ աշա-
կերտքն զարհուրեալք, զի մի յեղա-
նակաւ իւիք և պերգամացւոյն յայտ
լեցի տեղին, և իմաստնոյն Իլարիոնի
ծանուցին նորա առնել յայտ։

Այնուհետև հասեալ Իլարիոն
տենչանացն, դարձեալ եկն 'ի քա-
ղաքն Ափրոդիտի առ սարկաւագն
Վասոն. և անտի զամենեսեան զորս
ընդ նմա էին 'ի Պալեստինի յու-
ղարկէր, երկուս միայն յեղբարցն
ըմբռնելով յանապատն ժուժկա-
լէր, որ մերձ քաղաքին Ափրոդիտի
որպէս քաջազան ոմն յաղթութիս
շարախառնել յաղթութեանց, և
զյառաջագոյն ճգնութեանց հան-
դէս 'ի մեծագոյնս յաւելադրեալ ար-
կանելով զինք 'ի ժուժկալութի։ Ան-
դանօր և առաստագոյն պտուղս առ 'ի
բազմաց բարիոք առաքինութեանց
սերմանց կթէր, կամ մանաւանդ
'ի դէպ էր կթել զպտուղն այլոց,

որոյ զվասատակս ինք համբերեաց. քանզի մեծին Անտոնի առ Աստուած փոխադրեալ, երաշտութիւն ահա զբոլոր երեք ամս կալաւ շուրջ զդաշտաւանն այնմիկ. ապա և սով սաստիկ զոյգ լինելով, և չարաչար զկնի գալով, տրտմութիւն և վհատութիւն և հառաչանս դժնդակ ըմբռնէր զամենեսեան. որպէս թէ լինէր յամենեցունց թէ զմահն Անտոնի ոչ միայն մարդիկ, այլ և ամենայն ստեղծուածք ողբան:

Եւ զի այնպէս կորնչէին ամենեքեան անասունք և մարդիկ, ուսեալք 'ի դրակցացն էթէ ուր դեգերի աշակերտն նորին, և հաւասի յառաջնորդն առաքինութեանն լեալ Իլարիոն, արագ ամենայն հասակ առ նա ընթանայր, և զտառապանս երկանց ողբային, և դադարեցուցանել զայն պաղատէին: Ուրեմն խոնարհեալ 'ի մաղթանս նոցա, քանզի և ինքն մարդասիրութեան ոգւով վարէր, և զձեռս առ Աստուած ամբարձեալ, և համայն ընդ աղօթեալն և անձրևք 'ի բաւականս

բերեալ լինէր, և երաշտութիւնն լուծանէր, և չարութիւն սովոյն դադարէր։

Ոչ ևս այսմիկ մոռացումն ունել թշուառութեանց, դարձեալ բազմութիւնք սողնոց 'ի ծոցոյ երկրէ 'ի վեր ուռեալք հարուածէր թիւնից դառնութեամբ զբազումս ժանտացուցանել (1) . . . . . այս վէրք ևս առաւել այնմ անձին և աղեաց հատանէր և տրտմութեան նետիւք զսիրտն խոցոտէր։

Զի՞նչ ապա ախտակից և մարդասիրագոյն անձն լուծումն տայ և այնմիկ չարեացն. ոչ բժիշկս կոչել, ոչ առ դեղս և 'ի բուսոց և յայլոց նիւթից տալ օգնականութիւն, այլ ձիթով օծէր և զանունն Քրիստոսի կոչէր, զանխթանք ախտն բժշկէր, և ամենեցուն ընդհացեալք կթէին զբարին առնլով իբրև յաղբիւրէ աննախանձ։

Սակայն նա յամբոխէն փախչէր և 'ի փառաց որ 'ի մարդկանէ 'ի բաց

(1) Պակասէ կէս տող։

գնելով. 'ի գեղ ինչ որ մերձ էր Ա-
ղեքսանդրիայի՝ քնակի, որոյ անուն
գեղջն Վրուշիոն. բայց և ոչ անդ ե-
գիտ այնպէս զլռութիւն որպէս սի-
րէրն. տեսեալ որոց անդ եղբարցն
մատուցանէին յոլով նմա զպատիւ,
իսկ նա այնպէս արտմէր առ պա-
տիւն, իբրև ոչ այլ ոք 'ի փառասի-
րաց առ անպատուութիւն: Ուստի
խոկայր 'ի բաց գնալ 'ի գիշերի. իսկ
եղբարքն 'ի սգայութիւն իրին ե-
կեալք՝ շրջապատէին յայնժամ հզօ-
րաբար և մնալ առ ինքեանս բռնա-
գատէին, կամ մանաւանդ 'ի յԻլա-
րիոնէ որպէս անսուտ փող ուներին
ինքեանք զհեզութիւն նորա և զհան-
գարտութիւն և զվայելուչ սովո-
րոյթս ազատութեան որ զամենե-
սեան որպէս փողով կոչէր առ ինք:
Իբրև մնալ ոչ անսայր բերել առ օ-
գուտս անձին՝ ընդ անապատն եր-
թեալ հասանէր 'ի Նավասատն:

Քանզի Կոստանդոս թողոյր զիշ-
խանութիւն և զկենցաղ, և Յուլիա-
նոս ապականէր զաթոռ թագաւո-
րութեանն անարբաբար. որ վրէժ 'ի

նոյն Աստուծոյ և կրօնք բարեպաշտութեան, զոր նա չարաչար բռնաւորեաց գազացւոցն որք Արիանոսացն ևս պատուելով, և զՀելլենացւոցն շարժելով մեծամեծ ցասմամբ ամբարտաւանեալ ընդդէմ սրբոյն, և յուղարկէր զոմանս 'ի համախոհիցն առ խեղդումն իբրու թէ 'ի վերջին չարիս արկանել զնա: Իսկ նոցա երթեալ գայլք էին ըստ բանի ունայն կորուսանել. դարձեալ սրբոյն զնեն գութիւնն յառաջադիտացեալ, և առ Աբասան որպէս ծանեաք արդ երթեալ էր:

Իսկ նոքա զամօթն ոչ բերելով 'ի մեծագոյն մոլորումն բորբոքէին, և վերադարձան յետս բարկացուցին զանուղղայ թագաւորն յատակել մինչ ցհիմունս զվանս նորա, և զկրօնաւորսն հալածել: Իսկ զԻլարիոն զԻսիքիոս ուր և գտցեն ծանրագոյն տանջանօք կոտորացեն, ապա և մահու զնոսա մատնեացեն. մուռացեալ զբանն՝ հալածել զարծիւ 'ի յամպս կամ ըստ աստուածայնոյն Պաւղոսի՝ զոդս բախել կամ նետաձիգ լինել.

յայտ է նախ լինելոյն այնմիկ Իլարիոնի զամենայն ատոյգ գիտացեալ, և 'ի յԱբրահամ զբոլոր ամն անցուցեալ, ապա և առ կղզի իմն խոկայ նաւել։

Եւ յայսմիկ մատչի ոմն յաշակերտաց իւրոց 'ի Պալեստինի Ադրիանոս անուն, և պատմէր սատակել զապրստամբ արքայն, և թագաւորել քրիստոնէից անսուտ բարեկամ ուղղափառութեան. վասն որոյ և դարձեալ գալ նմա 'ի Պալեստինի աղաչէր. իսկ նա ոչ ներէր, 'ի տեղի ինչ ծովեզերքն անապատի չուեաց 'ի քաղաքին Լիբիայի։

Իսկ աշակերտն Ադրիանոս դառնալ տուիմամբ արծաթասիրութեան ըմբռնեալ էր, և զոր 'ի ձեռն իւր առաքեցաւ յաշակերտացն Իլարիոնի գողացաւ, և ինք չար լինի վասն վարդապետին, և զի ծերն ոչ անսաց՝ ինքն վերատին եկն 'ի Պալեստինի, և ոչ դադարէր պիղծն բամբասել և ամբաստանել զՀիմարիտ սուրբն. ուստի համաբարոյ մնաց Յուդայի արծաթասիրութեանն նմանաբար մա-

հացաւ հետևեալ. զի դժնդակ ախտիւ ըմբռնեալ, և բոլոր մարմինն զազրութեամբ գզգեալ հերձոտեցաւ, և ժահահոտութիւն որպէս նեխութեան անտի արտաքս ելանել՝ զհոգին թշուառաբար արձակեաց եղկելին։

Իսկ երջանիկն Իլարիոն մի ումն առեալ յաշակերտացն Զանաւոն անուն; նաւէ անտի 'ի Կլասան սիկիլիացւոց կղզին։ Իսկ նա ոչինչ ունելով տալ վարձս նաւուն՝ զաւետարանն զոր ունէր 'ի ձեռս կամեցաւ վաճառել, այլ Աստուած զտարակոյսն լուծանէր՝ արուեստիւք տալ ունել այսպէս։ Դև ունէր մանուկ նաւապետին և առժամայն առ նոյն կորնչել. և դեղ չարեացն միայն աղօթք սրբոյն լինէր նմա. և այն բաւական լինէր նմա 'ի վարձ նաւապետին պատուասիրաբար արկեալ. և անտի սուրբն դարձեալ ելանէ 'ի Մէսոգէոն յորում թաքուցեալ դեղերէր փայտ ժողովեալ և տայր ծախել զայն Զանարոսի, և այնպէս կերակրէին։

Սակայն և ոչ այսրէն զհաւատա-
ցիմ ծառայն իւր Թաքչել Թողու-
բարի Տէրն։ Այր ոմն անուն Սկու-
սարիոս գիւական տանջանս ունե-
լով, ինք բարբառէր գևն 'ի ձեռն
լեզուի նորա ակամայ, և ակամայ
զսուրբն յայտնէր. Արդ ահա յա-
րևելից 'ի Սիկիլիա եկեալ Իլարիոն
խեղդէ զիս, և իբրև Թագուցեալ
կայ 'ի դմա, որ և հանդերձեալ է
զկնի սակաւու 'ի նաւ ուրեմն ելա-
նել 'ի յայրս անապատի գնալ։ Զայ-
սոսիկ ասէր գևն, և այրն Սկուսա-
ցիոս որոնեալ ընդ ամենայն խնդրէր
զԻլարիոն, և իբրև եգիտ նա՝ ծա-
նեաւ Թէ ո՛վ էր, անկանի առժա-
մայն յոտս նորա ընԹացեալ, որով
և ոչ բազում աղաչանաց պէտս եղև.
այլ իսկոյն հալածեալ ելանէր գևն
'ի խոնարհամտուԹէն որպէս բարձ-
րամիտ։ Յայսցանէ դարձեալ հե-
ղուին առ նա բազմուԹիւնքն որպէս
գետս՝ յոր ինչ և վիշտս ըմբռնեալ
էին. և ոչ ոք էր որ դառնայր տըր-
տուում, այլ ամենեքեան ուրախու-
Թեամբ գնային 'ի յարկս իւրեանց։

Իսկ աշակերտն մտերիմ Իսիքոս՝ ահա 'ի կարգ գայ մեզ պատմութեանց 'ի բազումս խնդրելով զԻլարիոն անցանելով նմա զերիս ամս՝ պատահի հրէի միոյ զՃանապարհաւն որ գուշակէր 'ի Սիկիլիա մարդարէ մեծ քրիստոնէից լինել. իբրև լուաւ Իսիքոս՝ որքան ունէր փոյթ՝ նոյնժամայն, 'ի Սիկիլիա ընթանայր և գտանէր անդ զսուրբն։

Սակայն և անդ բազմութիւն եկողաց առ Իլարիոն. դարձեալ տխրէր յաստուածայնոյն զոր յառաջագոյնն սոյնպէս ունել. և փախուցեալ յամբոխէն նաւեաց երկու աշակերտօքն գնաց 'ի Դավլոն գաղմատացւոց։ Տակաւին և անդ բուրումն շնորհացն որ 'ի նմա անուշահոտութիւնս բազումս հնչելով՝ յայտ առնէր զնա ամենեցուն որոց 'ի դավրացիս. և զոյգ ընթացեալք աղաչէին զայրն 'ի դժնդակ դրացւոյն փարատել. զի վնշապ ինչ 'ի նշանս պիտոյից սողալով ընդ ամենայն դավրացւոցն, գոչէր 'ի յանդէորդս նոցին, և կլանէր զեզինան մեծագոյն քան զեզն գոլով,

և այլ բազումս 'ի մարդկանէ ու-
տէր. և էր սով 'ի քաղաքին և տան-
ջանք ահաւոր սատակմանց։ Այնու-
հետև ողորմեալ Իլարիոն թշուա-
ռութեանց նոցին 'ի չարադրացուցն,
և հրամայէր փայտ ժողովել և դէզ
'ի մեծագոյն բոց լինել։ Եւ առժա-
մայն 'ի հաւաքումն փայտիցն նոքա
փութային և սուրբն յաղօթս կայր,
և ահա գայր վիշապն իբրև յումեքէ
ուռկանեալ. և նա հուր արկեալ 'ի
փայտն՝ քարշեաց զգազանն 'ի մէջ
հնոցին, և խապառ այրեաց. և այն-
պէս օրհնութեամբ Աստուծոյ և շնորհ
Իլարիոնի երգէր 'ի Դավթոս։

Ի բաց գնալ և անտի հանդերձեալ
էր սուրբն. քանզի փախչէր յառա-
քինութեան փառաց, ամենևին ուժ-
գին զնա հալածելով. այսպէս մեծ
ըստ քաղաքին գլխդեաց Աստուած,
իբրու զի զծով յիւրն տեսանել
ծփանս արտաքս ելանել 'ի սահման-
նէն և վիհս ահաւոր լինել, իբր թէ
ահեղ ցուցանել զխորս յայնքանիս
բարձրանալ աչեաց, իբրև թէ այլ
ինն ընկղմումն լինել զայն ջրհեղե-

ղի, և զտապանակ իսկոյն վերախընդ-
րել. և զի զՆոյի սահ Տէրն երկայ-
նամտեալ և մեծ զզօրութիւն իւր,
և զանսպառս ոչ պարտաւորէ Տէր
'ի կատարածի, և շարժմամբ Ճանա-
պարհ իւր, և ամպ և փոշի յոտս
նորա, սաստէ ծովու և չորացուցա-
նէ զնա, և ամենայն գետք յանա-
պատ, վասն այնորիկ ապաւինին
դարձեալ ընդ կանանց և որդեաց 'ի
խոստովանելն օգնութիւն, և մաղ-
թեն զԻլարիոն այց առնել ինքեանց
'ի բարկութենէ Տեառն, մի բնաւին
հեղուլ զայս վերջին մրուր. այլ 'ի
բարկութիւն զողորմութիւն յիշել
զբարւոյ. որոյ ամենայն Ճանա-
պարհք երևեալ ըստ աստուածայ-
նոյ մարգարէին՝ ողորմութի և Ճըշ-
մարտութիւն: Իսկ երջանիկն Երիս
խաչս ընդ գեղօրեայսն ընդդէմ երե-
սաց ծովուն կառուցանելով՝ զձեռս
իւր յերկինս տարածեաց. և կացոյց
զսպառնալիսն, և եհատ զխստու-
թիւնն, և զգուշագոյն կացոյց նոցա
զհանդերձեալն:

Ապա չուեաց անտի 'ի գիշերի ընդ

Վէրվիլիմն Ճանապարհն դալմա-
ատացւոց գնալ, և նաւաւ 'ի Կիպրոս
վերալինելով հասանէր։ Իբրև նա-
ւեալ լինէին ընդ Մալեան, աւազա-
կաց նաւք գային հասանել նոցա, և
ամենեցուն ընթացեալ երկիւղիւ առ
սուրբն զեկուցանէին զայն, և կա-
լեալ զոտիցս մեքենայս խնդրէին
զիարդ կարասցեն փախչել 'ի վտան-
գէն։ Իսկ երանելին հեզ ինչ և
զուարթ ժմռեալ, Մի թէ սոքա բա-
զո՞ւմ են քան զկառան Փարաւոնի
ոյք աստուածային ակնարկութիւնն
ընկղմեցան։ Մինչդեռ ոչ ևս կա-
տարել բանից նորա, ահա հասին
աւազակքն. իսկ սուրբն առեալ 'ի
նաւէն քար ինչ ընկէց ընդ մէջ նա-
ւու կռուողացն, և որպէս պարիսպ
եղև նոցունց քարն. և զգնացան ցան-
կեաց զնոցունն. ևս իսկ որքան ուժ-
գնակի դիմէին առ նաւն, մանաւանդ
յետս դառնային. և այնպէս որք ընդ
սրբոյն էին անկիրս մնացին 'ի չա-
րեաց,

Եւ պար առեալ նաւեցին և եկին
'ի Կիպրոս 'ի քաղաքն Պափոն, որ

էր ըմբռնեալ 'ի շարժէ. և զքակ-
տուումն վրիժուց վաճառեալ զամ-
պարշտութեանցն, և անապատ էր
'ի մարդկանէ որ էին բացափախու-
ցեալք 'ի շարժէն։ Ապա աստուա-
ծայինն Իլարիոն ելջեալ 'ի նաւէն և
տեսեալ զանապատութիւն քաղա-
քին, թէ որպէս ունի առնուլ աջո-
ղակ առ լռութիւն, ուրախանայր բա-
ւականս և զայն ինքեան լինել որպէս
ըղձայր ասելով՝ զքահանայական
դեգերանս 'ի նմա առնելով. նա իմն
ըստ սովորութեան գարձեալ լինէր.
և զոր սիրէրն փափկանալ ոչ զմայ-
լէր. զի զիարդ իսկ թէ զմարմին իմն
աշխատել հարկ էր և յանցանաց և
ցաւոց մարդկան սպասաւորել։ Իսկ
նա բժշկէք անվարձ և մարդասէր,
և վեհագոյն ամենայն ախտաժտու-
թեանց, եթէ 'ի դիւաց լկելոյ և թէ
յայլոց թշուառութեանց և ախտից
նեղելոց մատչէին առ նա, և իսկոյն
զթշուառութիւն ախտից 'ի բաց դը-
նէին. և ոմանց առեալ ամրագոյն
զբժշկութիւն, վերստին դառնային.
իսկ այլք գարձեալ նմա որպէս յա-

ջորդ մերձէին, յորոց և այլք և ընդ նոսա այլք. իբրև դիւրաւ առ նմա զչարչարիչն 'ի բաց դնելով, սակայն ամենեցուն գտանել։

Արդ ամ մի նորա 'ի Պավլոս դեգերեալ, և յերկրորդումն 'ի բաց կացեալ, անտի 'ի լեառն մի բարձր և դժուարանց 'ի մարդկանէ ելանէր. ընդ այլս իսկ և ջուրս բղխելով և ծառս ունելով, և 'ի բանջարոց արդաւանդ աջողակ երևեալ. ունէր և մօտ մեհեան կռոց չինեալ և բաղումն 'ի դիւաց 'ի նմա տնկարկեալս։ Յայնժամ աստուածայինն Իլարիոն տեսեալ զդժուարութիւն գաւառին, ևս իսկ և զոր առ 'ի դիւացն մերձ լինելոյ զակնկալութիւն փնասուց զմտաւ ածեալ, անդ զվախուստ 'ի մատուցելոց ամբոխելոյ պարտ համարեցաւ, իբրու զի դիւացն հայթայթանս արհամարհելով, մնանաւանդ յարշաւանացն խոտորելով, որպէս մարթացաւ զպատշաճելն նմա զբաստիրութիւն։ Այնուհետև բանջար տնկէր 'ի նմա և պարտէզ գործէր, և ինքնագործող իւրական կերակրոյն լինի։

Երբեմն եկն 'ի պարտէզն և տե-
սանէ զոմն լքեալ կալով առ դուրսն
և տեղեկանայր յաշակերտէն Իսի-
քոսէ թէ ո՞վ է նա և յո՞ւմ շնորհուկս
այսրէն և ուստի՞ ածաւ լքեալն։
Իսկ նա ասէ ցնա այսպէս. Տէր ագա-
րակիս այսմիկ յոր բնակիմքս կոչի,
և ածաւ այսր յումեմնէ բժշկութեա
հասանել։ Յայնցանէ ծանեաւ Իլա-
րիոն թէ յայտնի եղև և որոց անդ
բնակին. թերևս սքանչանալ ոչ է 'ի
դէպ զսքանչելին թէ յետ այսքան
առաքինութեանց լուսոյ գնալով
յայտ եղև որոց մերձ կային. և զայս
դիւրաւ այսպէս. և իբրև 'ի վերայ
կարգաց զօրութեանց ելանել բժըշ-
կութեանն միայն 'ի մերձենալն նմա
և 'ի կոչելն զանուն Յիսուսի Քրիս-
տոսի. այնպէս ասելովն առժամայն
ողջ զնա 'ի վեր յարուցանէր։

Ապա այց առնելով իսկ և եղբարցն
որոց 'ի Պալեստինի, զի ցաւադնէր
յանձն երանելին վասն ամենեցուն
որով և զաստուածայինն Իսիքիոս ա-
ռաքէ այց առնել նոցա, և պատուի-
րանաց և խորհրդածութեանց զգու-

շանալ. և ինքն 'ի լերինն ժուժկալեալ, ծանրացեալ տխրէր յորոց տեսանէր պատուեալ զինք 'ի բազմաց թախանձելով. սակս այսմիկ և անտի փախուստն խոկայր, համայն մնայր 'ի լռութեան վերատին շաւիղ. սիրէր իսկ և զոչ լինելն ումեք քեռն. ինք ձեռամբ իւրով գարի սերմանէր, ունել ինքեան զկերակուրն յոյժ ազնուական և յազատութեանց:

Ի յայսոսիկ ելանէր յեօթանասուն ամս հասակ նորա, փափագէր 'ի բաց գնալ առ տենչալին իւր Յիսուս խնդալով 'ի յինքեան, իբրու թէ և կտակ ձեռամբ իւր գրէր և ժառանգորդ աշակերտացն զԻսէքոս ունել. և ահա վախճանելով նմա, մերձ գոլով աշակերտն իւր Ղազարիոն, և յերանելի յայն մերձելով առ Աստուած Ճանապարհորդութիւնն. և էր ժառանգութիւն աւետարանն զոր քահանայական ձեռք Իլարիոնի գրեցին մինչ տակաւին ևս մանուկ էր, և փիլոն ստիխարին, և կուկուլն մաղեղէն, զոր կրօնաւորքն այսպէս անուանել սովոր են:

Այնուհետև ժառանգորդին նման Իսիքիոսի ոչ դեռ ևս 'ի Պալեստինէ եկեալ վերատին հիւանդանայր իմն մեծն Իլարիոն զվախճանականն. և գան առ նա բազումք 'ի Պափոսէ. ընդ որս էր և յառաքինութիւն երանելուհին Կոստանդիա. զորոյ զդուստր և զփեսայն օծեալ ձիթով և միայն շօշափմամբ ձեռին սրբոյն 'ի դժընդակ ախտաժէտութեանցն ետես փարատեալ: Արդ սոքա 'ի Պափոսէ մերձ եղեալք զվախճանականն տայր նոցին զպատուէր. և առժամայն առ կոչնատէրն զհոգին իւր աւանդէր, և 'ի նոյն պարտէզն թաղել զմարմինն ասէր, յորմէ ինքն զիւրն կերակուր մշակէր. զի յորմէ տեղւոյ կերակրէր ինք, և 'ի բաժանել հոգւոյն ընդուանիցի զմարմինն կերակրողն նորա. թաղել ընդ նմա և սիւն զոր ինքն կազմեաց, ցուցանելով զի յոյժ ողջունէր և համբուրէր զայն յորում զգնողական քիրտն ինքն կրէր:

Իբրև հանդերձեալ էր նուազել՝ հակէր և բազումս բերէր զհանդարտութիւն և զքաջակարգութիւն ե-

րևեցուցանելով և ճառելով ինքեան զայսպիսիս. Եվ արտաքս, հոգի, ընդէր երկնչիս, ընդէր երկմտես. Եօթանասուն ամ ծառայեցեր Քրիստոսի, և 'ի մահուանէ ևս երկնչիս: Նա այժմ կոչէ զքեզ, երթ առ նա խնդութեամբ: Այսպէս ասէր և բոլոր զինքն նշանաւ խաչին կնքեալ, նա ինքն փոխաբերաւ առ ակնկալ 'ի նմա յարկան, և զմարմինն սրբապէս պարտէզն ընկալաւ: Երկուցեալք կիպրացիք զի մի՛ ոք գաղտ 'ի պաղեստինացւոցն առցէ զնա, և ինքեանք վշտագնեացին յայնպիսի տուգանս, պահապանս կացուցեալ ամենայնիւ պահէին:

Այլ աշակերտ նորա Իսիքիոս մինչդեռ 'ի Պաղեստինի զդեգերանն առնէր, լուաւ զվախճան վարդապետին. վաղվաղակի իբրև թիւք թռուցեալ 'ի Կիպրոս հասանէր: Ապա տեսեալ զբազում զգուշութիւն կիպրացւոցն զոր ունէին վասն մարմնոյն, և 'ի հայրենեացն զվերջացումն նշխարացն ոչ բերէր. խնամատարական ինչ մտածէր, և կեր-

պարանէր զինք մինչև մինչև ցվախ-
ճան առ գերեզմանի վարդապետին,
և իբր թէ վան այնմիկ թողեալ
զՊալեստինի եկն անդ, որով և եկաց
զամիսս տասն առ գերեզմանաւն. և
յանկարծիս լեալ 'ի գիշերի գո-
զացաւ զամենայն մշանջենապէս, և
եբեր զնշխարսն 'ի Պալեստինի 'ի
վանան Մայիումա, և բերեալ զայն
տայր յանկարծակի պալեստինա-
ցւոց:

Իսկ նոքա ամենայն ուսանէք խրա-
նեալ զմիմեամբք՝ գային 'ի տեսանել
զԻլարիոն այնպէս ողջանդամ և ամ-
բողջ, և զգեսան պայծառ, և յերե-
սացն որպէս շառաւիղ հանդերձ բնա-
կան ծաղկիւ բաց փայլէր: Անդանօր
և երգս քահանայական երգեալք 'ի
վերայ նորա, և լամբարս պատուա-
սիրաբար լուցեալք, և զհեռևուսն
գերեզմանական կատարելով գերեզ-
մանեցին զորդին լուսոյ և զժառան-
գորդն. և զայլն ամենայն զոր պատ-
շաճ էր քրիստոնէից պայծառաբար
իսկ և մեծվայելչութեամբ 'ի նոյն
վանան Մայիումա ատորեցին: Իսկ

'ի Կիպրոս 'ի տուգանս նշխարացն վշտագնէր և անբառնալի 'ի միջոց սրտից իւրեանց վառեալ զբոց, և առաւել Կոստանդիայ յոյժ ջերմութիւն ունելով յաղագս սրբոյն, և բոլորովիմբ զի առ նմա հաւատով և սիրով կախեալ կայր ոչ սոսկ բերելով զդառն զայն համբաւն, այլ իբրև լուաւ զբարձումն նշխարացն զայն՝ լաւագոյն համարէր զմահ անձին իւր, քան զկեանն յետ գողանալոյն զնա։ Այսպէս ուր եկաց աստուածային Իլարիոն, և ուր երթեալ գնաց բազումս ցօղեաց յիւրաքանչիւրն որոց ցանկային և որոց փափագէին. և արդ Պաղեստինի համայն և Կիպրոս աննախանձ բերեն 'ի նմանէ զփափկութիւն շնորհաց, յոլովակի յերկաքանչիւրն կատարելով զսքանչելիս. և մանաւանդ 'ի պարտէզն յորմէ կերակրեցաւ, և որ զմարմինն յետ վախճանին ընկալաւ, և յայլ ևս տեղիսն յորս ճգնեցաւ, և առանձինն լինել սիրելեաց 'ի դեգերիլ 'ի փառս Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, որում վայե-

լէ պատիւ և կարողութիւն մեծութիւն իսկ և մեծվայելչութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

ՎԱՐՔ

Ս. ԻԳՆԱՏԻՈՍԻ

ԱՆՏԻՈՔԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ս. ԻԳՆԱՏԻՈՍԻ

ԱՆՏԻՈՔԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այն ինչ զիշխանութիւն հռովմայեցւոց առեալ Տրայիանոսի կայսեր՝ հալածանս յարուցանէր եկեղեցւոյ, յորում ժամանակի Իգնատիոս եպիսկոպոս աշակերտ Յովհաննու առաքելոյ և աւետարանչի հովուէր զեկեղեցին անտիոքացւոց, երկրորդ եղեալ յետ առաքելոցն։ Քանզի Ղևոդիոս յաջորդեաց զայր առաքելական որ զբազում ծփանս հալածանաց Դոմետիանոսի կայսերն անցոյց զինքեամբ իբրև զիմաստուն նաւավար զեկօք աղօթից և պնդութեամբ պահոց, և ստէպ վարդապե-

տուԹեամբ և երգովք հոգևորօք ընդ-
դէմ կայր մրրկին, երկուցեալ Թէ
գուցէ զոք յանմեղացն և՝ի կարձա-
մտաց արտաքոյ բանակին Քրիստոսի
ընկեցէ. և սակաւ մի դադարեալ
հալածանացն, անշարժ մնալոյ՝ի վե-
րայ եկեղեցւոյ երանելին Իգնատիոս
ահա ուրախ էր, բայց ինքն ընդ ին-
քեան զուիայր, իբրու Թէ չէր
բուռն հարեալ զսիրոյն Քրիստոսի
և ոչ յաշխիՀան կատարեալ աշա-
կերտի հասեալ. քանզի զմտաւ ա-
ծէր Եթէ մարտիրոսուԹիւն խոս-
տովանուԹեանն առաւել ընտանե-
ցուցանէ զնա Տեառն, ուստի յետ
սակաւ ամաց մինչդեռ ևս մնայր յե-
կեղեցին և զօրէն աստուածեղէն
Ճրագի զամենեցուն ոգիս լուսաւո-
րէր վարդապետուԹեամբ գրոց սրբ-
բոց, եհաս ըղձանալոյն: Քանզի
Տրայիանոսի կայսեր յետ այնորիկ
յիններորդի ամի ԹագաւորուԹեն
իւրոյ հպարտացեալ յաղԹուԹքն
զոր յաղԹեաց սկիւԹացւոցն և Դա-
կաց և այլոց ազգաց, և զմտաւ ա-
ծեալ Եթէ կատարեալ էր յաղԹու-

թիւնն եթէ ոչ զաստուածապաշտ ժողովուրդն 'ի դիւական պաշտօնն բռնադատիցէ, և միաբանիցէ ընդ այլ ազգս, հալածանս յարուցանէր այնուհետև, հրաման տուեալ զամենայն բարեպաշտ քրիստոնեայս կամ ղոհել և կամ մահու մեռանել։ Յայնժամ առաքինի զօրականն Քրիստոսի Իգնատիոս երկուցեալ ընդ եկեղեցւոյն անտիոքացւոց, հասանէր առ Տրայիանոս թագաւոր, քանզի ընդ այն ժամանակս յանտիոքացւոց քաղաքին էր, վասն առաջնակայ ճանապարհին որ 'ի Հայս և 'ի Պարթևս։ Եւ իբրև եկաց առաջի Տրայիանոսի և սինկղիտոսին, հարցանէր զնա թագաւորն և ասէր. Ա՛յ չարադև, ո՞վ ես դու որ զհրամանաք մերովք քամահես, և զայլս հրապուրես չհնազանդել մերոց հրամանաց, զի չարդք չարաւ կոծիցեն, որ և զանտիոքացւոց քաղաքս խռովեցուցեր, մինչև յիմ լսելիս հասանել եթէ զամենայն Ասորիս դարձուցանէր 'ի հեթանոսութենէ 'ի քրիստոնէութիւն։

Իգնատիոս ասէ. Զաստուածազգեստ այր՝ չարադէպ ոչ ոք կոչէ, քանզի դէք հեռի են'ի ծառայից Աստուծոյ. ապա եթէ վասն զի նոցա ծանր եմ, չար զիս առ դևսն կոչես, վկայեմ և ես. քանզի զՔրիստոս ընկալեալ իմ յիս զերկնաւոր Թագաւորն, լուծանեմ զամենայն մենքենաւոր նենգութիւնս նոցա. օ՞չ եթէ կարէի և զքեզ ևս, ով Թագաւոր, շրջել 'ի կռապաշտութէ և ընծայել ամենեցունցն Աստուծոյ, և սիրելի Քրիստոսի կացուցանել, և հաստատագոյն առնել քեզ զԹագաւորութիւնդ։

Տրայիանոս ասաց. Եթէ կամիս ընդ սիրելիս իմ համարել, փոխեաց յայդպիսի կամաց քոց և զոհեա աստուածոցն, և լեր քահանայապետ մեծին Արամազդայ, և Թագաւորեա ընդ իս։ Իգնատիոս ասաց. Ընորհ զայն արժան է առնուլ և առաւելուլ ումեք որ ոչ ինասէ, որ ոչ ապականէ ոգւոյ, և ոչ լինի առիթ յաւիտենական տանջանաց. այլ դու զոր խոստանաս ինձ՝ ոչ ինչ համա-

րիմ ամենևին. քանզի ոչ պաշտեմ զաստուածս որ ոչ գիտեմ, և ոչ զԱրամազդն թէ ով ոք ի՞նչ է բնաւ. և ոչ թագաւորութեան երկրի ցանկամ, քանզի զի՞նչ օգտեցայց եթէ զաշխարհս ամենայն շահեցայց և զոգիս իմ կորուսի՞ց: Տրայիանոս ասաց. Թուի ինձ եթէ բաժ ի՞ցես'ի զգայութէ իմաստութե՞, և վասն այնորիկ արհամարհես զխոստումն իմ: Ուստի եթէ զայրացուցանես զիս, ամենայն չարաչար հարուածովք տանջեցի՞ց զքեզ, ոչ միայն իբրև զանհնազանդ՝ այլ իբրև զապաշնորհ և զընդդիմակաց եղեալ հրամանաց սինկղիտոսին, և զչզոհել աստուածոցն: Իգնատիոս ասաց. Արա որ ինչ հաճոյ թուի քեզ, քանզի ես ոչ զոհեմ. և զայս գիտեա եթէ ոչ հուր և ոչ խաչ և ոչ երկիւղ գազանաց և ոչ հաշուումն անդամոց և ոչ այլ ինչ դժնդակ տանջանք հաւանեցուցանել կարեն զիս ապաստամբել յԱստուծոյ կենդանւոյ, քանզի ոչ սիրեմ զառժամանակեայ կեանս, այլ զՔրիստոս որ վասն իմ մեռաւ և յարեաւ:

Սինկղիտոսն ասաց. Մեք գի-
տեմք եթէ աստուածքն անմահք
են, դու զիա՞րդ ասես թէ մեռաւ։
Իգնատիոս ասաց. Վասն մատակա-
բարութեան իրիք մեռաւ և յետ ե-
րից աւուրց յարեաւ փրկիչն մեր.
իսկ ձեր աստուածքն մեռան իբրև
զմահկանացու, և ոչ ևս յառնել կա-
րեն։ Նոյն ինքն Արամազդ աւանիկ
որ 'ի Կրետէ թաղեալ կայ. Ասկղէ-
պիս զանթիւ սատակեալ, յայլուսմ
վայրի անկեալ գնի. Ափրոդիտէս
հանդերձ Կիրինեաւ 'ի Պամիոս
թաղեալ կայ. Հերակլէս հրկէզ ե-
ղեալ 'ի միւս ևս տեղւոջ. և արժանի
էին այնպիսի պատժոց աստուածքն
ձեր, վասն զի սուտք են և սնո-
տիք և չարագործք և ապականիչք
մարդկան։ Իսկ մեր տէրն Յիսուս
Քրիստոս, թէպէտ և խաչեցաւ և
մեռաւ, այլ եցոյց զիւր զօրութիւնն.
քանզի յառաջ քան զխաչելն նորա՝
դեռք զահի հարեալ խոսաովանէին ե-
թէ դու ես որդի Աստուծոյ կենդան-
ւոյ, և առաջի անկեալ աղաչէին,
զի մի յառաջ քան զժամանակն սան-

ջեսցէ զնոսա. ուստի զմեռեալսն յարուցանէր հրամանաւ, և զԺոխք սարսեալ դողային 'ի նմանէ, և զոգին զոր ունէր բռնութեամբ կամեցաւ արձակել յառաջ քան զդիմելն փրկչին մերոյ 'ի դժոխս, զի ինքն անպատիժս մնասցէ: Եւ իբրև մատակարարեցաւ մահն 'ի ձեռն խաչին, ելեալ 'ի դժոխս՝ զյաւիտենից ըմբռնեալ զհոգիսն յարուցեալ, և կապեալ զմահ կապանօք անլուծելիս, ետ 'ի պահեստ յորում աւուր դատի զտիեզերս: Եւ զինչ ևս ասացից, զի ոչ բաւէ ժամանակս պատմել զնորա զսքանչելիսն, զի զդևս հալածէր, զբորոտս սրբէր, զանդամալոյծս հաստատէր, կուրաց տեսանել տայր, զգօսացեալս և ըզկաղս ողջացուցանէր, զխուլս բժշկէր. և զայդ ամենայն արարեալ, չառնէր արժանի գոնեայ ասել ախտին եթէ թող զոր ունիս, այլ զինչ. անդամալուծին ասէ, արի առ ըզմահիճս քո. և կուրին զաչս կաւոփն ծեփեալ՝ զկաւն 'ի լուսաւորութիւն աչացն դարձուցանէր, և յետ յա-

թուլթեան իւրոյ զնաչահանուն որք
ոչ հաւատացինն 'ի նա՝ 'ի ձեռն ձեր
պատուհասեաց : Եւ դարձեալ աս-
տուածքն ձեր 'ի միոջէ ճշմարիտն
Աստուծոյ դատապարտեցան իբրև
զչարագործս : Իսկ տէրն մեր 'ի
մարդոյ չարաց չարչարեցաւ , որք
ոչ համբերէին նորա յանդիմանու-
թեանն , և ամենայն բարեաւ լցեալք
'ի նմանէ՝ անձիրք առ տուիչն երևե-
ցան : Տրայիանոս ասէ . Խրատ տամ
քեզ փախչել 'ի մահուանէ և ընթա-
նալ 'ի կեանս : Իգնատիոս ասաց .
Բարիոք խրատ տաս , ով թագաւոր .
քանզի և ես փախչիմ 'ի յաւիտե-
նական մահուանէն , և ընթանամ 'ի
մշտնջենաւոր կեանսն :

Տրայիանոս ասաց . Եւ քանի՞ մահք
են : Իգնատիոս ասաց . Երկու՝ մի
ժամանակեայս , և մի յաւիտենա-
կանն . նոյնպէս և երկու կեանք , մի
սակաւժամանակեայս և մի մշտնջե-
նաւորականն : Տրայիանոս ասաց .
Ոչ եկիր այսր ճարտարաբանել ,
այլ զոհեա աստուածոցն և խոտո-
րել 'ի տանջանացն , զի ոչ լաւ ես

դու՝ քան զԾերակոյսդ մեր։ Իգնատիոս ասաց. Որոց աստուածոց զոհեցից. այնմ որ վասն շնութեան զերեքտասան ամիս 'ի կարաս արգելեալ կայր, եթէ այնմ որ վրիպեցաւ յըղձմանէ անտի և 'ի կնոջէն յաղթահարեցաւ. կամ այնմ որոյ զպըճղունն բևեռեալ էր պղնձի կապանօք. և կամ կնամարդոյն որ 'ի Տիտանացն պատառեցաւ. եթէ այնոցիկ որ զԵլիոնի պարիսպն շինեցին և 'ի վարձուցն անամահակ.ք ելին. ես ամաչեմ և մարդիկ անուանել զնոսա, թող թէ աստուածս, այլ կախարդս և ապականիչս մարդկան, մանկանց և օտար կանանց, յարծուի և 'ի կարապ և 'ի ցուլ և յոսկի և 'ի վիշապ կերպարանեալք, ոչ վասն բարւոյ ինչ իրի, այլ 'ի լուծումն օտար հարսանեաց, յորոց արժան էր ձեզ գարշել, և ոչ եթէ երկիր պագանել. առ այնպիսիսն կանայք ձեր յաղօթս կան, զի այնպէս զգաստութիւն պահեացեն առ ձեզ։ Տրայիանոս ասաց. Ես եղէ քեզ պատճառ զաստուածն թշնամանելոյ, վասն

զի ոչ տանջեցի զքեզ։ Իգնատիոս ասաց. Ասացի վաղ իսկ եթէ պատրաստ եմ յամենայն տանջանս, և յօրինակ ամենայն մահու, վասն զի փութամ առ Աստուած։ Տրայիանոս ասէ. Աստուածովքն, զի եթէ ոչ զողջասցիս և զոհեսցես, յեսոյ զըջանալ ունիս. արդ յառաջ քան ըզջարչարելն խնայեա 'ի քեզ։ Իգնատիոս ասաց. Եթէ ոչ խնայէի յիս, առնէի զհրամայեալդ առ 'ի քէն։ Տրայիանոս ասէ ցզինուորսն. կապարեայ գնդիւք հարէք զթիկունս դորա, և նոքա առնէին վաղվաղակի զհրամայեալն 'ի նմանէ։ Իգնատիոս ասաց. Ահեցուցէք, ով թագաւոր, զփափագս իմ առ Տէր։ Տրայիանոս ասաց. Երկաթի եղնգամբք զկողս դորա քերեցէք և աղիս շփեցէք։ Իգնատիոս ասաց. Ամենևին միտք իմ առ Աստուած են, և տանջանաց քոց բնաւ չառնեմիթոյթ։ Տրայիանոս ասաց. Զոհեա աստուածոցն։ Իգնատիոս ասէ. Որոց աստուածոց. կարծեմ եթէ եգիպտացւոցն հրամայես ինձ զոհել, եզին և քաղի և

կապկի և քարբի թունաւորի, գայ-
լոյ և շան, կամ կոկորդեղոսի, կամ
պարակականն հրոյ, կամ ծովային ջը-
րոյ, և կամ սանդարապետին Պղա-
տոնի (1), կամ Հերմեայ գողախի-
ժի։ Տրայիանոս ասաց. Ասացի քեզ
եթէ զոհեա աստուածոցն. քանզի
զայդ ասել քեզ ոչ ինչ օգուտ։ Իգ-
նատիոս ասաց. Եւ ես ասացի քեզ
եթէ ոչ զոհեմ, և ոչ 'ի բաց կամ 'ի
միջէ միայնոյն Աստուծոյ որ արար
զերկինս և զերկիր և զամենայն որ
է 'ի նոսա, որ ունի իշխանութիւն
ամենայնի, որ է Աստուած հոգւոյ
և թագաւոր ամենայն զգայնոյ և
մտաւորի։ Տրայիանոս ասաց. Եւ
ո՞ արգելու զքեզ և զնա պաշտել, է-
թէ արդարեւ է Աստուած, և զաս-
սա՝ զոր ամենեքին աստուածս խոս-
տովանիմք։

Իգնատիոս ասաց. Բնական դի-
տութիւն յորժամ բնակէ 'ի մարդն,
ոչ համեմատէ ընդ Ճշմարտութեանն
զատութիւն և ընդ լուսոյ զխաւար
կամ ընդ քաղցրոյ զդառնն։ Իսկ որ
ոչն որոշեն զայսոսիկ 'ի միմեանց,

նոցա աւարտեալ կայ վայն, քանզի զինչ հաղորդութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ զինչ կայ մասն հաւատացելոյ ընդ անհաւատի, և կամ զինչ զուգականութիւն տաճարի Աստուծոյ ընդ կուռս. կամիս, ով թագաւոր, զի ասացից քան ճշմարիտ որ հաւանեցուսցէ զքեզ թէ արդարեւ ընդ տանջանօք է որ թողու զճշմարիտն Աստուած և առ չաստուածսն փախչի. եթէ ոք 'ի քոյոց զօրականացդ ապստամբէր 'ի քումմէ թագաւորութենէդ, և առ այլ ոք ընթանայր, զինչ արդեօք առնէիր այնպիսւոյն, հարկ է թէ 'ի տանջանս մատնէիր զնա, և զոր հակառակն քեզ անուանէր թագաւոր՝ թողեալ զքեզ: Տրայիանոս ասաց. Այդ ճշմարիտ է: Իգնատիոս ասաց. Եւ արդ դու զի՞ բռնադատես զիս զոհել չաստուածոցն. քանզի այդու օրինակաւ և զքեզ պատժէ ճշմարիտն Աստուած, և զիս առաւել եթէ անասայցեմ քեզ:

Տրայիանոս ասաց. Պարզեցէք ըզձեռս դորա և զոտս, և լի արարէք

հրով։ Իգնատիոս ասաց. Ոչ հուր այրելի և ոչ ժանիք գազանաց և ոչ ցրուումն ոսկերաց և ոչ յօշուումն անդամոց և ոչ բռնութիւն սատանայի վարատեսցէ զիս 'ի սիրոյն Քրիստոսի։ Տրայիանոս ասաց. Պըրտու խուղով թրջեցէք, և լուցեալ ըզկողս դորա խարշեցէք։ Իգնատիոս ասաց. Կարծեմ թէ մոլորեալ ես, ով թագաւոր, և ոչ իմանաս եթէ Աստուածն որ յիս կենդանի է, նա զօրացուցանէ զիս. քանզի ես ոչ էի ատակ համբերել տանջանաց քոց։ Տրայիանոս ասաց. Կարծեմ եթէ երկաթի լցես և խատացեալ իբրև զսալ. ապա եթէ ոչ՝ հաւանէիր արդեօք մորմոքեալ 'ի տանջանացդ։ Իգնատիոս ասաց. Ոչ վասն զի չըզդամ տանջանացդ՝ ժուժկալ լինիմ, այլ յաղագս սիրոյն Քրիստոսի և յուսոյ հանդերձեալ բարեացն թեթեթև համարիմ զցաւս։ Քանզի ոչ հուր կիզիչ և ոչ ջուր ողողիչ շինջուցանել կարէ զսէրն որ առ Աստուած։ Տրայիանոս ասաց. Բերէք հուր և փայտ և լուցէք, և արա-

րեալ կայծակունս հրոյ տարածե-
ցէք, և կացուցէք 'ի վերայ զԻգնա-
տիոս. զի գոնեայ այնպէս հաւա-
նեալ զոհեսցէ աստուածոցն: Իգնա-
տիոս ասաց. Հուր քո այրելի՝ 'ի գի-
տութիւն ձգէ. զիս յաւիտենական
հրոյն, և ժամանակեայդ այդ յուշ
առնէ մի անկանիլ 'ի յաւիտենական
'ի հուրն: Տրայիանոս ասաց. Կար-
ծեմ եթէ կախարդ ես, և վասն այնո-
րիկ արհամարհես զտանջանսդ. ա-
պա թէ ոչ՝ անսացեալ էր քո մեզ,
այդչափ 'ի մէնջ չարչարեալ: Իգնա-
տիոս ասաց. Ոչք 'ի դիւաց փախչին
իբրև 'ի թշնամեաց Աստուծոյ և ըզ-
կուռս գարշելիս համարին, զի՞րդ
իցեն կախարդք. ուստի ոչ մեք,
այլ դուք որ զնոսա պաշտէք՝ անկ
էք այնպիսի իրաց, այլ մեզ օրէնս
եդեալ է զկախարդս ոչ թողուլ կեն-
դանիս, և զթռչունս և զհմայս ոչ
ապրեցուցանել, և զդիրս այրել և
զայնպիսեաց բժժագործացն իբրև
զապականեալ և զպղծալից: Ապա
ուրեմն ոչ ես եմ կախարդ, այլ
դուք որ դիւաց երկիր պագանէք:

Տրայիանոս ասէ. Աստուածովքն, զի վասասակեցայ 'ի քեզ, Իգնատիէ, ոչ գիտեմ որպիսի տանջանօք վը-տանգեալ խոշտանգեցից զքեզ, զի տուաւել հաւանեսցիս կամաց մերոց: Իգնատիոս ասաց. Մի՛ աշխատիր, ով թագաւոր, այլ թէ կամիս 'ի հուր մատնեա, կամ սուսերաւ կտրեա, կամ յանդունդս ընկեա, կամ գա-զանաց արկ. զի գիտասցես եթէ ոչինչ յայսցանէ դժնդակ է ինձ առ սէրն Քրիստոսի: Տրայիանոս ա-սաց. Որո՞ւմ յուսոյ ապասես, Իգ-նատիէ, մեռանել 'ի չարչարանաց որոց ևս համբերես: Իգնատիոս ա-սաց. Որք զԱստուած ոչ գիտեն, անգէտ են և բարեացն որ յԱստու-ծոյ պարգևին ոչ հեալ բարեպաշ-տիցն. վասն որոյ համարին եթէ աստ է գոյաւորութիւն իբրև զանբան անտանոց. և ոչ ինչ լաւագոյն յետ աստի վախճանելոց համարին. այլ մեք որ գիտեմք զբարեպաշտութիւն, հաւատամք քաջալերութեամբ և գիտեմք զի յետ վախճանելոյն մերոյ միւսանգամ յարուցեալք զյաւէրժ

կեանան ընդունելոց եմք 'ի Քրիս-
տոս Յիսուս 'ի տէր մեր, անպակաս
և անյաջորդ. յորմէ փախուցեալ են
ցաւք և տրտմութիւնք և հեծու-
թիւնք։

Տրայիանոս ասաց. Ես լուծա-
նեմ զպաշտօնդ ձեր, և ուսուցանեմ
զդաստանալ, և չկալ հակառակ
հռոմայեցւոց հրամանաց։ Իգնա-
տիոս ասաց. Եւ ո՞վ կարէ լուծա-
նել զչինուածն Աստուծոյ. քանզի
և թէ ձեռնարկիցէ ոք, ոչ ինչ կարէ
վճարել, բայց միայն աստուածա-
մարտ լինի. այլ քրիստոնէութիւն
ոչ միայն զի չլուծանի 'ի մարդկանէ,
այլ ոչքան օրէն է յաճուժն և 'ի
մեծութի գայ զօրութեամբն Քրիս-
տոսի, և նոյնպիսի մեծութեամբ և
պայծառութեամբ և պարկեշտու-
թեամբ լուսաւորեալ ճառագայ-
թիւք յառաջ ևս եկեսցէ. քանզի լը-
ցաւ երկիր ամենայն գիտութեամբ
Տեառն և ծանօթութեամբն իբրև
զջուրս բազումս որ ծածկեն զծովս.
այլ դու ոչ բարուոք առնես, ով թա-
գաւոր, հերձուածս կոչես զքրիս-

տոնէութիւնս, վասն զի յոյժ հեր-
ձուած 'ի քրիստոնէութենէ հեռի է.
քանզի քրիստոնէութիւն է գիտու-
թիւն ճշմարտին Աստուծոյ, և միած-
նի նորա, և անձառ ըստ մարմնոյ
տնօրէնութեան նորա, և խորհրդոց
և կրօնից բարեաց ուղղութիւն, որք
նուիրեալ են անշուշտ և գեղեցիկ
պաշտամանն մերոյ. զո՞ ոք 'ի մէնջ
գիտացեր խռովասէր (2) և պատե-
րազմակամ և ոչ հնազանդեալ իշխա-
նութեանց և պետութեանց. յորմէ
անվտանգ հնազանդութիւն, և միա-
բանեալ խաղաղութեամբ և սիրով.
քանզի հատուցանեմք իւրաքանչիւր
զպարտս, որում զհարկ զհարկն,
որում զերկիւղ զերկիւղն, որում
զմաքս զմաքսն, որում զպատիւ զպա-
տիւն: Եւ փութամք չպարտել ինչ
ումեք, այլ զմիմեանս սիրել. վասն
զի ուսեալ եմք 'ի Տեառնէ մերմէ մի
զմերձաւորն միայն սիրել, այլ և ըզ-
թշնամին, և բարի առնել ատելեաց,
և աղօթս առնել 'ի վերայ բռնադա-
տողացն զմեզ և հալածչաց. զինչ
ընդդիմակաց եղև կարդիս մեր, աղէ

ասա յորմէհետէ սկսաւ քրիստոնէ-
ութիւն քարոզութիւն, միթէ չար ինչ
եղև, կամ խաղմ ինչ գործեցաւ 'ի
հռովմայեցւոց իշխանութենէ, ոչ բա-
զում իշխանութիւնքն 'ի մի իշխանու-
թիւն փոխեցան. և Աւգոստոս կայսր
նախնին քո, առ որով փրկիչն մեր
ծնաւ 'ի կուսէն և եղև մարդ, որ
էջն Աստուած բանն, և վասն մեր
մարմնացաւ, ոչ յիսուն և եօթն ամ
և ամիսս եօթն կալաւ զիշխանութիւն
հռովմայեցւոց, որպէս և ոչ այլ ոք
որ յառաջ քան զնայն էին. ոչ ա-
մենայն ազգք հնազանդեցան նմա:
Եւ որ յառաջագոյն անխառնու-
թիւնն էր ազգաց և ատելութիւն
առ միմեանս, լուծաւ 'ի փրկչին մե-
րոյ գալստենէ: Սինկղիտոսն ասաց.
Այո, այդ այդպէս է որպէս ասա-
ցերդ, Իգնատիէ. այլ զայն ցասու-
ցեալ եմք, զի զպաշտօն աստուա-
ծոցն խափանեաց: Իգնատիոս ասաց.
Ով երանելի և փառաւոր ծերակոյտ,
որպէս զբռնութիւն հեթանոսաց
հնազանդեաց ընդ հռովմայեցւոց իշ-
խանութեամբ, զոր աստուածեղէն

բանն գաւազան երկաթի կոչէ, նոյնպէս զբռնութիւն չար և մոլեկան դիւացն հալածեաց 'ի մարդկանէ, և զմոլորութիւն կռապաշտութեան խափանեաց, զմին և զմիայն Աստուած պաշտել որ է 'ի վերայ ամենեցուն՝ ուսոյց. և ոչ միայն զայդ, այլ և 'ի դառն ծառայութենէ արիւնարբու անողորմ հոգւոցն բուժեաց. վասն զի միշտ մահուամբ որդւոցն ձերոց յօրացան դէք։ Աղէ ասացէք, ո՞չ աղգային պատերազմաւ շաղախէին զձեզ. ո՞չ ամօթալիս լինել զձեզ հարկէին, մերկս մուծանել 'ի տեսարանն, եղկանայս այնպէս մերկացուցանել, իբրև 'ի գերութեան ցոյցս շրջեցուցանել պատրաստէին. ո՞չ արեամբ շաղախէին զերկիր, և զամենեցուն ոգիս հանապազ պըղծութեամբք պղտորէին։ Աղէ հարցէք զսկիւթացիսն եթէ ո՞չ Արտեմեայ կոյս զենուին. թերևս դուք արդեօք յուրաստ կայցէք ամաչեցեալք վասն կուսին զոր զենուիք Կրոնեայ, այլ և այժմ ևս պարծին ելլենացիք 'ի վերայ այնպիսի պղծութեանց և

մարդազոհութեանց։ Տրայիանոս ասաց. Աստուածովքն, զի զարմանամ ընդ քո շատուամնութիւնդ, թէպէտ և զկրօնդ ոչ գովեմ։ Իգնատիոս ասաց. Եւ յինմ իմիք ըստ գտեր զպաշտօնս մեր։ Տրայիանոս ասաց. Զի տեառն արեգական երկիր ոչ պագանէք, և ոչ երկնից և ոչ ամենաբոյծ (3) լուսնի։ Իգնատիոս ասաց. Եւ ո՞ ոք կամեցի կամօք երկիր պագանել արեգական, որ 'ի կերպարանի է և ընդ տկարութեամբ անկեալ, որ 'ի բաց դնէ զՋերմութիւն, և միւսանգամ 'ի ձեռն հրոյ անդէն առնու զեղեալն, որ ընդ նուազութեամբ անկանի, որ ոչ երբէք կարէ զիւր կարգաւն անցանել առանց այնորիկ որ կարգեաց զընթացսն կատարել։ Եւ երկնից զիա՞րդ պագանիցէ երկիր, որ ամպով ծածկի, զոր իբրև զփեղկս արկեաց արարիչն, և իբրև զկամար կանգնեաց, և իբրև զքուեայ հաստատեաց. և կամ լուսնի որ աճէ և մաշի և ընդ կարեօք է, զիա՞րդ պարտ է երկիր պագանել։ Այլ ասիցես՝ եթէ վասն

զի զլոյն պայծառ ունին, այնր ա-
ղագաւ պարտ է երկիր պագանել
նոցա. այլ չէ Ճշմարիտ այս բան,
քանզի ծագել յերկիր առաւնմարդ-
կան և ոչ յերկրպագութիւն առ-
նուլ. 'ի ջեռուցանել և 'ի հասուցա-
նել զպտուղս կարգեցան, 'ի պայ-
ծառացուցանել զտիւ, և լուսաւո-
րել զգիշեր. այլ և աստեղք երկնից
'ի նշանս կարգեցան և 'ի ժամանակս
և 'ի շրջանակս և 'ի մխիթարութիւն
նաւորդաց որ 'ի ծովու, և ոչ ոք
յայսցանէ երկրպագութեան արժա-
նի են, ոչ ջուր զոր Պիսիդոնն կո-
չէք, ոչ հուր զոր Հեփեստոն ա-
նուանէք, ոչ օդ՝ զոր Հերա ասացէք,
ոչ երկիր՝ զոր Դեմետրէ անուանե-
ցէք, ոչ պտուղք քանզի այս ամե-
նայն 'ի գարման մեզ կարգեցան,
սակայն ապականացուք են և ան-
շունչք: Տրայիանոս ասաց. Ո՞չ աւա-
նիկ ասացի զառաջինն, եթէ դու ես
որ հրապուրեցեր զամենայն արևե-
լեայս չպաշտել զաստուածն: Իգ-
նատիոս ասաց. Եւ ցասչիս, ով թա-
գաւոր, զի խրատ ասմք ոչ երկիր

պագանել ոչնչեցն և ոչ պաշտել զնոս-
սա, այլ զՃշմարիտն Աստուած զկենդ-
դանի, զարարիչն երկնի և երկրի, և
զմիածին որդի նորա զՅիսուս Քրիս-
տոս և զՀոգին սուրբ, քանզի այս
է Ճշմարիտ գիտութիւն միայն և
ուսումն ստոյգ. խոստովանի և յո-
րանայ և յղփանայ այսպիսի կրօ-
նիւք մեր վարդապետութիւնս: Այլ
հեթանոսաց բազում անաստուած
բազմաստուածութիւն՝ դիւրագայթ
է (4) և անվկայ, յածեալ յամե-
նայն կողմանց, և յոչնչի վերայ են
հաստատ կացեալ, քանզի խրատ
առանց յանդիմանութեան մոլար
շրջի: Զի՞ արդեօք չիցէ ստութիւն,
զի միանգամ ասէք երկոտասան աս-
տուածք, և միւսանգամ բազմագոյնս
քան զնոյն ասէք: Տրայիանոս ասաց.
Ոչ ևս յանձն առնումք քեզ և ոչ
համբերեմք ամբարհաւաճութեանդ
քո, զի յոյժ ձաղկես զմեզ Ճարտա-
րաբանութեամբդ քո կամեցեալ յաղ-
թել մեզ: Արդ այսուհետև զոհեա՛ս,
շատ է քեզ Ճարտարախօսութիւնդ
որ վասն մեր, ապա թէ ոչ՝ միւսան-

գամ տանջեացիս, յեռոյ գազանաց
ևս մատուցից։ Իգնատիոս ասաց.
Մինչև յերբ սպառնաս և ոչ կատա-
րես, ես քրիստոնեայ եմ և գիւաց
չորաց ոչ զոհեմ, այլ երկրպա-
գեմ միայնոյ Ճշմարտին Աստուծոյ
հօր տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որ շնորհեաց ինձ զլոյս գի-
տութեան իւրոյ, որ եբաց զաչս
իմ՝ի նկատումն աքանչելեաց իւրոց.
զնա միայն պաշտեմ և պատուեմ.
վասն զի նա է Աստուած և տէր և
թագաւոր և միայն հզօր։

Տրայիանոս ասաց. Հրեղէն պատ-
գարակօք մաշեմ զքեզ, եթէ ոչ զըղ-
ջանայցես։ Իգնատիոս ասաց. Բար-
ւոք է, ով թագաւոր, զոյնումն որ
վասն չարեաց է, այլ վասն բարեաց
ընդ դատապարտաւ է, քանզի՝ի լա-
ւագոյնն ընթանալ պատուիրեալ
եմք, և ոչ եթէ վատթարագոյնն.
բարեպաշտութեան ամենևին զուս-
գակն յերկրի չինք։ Տրայիանոս ա-
սէ. Քերեցէք զկողս դորա երկաթի
եղնգամբք, և ասացէք դմա, հաւա-
նեաց ինքնակալ թագաւորին, և զո-

հեա աստուածոյն, ըստ հրամանի սինկղիտիսին։ Իգնատիոս ասաց. Եա՛ի հրամանէն Աստուծոյ երկնչիմ, որ ասացն եթէ ոչ եղիցին աստուածք բայց յինէն, և որ զոհեսցէ այլոց աստուածոց սատակեսցի։ Սինկղիտասի և Թագաւորի ոչ լսեմ, և ոչ հաւանիմ եթէ անօրինել ինձ հրամայեն. վասն զի օրէնքն մեր ասեն եթէ ոչ առցես ակն հզօրի, և ոչ եղիցես ընդ բազումս՝ ի չարիս։ Տրայիանոս ասաց. Քացախ հանդերձ աղիս արկէք՝ ի վերայ վիրաց դորա։ Իգնատիոս ասաց. Ամենայն որ վասն Քրիստոսի խոստովանութեանն լինի յիս՝ գիտեմ եթէ վարձուց առիթ լինի ինձ, վասն զի չարժեն չարչարանք այժմեան ժամանակիս զհանդերձեալ փառսն որ յայտնելոց են՝ ի մեզ։ Տրայիանոս ասաց. Խնայեա՛ ի քեզ այր դու և հրամանաց մերոց հաւանեա, ապա թէ ոչ դառնագոյն ևս տանջանօք տանջեցից զքեզ։ Իգնատիոս ասաց. Եւ՞ով մեկնեսցէ զմեզ՝ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն կամ անձկութիւն կամ հալածումն

կամ սով կամ սուր, վիշտք կամ մեր-
կութիւն։ Հաւատամ թէ ոչ կեանք և
ոչ մահ մեկնել զիս 'ի բարեպաշտու-
թենէն կարիցէ, զվստահ եղեալս
'ի զօրութիւն Տեառն իմոյ։ Տրայիա-
նոս ասաց. Կարծեա՞ս եթէ յաղթեա
ինձ ժուժկալութեամբդ քո։ Իգնա-
տիոս ասաց. Ոչ կարծեմ, այլ հա-
ւատամ եթէ յաղթեցի և յաղթեմ,
զի գիտասցես եթէ քանի՞ ինչ է 'ի
մէջ բարեպաշտութեան և ամբարշա-
տութեան։ Տրայիանոս ասաց. Ա-
ռէք զդա, և շղթայս զդովաւ արկեալ
և զոտն 'ի կոճեղ պնդեալ և զգու-
շութեամբ պահեցէք 'ի նեղքնումն
բանտին, և մի ոք իշխեսցէ տեսանել
զդա ամենևին, և զերիս տիւս և զե-
րիս գիշերս մի հաց կերիցէ և մի ջուր
արբցէ, զի յետ երից աւուրց առցէ
զվրէժն որում արժանի է։ Սինկղի-
տոսն ասաց. Եւ մեք միաբանիմք
այդմ բանի. վասն զի զմեզ զամենե-
սեան թշնամանեաց հանդերձ թա-
գաւորաւն, և ոչ հաւանեցաւ հրա-
մանաց մերոց, այլ և վիճեցաւ զանձն
իւր անուանեալ քրիստոնեայ։ Իգնա-

տիոս ասաց. Օրհնեալ է Աստուած և հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բազում գթութեամբ իւրով արժանի արար զիս հաղորդակից լինել չարչարանացն Քրիստոսի և վկայ հաւատարիմ ճշմարիտ աստուածութեան իւրոյ։

Եւ յաւուրն երրորդի կոչեցեալ Տրայիանոսի զսինկղիտոսն զի ասցէ նմա զվճիռն մահաբեր, քանզի փութայր 'ի Հայս և 'ի Պարթևս։ Եւ իբրև ածաւ սուրբն զառաջեաւ, ասէ ցնա Տրայիանոս. Ես զարմանամ ընդքո եթէ զիարդ կեաս յետ այդչափ տանջանացդ և սովոյդ. այլ գոնեա այժմ հաւանեաց ինձ, զի թերևս յառաջիկայդ տանջանացդ ապրեսցիս, և մեր սիրելի լինիցիս յայսմ հետէ։ Իգնատիոս ասաց. Թուի ինձ եթէ զկերպարանս մարդոյ ունիս և զբարս աղուեսու, որ քծնի ձևոփն և նենգէ մտօքն, և դու մարդասէր բանս իմն ստեղծաբանես 'ի լսելիս իմ, և 'ի ներքոյ խորհիս առողջ և ոչինչ. արդ լուր յայտնապէս եթէ մահու այսուհետև փոյթ չառնեմ,

և ոչ զկենացս զայսցանէ հոգամ. Յիսուսի Քրիստոսի ցանկամ, որով սիրոյ ես փոխանակ եղէց։ Տրայիանոս ասաց. Զխաչեալն առ պոնտացւոյ Պիղատոսիւ ասես։ Իգնատիոս ասաց. Զայն ասեմ որ խաչեաց զմեղս և զգտող նորա, և զամենայն չարութիւնս դիւաց դատապարտեաց և հնազանդեաց 'ի ներքոյ ոտից այնոցիկ, որք զՔրիստոս ունին բնակեալ 'ի սիրտս իւրեանց։ Տրայիանոս ասաց. Արդ և դու զՔրիստոս ընդ քեզ շրջեցուցանես։ Իգնատիոս ասաց. Այո, քանզի գրեալ է թէ բնակեցայց 'ի նոսա և գնացից 'ի նոսա։

Յայնժամ բարկացեալ Տրայիանոս, վճիռ ետ և ասէ. ԶԻգնատիոս՝ որ ասաց յինքեան ունել զխաչեալն, հրամայեմք կապել, և այնպէս 'ի ձեռն զինուորաց տանել 'ի մեծ քաղաքն Հռոմ, զի անդ առաջի բազմութեանն 'ի տեսիլ և 'ի զբօսանս նոցա կերակուր լիցի 'ի գազանաց։ Եւ լուեալ զվճիռն զայն սրբոյն, մեծաւ խնդութիւն աղաղակեալ ասէր.

Գոհանամք զքէն Տէր Յիսուս, զի կատարեալ սիրով քո արժանի արարեր զիս պատուոյ առաքելոյն Պաւղոսի, նոյնպիսի երկաթի կապանօք կապել և ինձ։ Եւ զայս ասացեալ հանդերձ մեծաւ ուրախութեամբ արկանէր զիւրեաւ զշղթայսն, և նախ յաղօթս կացեալ յեկեղեցւոջն և զնա հանդերձ արտասուօք յանձն արարեալ Տեառն։ Իբրև զնոյ նշանաւոր գեղեցիկ հօտի առաջնորդ 'ի գազանաբարոյ և 'ի դժնդակ զինուորաց Իբրև 'ի գայլոց յափշտակեալ լինէր, զի ածցի 'ի մեծն Հռոմ գէշ գազանաց լինել։ Մեծաւ յօժարութեամբ այնուհետև և ուրախութեամբ և ցանկութեամբ որ 'ի չարչարանս՝ Իջեալ յԱնտիոքէ 'ի Սելևկիա, անտի՝ նաւէր. և հասեալ 'ի զմիւռնացւոց քաղաքն հանդերձ բազում տառապանօք Իջանէր 'ի նաւէն և մեծաւ ուրախութեամբ փութայր առ սուրբն Պաւղիկարպոս եպիսկոպոսն զմիւռնացւոց քաղաքին տեսանել զնա, քանզի եղեալ էին յառաջագոյն աշակերտք սրբոյ առաքելոյն

Յոհաննու. առ որ մատեալ և հաղորդեալ նմա հոգևոր շնորհացն, և պարծեցեալ 'ի կապանան, աղաչէր զնա ճգնակից լինել 'ի կապանս նմա աջողթիւք, զի կատարեսցին կամք նորա, առաւել ևս միաբան զամենայն եկեղեցիան աղաչէր զնոյն առնել։ Ընդունէին զնա այնուհետև եկեղեցիքն ասիացւոց 'ի ձեռն եպիսկոպոսաց և երիցանց և սարկաւագաց, և փութային ամենեքեան տեսանել զնա, զի թերևս առցեն 'ի նմանէ շնորհս ինչ հոգևորս, և աղաչէր զամենեսեան, առաւել ևս զսուրբն Պաւղիկարպոս զուսմնակիցն իւր ամենեքումբք հանդերձ աղօթս առնել, զի վաղվաղակի 'ի ձեռն գազանաց աներևոյթ յաշխարհէս եղեալ՝ երևեսցի առաջի երեսացն Քրիստոսի. և զայս այսպէս ասէր, վկայութիւն գնելով ամենեցուն այնչափ 'ի նա զսէրն Քրիստոսի ունել՝ մինչև զերկնաւորացն բուռն հարկանել 'ի ձեռն բարուոք խոստովանութեն և աղօթիցն այնոցիկ, որք փութային վասն նորա ճգնութեանն։ Տայր և

վարձս եկեղեցեացն որք ընդ առաջ գային նմա 'ի ձեռն առաջնորդաց, թղթովք շնորհակալութիւն, յորս գրէր հոգևոր ուրախութեամբ և աղօթից վարդապետութիւն 'ի ձեռն շնորհացն որ բղխէին 'ի նմանէ: Եւ իբրև տեսանէր եթէ ամենեքեան մեծաւ սիրով փարէին զնովաւ, երկընչէր եթէ բազում գութք սիրոյ որ 'ի նոցանէ զփոյթ նորա որ 'ի Քրիստոս և զյօժարութիւնն լուծանիցեն, վասն զի դուռն բարի բացեալ էր նորա, և զյօժարութիւնն մարտիրոսութեան: Գրէր այնուհետև աղաչելով զամենեսեան, զի մի նորա բարի առաջարկութեան խափանիչ ոք լիցի:

Թէ ո՞րպէս առ եկեղեցին հռովմայեցւոց գրեաց սուրբն՝ կարգեցաւ 'ի Ներքոյ:

Իգնատիոս՝ որ և աստուածային աստուածազգեաց մեծութեանն Հօր բարձրելոյ, Հօր Յիսուսի Քրիստոսի միածնի որդւոյն իւրոյ, եկեղեցւոյդ լուսաւորելոյ և սրբեցելոյ կամօք այ-

նորիկ որ զամենայն կամեցաւ որ ինչ
ըստ հաւատոցն և սիրոյ Յիսուսի
Քրիստոսի Աստուծոյն մերոյ, որ
նստի 'ի աջոյ վայրի հռովմայե-
ցւոց, արժանի Աստուծոյ, արժանի
վայելչութեան, արժանի երանու-
թեան, արժանի գովութեան, եր-
ժանի դիպելոյ, արժանի սրբու-
թեան և առաջնորդ սիրոյ, Քրիս-
տոսօրէն հայրանուն, որում և ող-
ջոյն ասեմ յանուն Յիսուսի Քրիս-
տոսի որդւոյ Հօր, և միացելոյ մար-
մնով և հոգւով յամենայն պատուի-
րանս նորա, լցեալ շնորհօքն Ա-
ստուծոյ աներկևանութեամբ և պար-
զելոյ յամենայն օտար գունակէ Յի-
սուսիւ Քրիստոսիւ Աստուծով մե-
րով անարատութեամբ յոյժ ուրախ
լինել. վասն զի աղօթս արարեալ
առ Աստուած՝ հասի խնդրուածոցն
առ 'ի տեսանել զձեր արժանատես
երեսդ. որչափ խնդրեցի՝ առաւել
ևս ասի. քանզի կապեալ 'ի Քրիս-
տոս Յիսուս, յուսամ ողջոյն տալ
ձեզ, եթէ կամք են արժանի լինել
վախճանի հասանել ինձ, քանզի

սկիզբնս աջողակ է յոյժ, եթէ վախ-
ճանին ևս դիպեցայց, զի զվիճակն
իմ առանց խափանելոյ առից։ Այլ
երկնչիմ՝ի սիրոյդ ձերմէ եթէ փնտ-
սեացէ ինչ ինձ. զի դիւրին է զորս
կամիք առնել, այլ ինձ դժուարին է
միւսանգամ Աստուծոյ հանդիպել,
եթէ այժմ ինայեցէք դուք յիս. և
չկամիմ զձեզ մարդահաճոյ լինել,
այլ մանաւանդ աստուածահաճոյս
որպէս և էք դուք իսկ. քանզի ոչ ես
ժամանակ ինչ երբէք գտանելոց եմ
այսպիսի պարգևի Աստուծոյ և ոչ
դուք ըստ ոյն գործոյ պատահել
եթէ լուիցէք. քանզի եթէ լուիցէք
յինէն, ես բան եմ, ապա եթէ ցան-
կայք մարմնոյս իմոյ՝ դարձեալ եղէց
սոսկ ձայն. արդ մի առաւել շնորհի-
ցէք ինձ քան զայս, զի եղէց սպանդ
մինչդեռ սեղանն պատրաստ կայ, զի
սիրով բակ առեալ ձեր երդեցէք Հօր
և ասացէք՝ի ձեռն Յիսուսի Քրիս-
տոսի, եթէ զեպիսկոպոսն Ասորւոց
արժանի արար Աստուած գտանել
յարևմուտս յարևելից կոչեցեալ.
բարւոք է ինձ մտանել յաշխարհէս

առ Աստուած, զի 'ի նա ծագեցիս. ոչ երբէք նախանձեցարուք ընդ ումեք, և ոչ զայլս ուսուցէք: Եւ արդ ես կամիմ զայն հաստատել, զոր ձեր ուսեալն է, և այլոց պատուիրէք, միայն ոյժ խնդրեցէք ինձ նեղքոյ և արտաքոյ, զի մի ասացիս միայն, այլ և կատարեցիս, և ոչ անուանեցայց միայն քրիստոնեայ, այլ և գտայց. զի եթէ գտայց, և անուանել կամիմ և կատարել, և յայնժամ հաւատացեալ կարեմ լինել, յորժամ աշխարհի ոչ երևիմ. ոչ ինչ երևեալ բարուք է, քանզի տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ 'ի Հօրէն է, մանաւանդ երևի. ոչ հրապուրանաց գործ, այլ մեծութեամբ քրիստոնէութեամբ յորժամ ատեսցի յաշխարհէ: Ես գրեմ ամենայն եկեղեցեաց և պատուիրեմ ամենեցուն եթէ յօժարութեամբ մեռանիմ վասն Աստուծոյ, միայն եթէ դուք ոչ արգելուցուք. աղաչեմ զձեզ մի ընդվայրահար (ՁՅ) խնամ ցուցանել յիս, թոյլ տուք ինձ գազանակուր լինել, որով է պատահել ինձ Աստուծոյ, ցորեան եմ ես Աստուծոյ և ժանեօք

գազանաց ապացեալ լինիմ, զի հաց սուրբ գտայց Աստուծոյ։ Ողբեցէք զգազանն, զի գերեզման ինձ լինի-ցին, և մի ինչ թողցեն 'ի մարմնոյ իմոյ, զի մի ննջեցեալ իմ ծանր ու-մեք երևեցայց։ Յայնժամ եղէց արդար և աշակերտ Յիսուսի Քրիստոսի, յորժամ զմարմին իմ աշխարհ ոչ տեսցէ։ Աղաչեցէք զՏէր վասն իմ, զի 'ի ձեռն գործոյս այսորիկ պատարագ գտայց Աստուծոյ. ոչ եթէ խբրև զՊետրոս և զՊաւղոս հրաման տամ ձեզ, քանզի նոքա ա-ռաքեալք և ես դատապարտ. նոքա ազատք, և ես մինչև ցայժմ ծառայ. այլ եթէ մեռայց, ազատ Յիսուսի Քրիստոսի, զի յարեայց 'ի մեռելոց, բայց նմա ազատացեալ։ Այժմ ու-սանիմ կապանօքս անսալ իմիք, յԱ-ստրուց մինչև 'ի Հռոմ ընդ գազանս մարտանչիմ յերկրի և 'ի ծովու, ըզ-ցայգ և զցերեկ կապեալ ընդ տասն ընձու, որ է դաս զինուորաց, որոց և երախտիս յինէն գտեալ չարագոյն ևս լինին, 'ի նոցա անիրաւութեանն ես առաւել ևս ուսանիմ, այլ ոչ եթէ

այսու արդարանամ ես, փոխանակ գազանացն՝ որ պատրաստեալ են ինձ, զոր և աղօթս առնեմ զի արագ գացին, և աղերսեմ զի վաղվաղակի կերիցեն զիս, զոյք երկուցեալ յոմանց՝ ոչ մերձենան 'ի նոսա, այլ ես բռնադատեցից թէ և նոքա ոչ կամեսցին։ Թողութիւն արարէք ինձ, ես գիտեմ զօգուտն իմ, այժմ սկսանիմ լինել աշակերտ, և կրթիմ ջցանկալ իմիք, և մի երանել երևելեացս և կամ աներևութից, զի Յիսուսի Քրիստոսի հանդիպեցայց, հուր և խաչ, ժողով գազանաց, կտրումն, բաժանումն, ցրումն ոսկերաց, հատումն անդամոց, աղումն ոսկերաց և ամենայն մարմնոց, և ամենայն չարչարանօք եկեսցեն 'ի վերայ իմ, միայն զի Քրիստոսի դիպեցայց։ ոչ ինչ օգտեսցեն զիս ծագք աշխարհի, և ոչ թագաւորութիւն յաւիտենից այսորիկ։ լաւ է ինձ մեռանել 'ի Քրիստոս Յիսուս, քան տիրել ծագաց երկրի, զնա խնդրեմ որ վասն մեր մեռաւն, զնա կամիմ որ վասն մեր յարեաւ։ Ծնունդն մեր հա-

սեալ կայ 'ի վերայ. Թողութիւն ա-
ղարէք ինձ, եղբարք, մի խափանէք
զիս 'ի կելոյ, կամեցարուք ընդ մե-
ռանելն իմ. Աստուծոյ կամեցեալ
եմ լինել, աշխարհի մի զիս շնորհէք,
և մի տարերբք իւիք խաբիք: Թոյլ
տուք ինձ զսուրբ ըսյան առնուլ,
այժմ մարդ եմ, այլ անդր երթեալ
հրեշտակ եղէց. հրամայեցէք ինձ
նմանող լինել չարչարանաց Աստու-
ծոյ իմոյ. եթէ ոք կամեսցի զնա յին-
քեան ունել, իմասցի զոր ասեմ,
և չարչարակից լեսցի, գիտացեալ
զմիտս իմ. Իշխան աշխարհիս այսո-
րիկ յափշտակեալ կամի զիս, և զխոր-
հուրդս իմ որ առ Աստուած՝ ապա-
կանել ջանայ, արդ մի ոք 'ի ձէնջ
օգնեսցէ նմա, այլ մանաւանդ յիմ
կողմ լերուք, այսինքն յԱստուծոյ.
մի զՅիսուս Քրիստոս 'ի բերան ու-
նիք, և ցանկայք աշխարհի. նա-
խանձ 'ի ձեզ մի բնակեսցէ. և եթէ
ես զձեզ աղաչեմ, մի հաւատայք
ինձ, այլ մանաւանդ հաւանիլ, ո-
րով գրեմս առ ձեզ, այլ կենդանի
գրեմ առ ձեզ և ցանկամ մեռանել:

իմ ցանկութիւն 'ի հօրէ է, և չեք յիս հուր սիրելոյ, ջուր կենդանի և խօսուն է յիս, և 'ի ներքոյ իմ աղաղակէ և ասէ, եթէ Ա՛կ առ Հայր. ոչ ցանկամ ապականացու կենաց, հացին Աստուծոյ տենչամ, որ է մարմինն Յիսուսի Քրիստոսի եղելոյ 'ի զաւակէ Դաւթի. և ըմպելոյ արեան նորա բաղձամ, որ է սէր անապական: Ոչ ևս կամիմ ըստ մարդկան կեալ, և այդ եղիցի եթէ դուք կամիք. արդ կամեցարուք, զի և դուք օգնութիւն գտանիցէք. զոր 'ի ձեռն սակաւ նշանագրացս խնդրեմ'ի ձէնջ, շնորհեցէք ինձ. յայտնեսցէ զայս ձեզ Յիսուս Քրիստոս եթէ Ճշմարիտ ասեմ, անշուշտ բերանն, որով Հայր խօսի. խնդրեցէ՛ք վասն իմ, զի դիպեցայց: Ըստ մարմնոյ ոչ գրեցի ձեզ, այլ ըստ հոգւոյ և ըստ կամացն Աստուծոյ. եթէ չարչարեցայց, յայտ է եթէ կամեցարուք. ապա եթէ խոտան գտանիցիմ, յայտ է եթէ ատեցէ՛ք զիս: Յիշեցէ՛ք յաղօթս ձեր զեկեղեցին Աստուոց, որ փոխանակ իմ այսուհետև Աստու-

ծով հովուի. միայն Յիսուս Քրիս-
տոս այց արասցէ նմա և սէր ձեր.
այլ ես ամաչեմ կոչել զիս զոք 'ի նո-
ցանէ, զի չեմ արժանի, վասն զի
կրսեր եմ նոցա և տրուպ, այլ յոչ-
սամ ողորմութիւն գտանել եթէ
Աստուծոյ դիպեցայց։ Ողջոյն ասա-
ձեզ հոգի իմ, և սէր ամենայն եկե-
ղեցեաց, որք ընկալան զմեզ յանուն
Յիսուսի Քրիստոսի, ոչ ինքեւ զոր-
ղևոր. քանզի որ չէր ինձ անկ ըստ
մարմնաւոր Հանապարհի՝ ըստ քա-
ղաքի. քաղաքի յառաջէին։ Գրեմ
զայս ձեզ 'ի Զմիռնէ 'ի ձեռն եփե-
սացւոց որք և արժանի են մեծի ե-
րանութեան։ Է ընդ իս Եւկրոկոս
ցանկալի անուն, հանդերձ այլովքն
որք եկին ընդ իս յԱսորւոց մինչև
'ի Հռոմ'ի փառս Աստուծոյ. հաւա-
տամ եթէ գիտէք դուք, որոց և աղ-
արարէք զմօտաւորութիւնս իմ.
քանզի ամենեքեան արժանի էին
Աստուծոյ և ձեզ, զորս և արժան է
ձեզ ըստ ամենայնի հանգուցանել։
Գրեցի ձեզ զայդ յառաջ քան զինն
կաղանդացն Ահեկանի ամսոյ։ Ո՛ղջ

լերուք մինչև 'ի վախճան 'ի համբերութիւն Յիսուսի Քրիստոսի. Ամէն։

Պնդակազմեալ այնու օրինակաւ որպէս և կամէր զեղբարն որ 'ի Հռոմ'ի ձեռն Թղթոյն, թէպէտ և ոչ կամէին, մտանէր այնուհետև 'ի նաւ 'ի Զմիռնէ և յառաջակայ ուղին խաղայր, մանաւանդ զի շտապէին և զինուորքն զքրիստոսազգեացն ժամանել խաղուն 'ի մեծ քաղաքն Հռոմ, զի վայրենի գազանացն կերակուր եղեալ՝ արդարութեան պսակացն 'ի ձեռն այսպիսի ճգնութեանցն արժանացի։ Եւ հասեալ 'ի Տրովդա, և ելեալ 'ի Նոր քաղաք, և անտի 'ի փիլիպեցւոց քաղաքն և ընդ ամենայն մակեդոնացւոց քաղաքն անցանէր հետևակ ընդ ցամաք, մինչև անցանել նորա և 'ի հասանել նմա յԵպիդոմնոս քաղաք առ ծովեզերօքն, և անդ գտեալ նաւ մի, նաւէր ընդ Ադրիական համատարածն, հասանէր 'ի Տիւրականն, անցանէր և ընդ կղզիս բազումս. և իբրև երևէր Պա-

տիուղոս, նա կամէր ելանել և ընդ
շաւիղսն գնալ Պաւղոսի, այլ անկեալ
զնոքօք բռնութիւն ուժգին հողմոյ,
ոչ տայր թոյլ նաւին յառաջիկայն
խաղալ. այլ անդրէն ընդ կրուակն բե-
ռէր։ Եւ նորա երանեալ զսէր եղ-
բարցն որ 'ի տեղեան յայնոսիկ էին,
այնպէս անցանէր առ նոքօք։ Եւ ա-
պա գիպեալ զօրն ողջոյն և զգիշերն
ամենայն աջողակ հողմոյ, զառաջի
եդեալ ճանապարհն վճարէին մեզ
ակամայ. վասն զի մորմոքեալք էաք
զանչատումն սրբոյն 'ի մէնջ, այլ նո-
րա աղօթքն յանդ ելանէին, վասն զի
փուրթայր վաղվաղակի հրաժարել
յաշխարհէս, զի ժամանեսցէ առ
տէրն զոր սիրէրն։ Եւ հասեալ այ-
նուհետև 'ի հանգիստն հռոմայեցւոց
յորժամ խաղն մօտ էր 'ի վախճա-
նել, զինուորքն տատամսէին վասն
յամելոյն, և շտապ հասուցանէին 'ի
վերայ սրբոյն։ Իսկ սուրբն յօժարու-
թեամբ լսէր տագնապողացն, և յա-
ղուցեալ անտի ընդ առաւօտն 'ի
տեղւոջէն որ կոչէր Պրոտոս, պա-
տահեալք եղբարց, քանզի լուեալ

էր համբաւ սրբոյն և գային ընդ առաջ մեծաւ երկիւղիւ և ուրախութեամբ ուրախ էին, զի արժանի լինէին տեսանել զքրիստոսազգեացն: Եւ երկնչէին զի 'ի մահ եկեալ էր այնպիսի այր, և նա պատուիրէր 'ի խաղաղութեան կալ ամենեցուն, այլ նոքա յոյժ եռային ջերմութեամբ վասն նորա, և կամէին դարձուցանել զամբոխն, զի մի խնդրեսցեն կորուսանել զսուրբն: Իսկ նորա գիտացեալ հոգւով զխորհուրդս նոցա, ամենեցուն ողջոյն տուեալ և խնդրէր 'ի նոցանէ զՀշմարիտ սէրն, և առաւելագոյն ևս քան զԹզԹոցն բանս խօսէր ընդ նոսա՝ և հաւանեցուցեալ թէ չէ նախանձել փութացելոց առ Տէր. այնպէս ապա ծունր եդեալ հանդերձ եղբարբք ամենեքումբք աղաչէր զորդին Աստուծոյ վասն եկեղեցեացն, և վասն դադարման հալածանացն, և վասն սիրոյ եղբարց որ առ միմեանս: Փութայր այնուհետև մտանել 'ի տեսարանն, և եկեալ 'ի մէջ ամբոխին ասէր այսպէս. Արք հռոմայեցիք,

տեսողք հանդիսիս այսորիկ, ոչ չար գործոց աղագաւ, և ոչ վասն մեղաս սուս իրիք զայս կիրս կրեմ, այլ վասն բարեպաշտութեան, քանզի ցորեան եմ Աստուծոյ, և ժանեօք գազանացն մանրիմ, զի եղէց հաց սուրբ։ Եւ զայս նորա ասացեալ այսպէս, գազանացն վայրենեաց արկանէին զնա անաստուած դահիճքն. և ընթացեալ երկու առիւծք հերձուին զնա, և ծախեցին զսուրբ մարմին նորա. և ընդոյր ցանկութիւն նորա ըստ աստուածեղէն գրոյն որ ասէ, եթէ ցանկութիւն արդարոց ընդունելի է. քանզի կամէր եթէ ծախեսցի 'ի գազանաց, և ծանր լեցի եղբարց ամփոփումն ոսկերաց նորա. որպէս յառաջագոյն գրեաց 'ի թղթին յայտնի արարեալ զցանկութիւն իւր, նոյնպէս և կատարեաց Աստուած. քանզի ծախեալ գազանացն զամենայն մարմին սրբոյն, սակաւ ինչ 'ի մեծ ոսկերացն թողին. զոր յետ այնորիկ տարան յԱնտիոք քաղաք, գանձ անհամեմատ 'ի վկայութիւն հնորհաց սրբոյ եկեղեցւոյ մնացեալ։

Բայց 'ի ժամուն ժողովելոյ եղբարց
սրբոց որ 'ի Հռոմ էին, որոց և գրեաց
իսկ Երանելին, զի մի խափանիչք
լինիցին նորա բարի առաջարկու-
թեանն, բարձին զնշխարս սրբոյն,
եդին առանձինն 'ի տեղւոջ միում,
յորում պատահէր ժողովելոց 'ի
միասին օրհնել զԱստուած և զՈր-
դին միածին և զսուրբ Հոգին, 'ի
վախճանի եպիսկոպոսին սրբոյ և
վկայի։ քանզի յիշատակ արդարոցն
գովութեամբ է, առակախօսն ա-
սաց։ և մինչդեռ մեք զցայգն մեծաւ
արտասուօք հսկէաք, և ստէպ ստէպ
ծունր եդեալ աղաչէաք զՏէր խընդ-
դրուածովք, զի մխիթարեսցէ զտկա-
ւութիւնս մեր, սակաւիկ մի նիրհե-
ցաք։ և ահա ոմանք տեսանէին զե-
րանելին զի փարէրն զմեօք ամենե-
քումբք։ և ոմանք դարձեալ տեսա-
նէին զի ընդ մեզ յաղօթս կայր, և
այլք տեսանէին զի կայր առաջի
Տեառն, և զքիրտնն ջնջէր իբրև 'ի
մեծէ աշխատութենէ եկեալ և նմա
յանդիման լինել։ Եւ զայն տեսեալ
մեծաւ ուրախութեամբ ընուին ա-

մենեքեան, իմացեալ զբարի և զչարմանալի յայտնութիւնն, և երանէին զամենագով սուրբն։

Գործեցաւ իրս այս յառաջ քան զինն կաղանդացն Յունուվարի։ Գիտէ զնորա վկայութիւնն Երանիոս եպիսկոպոս Ղունգդոն քաղաքի. այլ և զԹուղթ նորա յիշէ այսպէս. Ասաց ոմն 'ի մերոց որ վան վկայութեանն Աստուծոյ դատապարտեցաւ գազանաց՝ թէ ցորեան եմ Աստուծոյ և ատամամբք գազանաց աղամ, զի հաց սուրբ գտայց. և Պողիկարպոս եպիսկոպոս զմիւնացւոց քաղաքին յիշէ զայսոսիկ 'ի թղթին, զոր փիլիպեցւոցն գրեաց։ Եւ աղաչեմ զձեզ զամենեսեան հաւանել և ճգնել, և ատանալ զհամբերութիւն զոր տեսէք աչօք ձերովք, ոչ միայն յերանելւոյն Իգնատիոսէ, այլ և յայլս ամենեսեան սուրբս որ եղեն 'ի ձեզ, զմտաւ ածեալ թէ ոչ ընդ վայր ինչ ընթացան, և կամ 'ի զուր վաստակեցին, այլ հաւատովք և արդարութեամբ վարեցան, զի հասցեն խոստացելոց բարութեանցն,

զոր պատրաստեաց նոցա փրկիչն Յիսուս, որում չարչարակից եղեն. քանզի ոչ զայժմու ժամանակի յաւիտեանս, այլ զՔրիստոս սիրեցին, որ վասն նոցա մեռաւ և յարեաւ: Առաքեցաք առ ձեզ և զԹուղթն զոր գրեալ ևս էր երանելւոյն առ մեզ Իգնատեայ, որպէս և պատուիրեաց մեզ, զոր և ընթերցեալ ձեր գիտեմ զի յոյժ օգտեսջիք: — Այն ինչ որ վասն սրբոյն Իգնատեայ և վկայութեան նորա մինչև ցայս վայր. յաջորդէ զեպիսկոպոսութիւնն նորա Անտիոքու յետ նորա Հերոնէն. և յիշատակ նորա՝ աստուածասիրի և առաքինւոյ նահատակին Իգնատիոսի՝'ի Հրոմէից ամսոյ որ օր մուտն է. յայտ արարաք և ձեզ զօրն, զի 'ի ժամանակի վկայութեանն ժողովեալ հաղորդեսցուք սիրոյ և առաքինւոյ նահատակին և վկային, որ կոխեաց զխայթոցս սատանայի և կատարեաց զՔրիստոսասէր և զյանկալի ընթացս իւր Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով, որում փառք հանդերձ Հարբ և Հոգւովն սրբով յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 Թուրի Պղտոպոնի։
2 Միւս օր. պապքերապմասէր կամ խոռ վանկամ։
3 Միւս օր. ամենաբոյժ։
4 Միւս օր. դիւագայլ։
5 Միւս օր. ընդվայրապար։

ՑՈՒՑԱԿ

Պատմութիւն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին . 5
Վարք սրբոյն Իլարիոնի . . 69
Վարք սրբոյն Իգնատիոսի Անտիոքայ հայրապետին. . . 141

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144